

14.468.

Gymnophorus

Very frequent in Greek  
Syphnos especially

h 23 n - e

8 "

32  
4-66

34968

W

32

4-66

1 DEC 2009

26 SEP 2006

ՄԱՏԵՆԱՇ ԱՐ «ԴՐՈՇ ԱԿ» թիւ 66



ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԲԻ

ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԵԿ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԿՐԵՑ

Գ. ԳԻՒՉԱԼԵԱՆ.

Հրատարակութիւն

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

1927

Փարիզ

Կ 927

1927

20.03.2013

14466

1

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, իր  
բազմամեայ գործունէութեան ընթացքում, ձգտել  
է իր ազդեցութեան ըրջանակի մէջ առնել բովան-  
դակ հայութիւնը, իր կնիքը դնել նրա հասարա-  
կական-քաղաքական զարգացման վրա, ուստի և  
նրա պատմութիւնը ոչ թէ նեղ, կուսակցական  
պատմութիւն է, այլ պատմութիւնն է բովանդակ  
հայութեան: Եւ այն բոլոր արժէքները, որ ստեղծել  
է հաւաքական հայութիւնը, այն մշակութային  
նւաճումները, որ արել է նա վերջին երեք  
տասնամեակի ընթացքում, խտացած է Հ. Յ.  
Դաշնակցութեան մէջ և արել է նրա ջանքերի  
շնորհիւ:

Փորձեցէ՛ք հայոց պատմութիւնից դուրս ձգել  
Հ. Յ. Դաշնակցութեան գործը — այդ պատմու-  
թիւնը կը դառնայ անիմաստ, բովանդակութիւնից  
դուրս և արժանի էլ չի լինի պատմութիւն անունը



2575-2002

կրելու : Փորձեցէ՛ք մտքի մի թափով հայ հաւաքան մարմնից դուրս հանել ներկործօն ուժի այն մեծ չափը, որ մացրել է նրա մէջ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ կրթելով նրան դրաւոր ու բանաւոր քարողչութեան, դէնքի ու ապատմբութեան, աղգային գաղափարի խորացման միջոցով, և հայութիւնը կտեսնէք այնպէս՝ ինչպէս նկարագրում է Խ. Աբովեանը 19-րդ դարի 40-կան թւականներին։ Է՛լ աւելին. վորձեցէ՛ք ջնջել Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնը կամ անջատել այն հայութեան աղգային մարմնից, մեր վերածնութիւնը, որ այնքան փայլուն ձեռվ կատարել է 19-րդ դարում, կը մնայ կիսատ, չլրացած։ Նրա լաւադոյն դլուխը գրած չի լինի. նրա դարդացումը կատարելութիւն չի ստանայ։ Հ. Յ. Դաշնակցութիւնը ոչ միայն մեր վերջին տասնամեակների պատմութիւնն է իմաստաւորում, այլ և հանդիսանում է համադրութիւնը Հայոց ընկերային-քաղաքական մտքի դարդացման, որ սկսել է Աբովեանով և վերջացել է Միացեալ ու Անկախ Հայաստանով։

Որպէսզի պարզ լինի Հ. Յ. Դաշնակցութեան դորձն ու էութիւնը, նրանից բլխող հեռանկարները, դալիք-անելիքը, մենք անհրաժեշտաբար պէտք է որոնենք այն հիմքերը, որոնք Հ. Յ. Դաշնակցութիւնը դարձնում են մեր հասարակական կեանքում անհրաժեշտ, որևէ ուժով չփոխարինուղ աղղակ։ Հայ քաղաքական մեծագոյն կուսակցութեան հակառակորդները մարդարէանում են նրա վախճանը՝ միաժամանակ, սակայն, ահեղօրէն սարսում են «մահացողի» ուրաւականից։ Սակայն

Հ. Յ. Դաշնակցութիւնը այսօր ևս, ուժերի հաւաքման այս պահուն, նոյնքան ուժեղ է, որքան երէկ, երբ հայ հայրենիքի ու ժողովրդի բախտն էր անօրինում։

ԱՌԴ, ո՞րտեղ պէտք է որոնել նրա կենսունակութեան գաղտնիքը, ուրիշ խօսքով, որոնք են այն հիմնական սկզբունքները, որոնց համար նա տասնեակ տարիներ պայքարել ու զոհաբերել է իր ամենաթանգագին զաւակները։

Ամենից առաջ այդ պէտք է որոնել մեր կեանքում։ Հ. Յ. Դաշնակցութիւնը անմիջական շարունակութիւնն է 19-րդ դարում հայութեան կեանքի մէջ տեղի ունեցած մշակութային-հոգևոր վերածնուրեան։ Որպէս այդպիսին, նրա առաջադրած ընկերային-քաղաքական ծրագիրն էլ պատմականորէն կապւում է մեր վերածնիչների խօսքի ու դործի հետ և նրա սկզբունքները հիմնաւորուում են մեր պատմութեան մշակած դաղափարների վրա։ Ի հարկէ, ժամանակի ոգուն համապատասխան՝ նա չունել է, լրացել և այս ձեռվ, ինչպէս ասացինք, համազրել է իր մէջ մեր նախորդ սերունդների հոգեսոր աշխատանքը, որով և դարձել է մեր վերածնութեան մեծ շղթայի վերջին օղակը, գաղափարական համադրութիւնը։

Այս՝ Հ. Յ. Դաշնակցութեան կենսունակութեան և դործի առաջին՝ ազգային ալիքիրն է։

Կայ և երկրորդը. Հ. Յ. Դաշնակցութիւնը լինելով արդիւնքը հայոց հասարակական կեանքի գարդացման՝ միաժամանակ իր մէջ խտացրել է ժամանակակից առաջաւոր մարդկութեան հաս-

բաղական ու քաղաքական ձգտումները։ Եւրոպական ազգերի նոր դարերի պատմութիւնը աստիճանական ազատագրումն է անհատի, ազգութեան և դասակարգի։ Վերածնութիւնը, ուժորմացիան, 18-րդ դարի փիլիսոփայութիւնը, Փրանսական յեղափոխութիւնը, 19-րդ դարի ընկերային ու քաղաքական վերիվայրումները իրական ու դաշտավարական հիմքեր են ստեղծում աշխատաւոր մարդկութեան ու ազգութիւնների լիակատար ազտութեան համար։ Եւ արդի առաջաւոր միտքը նախորդ դարերի պատմական փորձը համազրել է որպէս քաղաքական ռամկավարութիւն, ազգերի ազատութիւն՝ անկախ պետականութեան շրջանակում, ընկերային արդարութիւն։ Նրանք խտանում են ռամկավարութեան և ընկերվարութեան ըսկդրունքների մէջ, որոնք և կազմում են աշխատաւոր մարդկութեան նպատակը։

Յենելով աշխատաւորութեան ընկերային-փիլիսոփայութեան աշխարհահայեցողութեան վրա՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր գործը հիմնաւորում է թէ՛ ազգային ներքին ուժերի բնաշրջումով, թէ՛ համաշխարհային պատմութեան թելադրած ըսկդրունքներով։

Այս գրքում մենք խօսելու ենք միայն նրա ազգային հիմքերի մասին։

## II

### ՈՐԻՍԱՀԱՅ ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հայութեան հոգեոր վերածնութիւնը 19-րդ դարի գործ է։ Մի դարի ընթացքում մեր հաստարական մարմնի մէջ տեղի է ունենում հակայական փոփոխութիւն։ Զեափոխուում է նրա ընկերային կառուցւածքը, յեղաշրջում՝ ազգային-քաղաքական գաղափարը, հայութիւնը հոգեպէս փոխուում է։ 19-րդ դարի սկզբին նա մի կրաւորական անկերպարան ու անդէմ գանդւած էր՝ տարւածմեսիանլումի ակնկալութեամբ, դարավերջին՝ նա դիտակցւած ազգայնութեան ուղին բռնած հաւաքականութիւն է՝ որոշ իր գաղափարներով և գործելակերպով։ 19-րդ դարի սկզբում նա դեռևս ամբողջովին ենթակայ էր մահմետական պետութեանց։ Այստեղ նա ճանաչւած էր որպէս օտարագաւան մի համայնք։ Հաւաքական հայութիւնը, որպէս ուրոյն մշակոյթի միաւոր, գոյութիւն չունէր։ Միակ կենտրոնաձիգ, հաւաքող ուժը լուսաւորչական եկեղեցին էր և նրա տեսանելի

պետ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը: «Ազգային  
ինքնաճանաչութեան մասին չէր կարող խօսք լինել.  
ազդը համարեա չկար. նա յօշոտել էր, անդամա-  
հատել. կային մի շարք հիմնական տարրեր, կար  
ընդհանուր հողը և ընդհանուր արիւնակցական  
ծառումը. կար տանջանքի ընդհանրութիւնը բոնու-  
թեան բէժիմի տակ, կար աւանդութիւնների,  
առասպելների համեստ շտեմարանը... կար, վեր-  
ջապէս, եկեղեցին, որ իր տղէտ ու ողբալի կղերով  
հանդերձ դդալիօրէն նսկաստել էր ցեղի պահպա-  
նութեան իր ձեռքը առնելով նրա ճակատագրի  
ղեկը՝ քաղաքական անկախութիւնը կորցնելուց  
յետոյ: Զկար այդ բոլոր միացնող, ամբողջացնող  
ստեղծագործութիւնն ու ազգակը, չկար ազգային  
գրականութիւնն ու լեզուն, նոր լեզուն ու պատ-  
մութիւնը» (Մ. Վարանդեան):

Նախորդ դարի սկզբին հայութիւնը չունէր  
ազգութեան մեծագոյն գործօնը՝ ընդհանուրին  
հասկանալի ու գրական լեզու: Աւելի ճիշտ,  
դոյլութիւն չունէր հայկական հաւաքականութիւն,  
որովհետեւ չկար որևէ ողեռիչ դաղափար, յուղող  
ոյժ, որը նախ մատչելի լինէր նրան, երկրորդ՝  
շահագրդուէր. կրօնական տեսակէտից նրա համար  
աւելի արժէքաւոր էր տեղական սուրբն ու քահա-  
նան, քան հեռաւոր իջմիածինը: Միայն քսանական  
թւականների վախճանին հայութիւնը հաւաքւեց մի  
ընդհանուր գործի շուրջը՝ միացաւ ոռւսական  
դէնքին՝ Պարսկաստանից և Թիւրքիայից գրաւելու  
իր պատմական հայրենիքը, սակայն, այստեղ էլ  
նա անպատրաստ գտնեց: Հայկական հաւաքակա-

նութիւն ստեղծելուն չէր նպաստում և տնտեսական  
գարզացումը. հայ գիւղացին ապրում էր բնատնտե-  
սութեան ըրջանը, որը ոչ մի գրաւական չունի աղ-  
գային մեծ միութիւններ առաջացնելու: Գաւառա-  
բարբառները իշխում էին ամենուրեք, որ ցայտուն  
նշանացոյց է զանգվածների յետամնացութեան և  
մեկուսացած, ինքնամփոփի կեանքով ապրելուն:

Հայութիւնը ներկայացնող ուժերը հոգեռակա-  
նութիւնն էր ու ազնւականութիւնը: Սակայն, իր  
մտաւոր պաշարով, բարոյական բարձրութեամբ,  
հայ հոգեռականը շատ քիչ էր տարբերում իր  
խակ հօտից: Հօտ և հովիւ իրար գտել էին: Մ.  
Վագեները՝ մի առարկայօրէն դիտող ճանապար-  
հորդ, որ 40-ական թւականներին ճամբարդել է  
Հայաստանում, այսպէս է բնորոշում հայ հոգեռ-  
ականութիւնը. «Գետնաքարչ, ստրուկ ու մուրա-  
ցիկ երոպական կարեռը ճամբարդների հանդէպ՝  
հայ արեղանները ամբարտաւան են, բռնակալ,  
քարասիրտ ու ժլատ՝ իրենց հօտի, մասնաւորապէս,  
չքաւոր հաւատակիցների նկատմամբ: Արտաքուստ՝  
սիրով ընդունում են նրանք առաքինի ու ժուժկալ  
կերպարանք, մինչ ծածուկ մոլի ու արատաւոր  
կեանք են վարում: Այսպէս են հաւատացնում  
մեղ հայ կղերի հետ երկար ապրող մարդեկ:  
Նախանձը տիրում է վանականների աշխարհում,  
բարեկամութեան, քրիստոնէական այլասիրութեան  
մասին հեռաւոր դաղափար անդամ չունեն»:

Արովեանը նոյնպէս տալիս է գունեղ, բայց  
անհախանձելի պատկերը հայ հոգեռականու-  
թեան: Նոյն կարծիքն է յայտնում նաև 80-ական

թւականներին յայտնի հրապարակադիր Ս. Սպան-  
դարեանը, որ բնաւ տրամադիր չէր մերժելու հայ-  
եկեղեցու ու Հոգևորականութեան արժէքը. ընդ-  
հակառակն իր գրիչն նւիրել էր նրա պահպանման  
և աղնւացման: — «Հոգևորականութիւնը — ասում  
է նա, — հեռու մեր նախահարց հիմնած առաքե-  
լական սուրբ եկեղեցու սկզբունքներից, օտար ու  
թափուր ամէն բարձր, վսէմ մտքերից, նպատակ-  
ներից՝ ծառայում է միայն իր նիւթական շահե-  
րին և իր բարքով ու վարքով դայթակղեցնում  
ժողովրդին: Հոգևորականութեան համար եկեղե-  
ցին փոխանակ նպատակ լինելու, միջոց է իր ծակ  
աչքը կըտացնելու»:

Հոգևորականութեան պատկերը նոյնն է մնացել  
60-70 տարւայ ընթացքում. նրա տիսղը նոյնատե-  
սակ են տալիս և Աբովյանը, և' Վագները և Ս.  
Սպանդարեանը: Եւ շատ բնական է, որ այս  
Հոգևորականութիւնը չէր կարող դարձացնել իր  
մէջ հայութեան մշակութային ու քաղաքական  
վերածնութեան գաղափարը: Նա հասունացած չէր,  
աւելի ճիշտ, ուշացած էր մի այդպիսի գործի  
համար: Օտարի՝ մահմեդական իշխողի լուծը՝  
նրան էլ իջեցը էր իր հօտի մտաւոր ու քաղա-  
քական դարձացման աստիճանին: Այդ Հոգևորա-  
կանութեան լաւագոյն անդամներն էլ աղօտ գաղա-  
փար ունէին հայութեան անելիքների մասին և  
իրականի մէջ անկարող հանդիսացան մշակելու  
յարմար ու պատշաճ գործելակերպ: Ներսէս  
Աշտարակեցին՝ նախորդ դարի հայութեան մեծ  
գէմքերից մէկը՝ ցանկացաւ հայի գործը կատարել,

դործիք դարձաւ ոռւսական քաղաքականութեան,  
իսկ երբ ոռւսական արշաւանքի մէջ փորձում էր  
գնել աղօտ հայկական քաղաքական իդէալ,  
պատւառը ձեռվ աքսորւում էր «Հայոց աշխար-  
հից» հեռաւոր Բեսարաբիա: Հոգևորականութեան  
բնորոշող տիպը, իշողը Յովկանմէս Կարբեցին  
էր՝ զուրկ աղգային շահերի լայն ըմբռնումից,  
թոյլ՝ ոռւսական ուժի հանդէպ և համակերպւող:

Հայութիւնը ներկայացնող երկրորդ ոյժը հայ  
ազնւականութիւնն էր՝ երբեմնի հզօր տիրողի թոյլ  
մնացորդը: Մեր պատմութեան նոր դարերում՝ հայ  
ազնւականութիւնը քանակօրէն փոքրացած ու որա-  
կով թոյլ մեծութիւն էր: Նրա անկումն սկսում է  
գեռևս արաբական շրջանից, երբ հետևողականօրէն  
գլխատեց հայ ուազմիկ և վարիչ ոյժը: 11-17-րդ  
դարերում՝ հայ նախարարութեան ամենամեծ  
վտանգ սպառնացողները եղել են թուրանական  
ցեղերը, որոնք քանդել, ոչնչացրել են ազնւական  
տները, ցրիւ տւել նրանց, քշել երկրից գուրս,  
թափառական դարձրել: Նրանք սատիճանաբար  
դրաւել են մեր հայրենիքը ու աղգաղրական նոր  
տարր տւելացնելով՝ աղճատել Հայաստանի միա-  
տարր ամբողջութիւնը:

Հայ ազնւականութեան կենսունակ ու ներգոր-  
ծօն տարրը հայրենի բնավայրից դուրս հիմնեց  
Կիլիկիան իշխանութիւնը, որը միասնամակ  
հաւաքողը գարձաւ հայ ցրիւ եկած ժողովրդին և  
պահպանողը նրա աղգային ամբողջականութեան և  
ինքնութեան:

Մի մասը և շատ մեծ մասը անցաւ Բիւզանդիա

և իր ուազմագիտական հանձարը, պետական կարողութիւնը ի սպաս բերեց այդ կայսրութեան, անգամ կայսերական հարստութիւն ստեղծեց և երկար ժամանակով յետաձեց բիւզանդական կայսրութեան անխուսափելի անկումը։ Նոր դարը հայ ազնւական դասի աստիճանական ապազգայնացումն է և անկումը։ Միայն մեր լեռնաշխարհի մի քանի անառիկ վայրերում հայ նախարարութեան խղճուկ մնացորդները պահեցին իրենց կիսանկախ գոյութիւնը, սակայն նրանք էլ ենթակայէին երկրի օտար իշխողներին, հարկատու և պատասխանատու իրենց հօտի համար։ Իրենց զարդացման աստիճանով, մտաւոր պահանջներով և քաղաքական ըմբռնումներով նրանք բարձր չէին կանոնած հպատակ գիւղացիներից։ Նա նոյն գիւղացին էր, միայն ազնւական ծագումով։ Նա կազմակերպւած մի դաս չէր և ժամանակի քաղաքական հարցերում երևան չէր դալիս մշակւած ու հաստատուն հայեացքներով։ ուստի և օտարի ոռւսի հետ բանակցելիս՝ նա լոկ մուրացող էր, օտարի քրիստոնէական գթասրտութիւնը հայող։ Ուուսական տիրապետութիւնը ստեղծեց նրա համար միայն մասնաւոր արտօնութիւններ, սակայն միաժամանակ լայնօրէն բաց արաւ գուռը հայկական մշակութային մարմնից անջատւելու։ Աստիճանաբար կտրւեց հայ գիւղացու ու հայ ազնւականի նահապետական յարաբերութիւնը։ Ուուսահայ աղնւականութիւնը 19-րդ դարի առաջին կիսում ցրւած էր Ուուսաստանում, Վրաստանում և մասմբ Հայաստանում։ Նա ազդում էր հայ եկեղե-

ցական գործերի վրա, պահում իր ձեռքին հայ հոգևորականութեան, կաշառում, կուսակցութիւններ ստեղծում նրա մէջ, կովկասեան կառավարչապետների հետ մտերմութիւն ստեղծում և նրանց օժանդակութեամբ ներգործում հայ եկեղեցու գործերի վրա։ Ներսէս Աշտարակեցին ուժեղ պայքար մղեց այդ զբութեան դէմ՝ յանուն եկեղեցու և եղած դպրոցների վարչական անկախութեան։

Հայ վոքրաթիւ ազնւականութիւնը այսպիսի դեր կարող էր խաղալ, որովհետև բարդ չէր հայութեան ընկերային կառուցածքը։ Հայ առևտրական բուրժուազիան դեռ նոր էր կաղապարում և մրցութեան հրաւէր չէր կարգում ազնւականութեան։ Գիւղացիութիւնը, որպէս գիտակցւածմի դաս, գոյութիւն չունէր և երկար ժամանակ էլ չէր լինելու. նա ինամակալի կարիք ունէր, և այդ խնամակալը հայ ազնւականութիւնն ու հոգևորականութիւնն էր։ Կար և մի այլ պատճառ։ Ուուսական բիւրուլրատիան նորանւած ազգերի մէջ ոլիսի որոնէր տարրեր, որոնց վրա յենւելով՝ կարողանար այդ ազգերին կապել իր պետականութեան հետ։ Այս նեցուկը մեր կեանքում կարող էին լինել հայ եկեղեցին ու հոգևորականութիւնը և հայ ազնւականութիւնը։ Առաջինին նա չնորհեց ազգային-եկեղեցական ինքնավարութիւնն և իրաւատէր դարձրեց իր հօտի հոգե-մտաւոր գործերում, երկրորդի առաջ բաց արաւ ուստական զինուրական դպրոցների, պաշտօնների և դասային արտօնութիւնների դռները։ Եւ հայ ազնւականու-

թիւնը ամուլ կառչեց ոռւսական պետականութեան, մտաւորապէս բարձրացաւ, բայց դադարեց հայկական քաղաքական խդչալ սնուցանելուց, ինչպէս անում էին իր նախորդները 17-18-րդ դարերում։ Այս ձեռով նոր իշխողը՝ հայ ազնւականութեան կարողութեան ասպարեզ տալով՝ ձուլեց, մակարդեց նրան իր մէջ, կտրեց հայրենի միջավայրից և ստեղծեց ոռւսական գործի ջատագովներ։ Թէ մշակոյրով և քէ քաղաքականապէս հայ ազնւականը դարձաւ ոռւս և հայութիւնը ճանաչում էր միայն տօն օրերին՝ հայոց լուսաւորչական եկեղեցիներում կամ կաթողիկոսական ամպհովանին բռնելիս։

Հայրենի միջավայրը դուրկ էր քաղաքական կազմակերպութիւնից, այլապէս՝ հայ ազնւականութիւնը կը մնար հայոց պետականութեան մէջ և կը դառնար հայ ուազմական ոյժը։ Սակայն, հայը դուրկ էր այդ «քաղաքական անօթից», որի պատճառով էլ ոչնչացաւ մեր ազնւականութիւնը։ Դրանով մի բաց էր մնում հայ հասարակական կեանքում և այդ բացը յետադայում երկար ժամանակ չծածկւեց, մինչեւ 900-ական թւականները, երբ ժողովուրդը ինքը արդէն փորձեց դառնալ զինւած բանակ՝ զարդացնելով իր մէջ և ուազմի ողին, և ազատութեան տենչը։ Այս պահուն հայ ազնւականութիւնը արդէն նրա հետ չէր. նա վաղուց իսրաֆացել էր հայութիւնից և հայկական գործերից։

Նախորդ դարի 20-ական թւականների վերջերին Հայաստանի մի զգալի մասը ընկնում է Ոռու-

սաստանի իշխանութեան տակ։ Հայոց պատմութեան պարսկական տիրապետութեան շրջանը վերջանում է։ Ստեղծւում են հայութեան համար նոր պայմաններ՝ մի քիչ աւելի տանելի, քան նախորդն էր։ Հայկական գաւառները շուտով լցւում են հայերով՝ Պարսկաստանից և Թիւրքիայից դադթած։ Ստեղծւում է «Հայկական աշխարհ»։ աղգաղրական ու հողային տեսակէտից հիմք է զրուում ապագայ քաղաքական Հայաստանի։ Նոր իշխողը հիմնովին չփոխեց հայի ընկերային կացութիւնը, շատ բան պահեց նոյնը, անդամ աւելի խստացրեց։ Անդրկովկասեան դասային յարաբերութիւնները ըմբռնեց ոռւսական ներքին նահանգներում գոյութիւն ունեցող ճորտատիրութեան ձեռվ, որի հետեւանքով Անդրկովկասեան գիւղացիութիւնը, նրա մէջ և հայը, դարձաւ նոր ստեղծւած կալւածատիրոջ կատարեալ ճորտը։ Ոռու իշխանութիւնը կաղապարեց Ռուսահայաստանում դասային մի զրութիւն, որ մինչ այդ գոյութիւն չունէր. հայ գիւղացիութեան մեծ մասը ենթարկւեց օտար՝ թիւրք իշխողին և հարստահարւեց կրկնապատիկ՝ թէ որպէս հայ, թէ որպէս աշխատող։ Ռուսաստանը չստեղծեց նոյնիրաւութիւն։ Հայութիւնը, որ աղգովին առաջամարտիկն էր եղել նրա Անդրկովկաս և Հայաստան արշաւելուն, չստացաւ ոչ բարոյական, ոչ քաղաքական հասուցում։ Ցարական ինքնակալութիւնը նոր գրաւած երկրներում ուժեղանալու համար՝ յենեց ազնւական դասի վրա, նրան չնորհեց արտօնութիւններ, կապեց իր պետականութեան հետ և

զոհաբերեց նրան ժողովրդական հոծ զանգւածների՝ շահերը։ Այդպէս էին թելադրում նրան իր՝ ռուսական կեանքում գոյութիւն ունեցող ընկերային յարաբերութիւնները։

Սակայն, այսուհանդերձ ռուսական տիրապետութիւնը մի բարիք էր հայութեան համար։ նա ազատում էր պարակական բժացնող իշխանութիւնից, ստանում էր կեանքի Փիղիքական գոյութեան երաշխիք. ձեռք էր բերում անձի և գոյքի ապահովութիւն, ասպարէզ էր ստանում նրա բնական առեւտրական – շինարարական հանճարը։ Նոր իրաւակարգը հոգում էր հաղորդակցութեան կանոնաւրման մասին, հովանաւորում էր արդիւնաբերութիւնը, վաճառականութիւնն ու արհեստը. իշխանութեան ձեռքը աւելի ուժեղ էր գդացում, քան Պարսկաստանում։ Այդ պատճառով ռուսական տիրապետութիւնը սկզբներում համարեց մեծ բարիք։ Հայութիւնը ազդովին հակեց Ռուսաստանի կողմը։ Ռուսական այդ օրիենտացիայի աղդային բնոյթը շատ լաւ ներկայացնում է Արովեանը «Վէրք Հայաստանի»-ի մէջ։ Պասկեիչը նրա ասելով «անմահ յիշատակ է թողել», ռուսը «խաչալաշտ է ու հայասէր», «մարդասիրութեամբ լիքը»։ ռուսական կայսրը « աստւածառաք է, փրկիչ»։ «Քանի Հայաստանը իր փառքը կորցրել էր, էս օրը, էս ուրախութիւնը չէր տեսել», ասում է նա Երևանի բերդի դրաւման մասին։ Իսկ ներսէս Աշտարակեցին իր շրջարերականների մէջ ողեկոչում էր հայութեան և փառաբանում ռուսական յառաջսաղացութիւնը։ « Յայտնի է ձեղ նաև

Ռուսիոյ օգոստափառ պետութեան նպատակը։ Նա իր հզօր բազուկը տարածեց մեր հայրենեաց վրա ոչ այնքան իր սեփական օգտի համար, որքան մեր անդորրութեան և բարօրութեան համար»։ «Հասաւ ժամը — նա 1827 թ. — երբ աչքով պիտի տեսնենք Արարատեան Աշխարհի և Հայոց Աշխարհի փրկութիւնը։ Հասաւ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգի իր վաղեմի անկախութիւնը. ոտքի կանգնեցէք, հայոց քաջեր, թօթափեցէք պարսից լուծը, ուրախացրէք ալեղարդ Մասսին, մի անգամ արիւնով ներկեցէք հայրենի հողը և ապա ապրեցէք աղատ»։ Իսկ Մանուչարեան եպիսկոպոսը հայկական կամաւորական խմբեր էր կազմում՝ ժողովրդի բոլոր խաւերից և օժանդակում ռուսական բանակին, ջարդում ապստամբ թուրքերին և գործակցում հայազգի գօրավար Մագաթովին։ «Հայի արածը — ասում է Արովեանը, թէ մարդ չիմանայ, քարերը վկայութիւն կտան։ Հալբաթ որ մէկ արդար ու անաշառ մարդ Վրաստանու պատմութիւնը կը գրի, էն ժամանակը կերևի, թէ հայք ինչ արին, ինչ հաւատարմութիւն են ցոյց տւել աէրութեանը, ինչ արիւն են վեր ածել...»։

Այսպիսով, նախորդ դարի 20-30 թւականներին հայութիւնը երևան եանեց մի ամբողջական կամք՝ գործակցելով ռուսական ուժին և ցուցահանդունով խիստ ցայտուն ռուսական դիմաշրջումն։

Ռուսական տիրապետութիւնը ջանաց ձևակերպել նաև հայութեան իրաւական կացութիւնը։ Նա ռուսական քաղաքացի էր դառնում, եթէ «քաղա-

քացի» բառը կարելի է գործ ածել այստեղ, սակայն նա օտարադաւան էր՝ պէտք էր կարգաւորել նրա կրօնական-հոգենոր գործերը։ Ռուսական թիւրովրատիան հայութիւնը ըմբռնեց որպէս կրօնական մի համայնք՝ կազմակերպւած հայ եկեղեցու միջոցով և նրան իրաւատէր դարձրեց 1836թ. «Պոլոժենիայի» օրէնքով։ Հայութիւնը՝ ի դէմո հայ եկեղեցու ստանում էր եկեղեցական — կրթական ինքնավարութիւն, կաղմակերպւում էր մասսամբ որպէս մշակութային միաւոր։ Նա իրաւունք էր ստանում դպրոցներ բանալու, նիւթականը ապահովւող շարժական ու անշարժ կայք ունենալու, ինքնավար ձեռով վարելու իր ներքին դորձերը։ Ընդհանրապէս հայութեան բաւականին լայն ասպարէդ էր տրում ինքնավործունչութեան դիմելու՝ հայոց եկեղեցու հովանու տակ։ Սակայն, ուսասական կառավարութիւնը չէր ուզում հայութիւնը ճանաչել որպէս ազգ և իրաւունքներ չէր տալիս նրան, որպէս աղքային միաւորի։ Որպէս այլպիսին, հայութիւնը իրաւադուրկ էր, կամ, աւելի ճիշտ, իրաւունքներ էր ստանում անուղղակի՝ եկեղեցու միջոցով, որ միակ կաղմակերպւած ոյժն էր։ Հայութիւնը իր գարգարման մի շատ կարևոր շրջանը պիտի անցնելը հայոց եկեղեցու բովով, մինչև որ մի կողմից իր քաղաքական միտքը հասունանք, իսկ միւս կողմից ոռւսական պետութեան վերաբերմունքը փոխւէր։ Միայն տիրողը չէր, որ հայութեան վրա նայում էր որպէս կրօնական համայնքի, այդպէս էր հայութիւնը և ինքն իր մէջ։ Նա կրօնական, աւելի ճիշտ,

դաւանական ազգ էր. Հայը՝ Հայ լուսաւորչական էր միւս դաւանանքների նկատմամբ, հայ-քրիստոնեայ՝ մահմեղականների հանդէպ։ Անցնել այս սահմանը, ըստ Գամառ-Քաթիպայի, կը նշանակէր՝ «ազգուրաց» դառնալ։

«Պոլոժենիայ»-ի, համեմատաբար, լայնախոհ ողին պիտի բացատրել Ռուսաստանի՝ ժամանակի քաղաքա-տնտեսական կացութեամբ։ 19-րդ դարի առաջին կիսում Ռուսաստանը բնատնտեսական երկր էր. թոյլ էին երկրի բազմաթիւ մասերի կապերը, նրանք տնտեսական ինքնամփոփ մեծութիւններ էին։ Առևտրական և արդիւնաբերական դրամագույնը չնչին գեր էր խազում երկրի տնտեսական կեանքում։ Զկար այն ուժեղ դասակարգը, որ շահագրգուած լինէր տնտեսական-հաղորդականացական տակութեան կենտրոնացումով ու ջանար ի մի հաւաքել երկրի բոլոր մասերը։ Զկար և զարդացած բիւրոկրատիա։ Նա թոյլ էր քանակով, պետական մեքենան անկազմակերպ։ չէր կարող մտնել հպատակ ազգութիւնների գորեծը մտերիմ շրջանը, ուստի և ցեղական, կրօնական, աղդային առանձնայատկութիւնները զեռ կարող էին դարդանալ։ Կենտրոնական իշխանութիւնը, անկախ իր կամքից, հպատակ ժողովուրդների վերաբերմամբ վարում էր այնպիսի քաղաքականութիւն, որ եթէ չէր էլ նպատում նրանց մշակութային զարգացման, դէթ չէր էլ աղջատում նրանց աղդային դէմքը, չէր խանգարում դիմելու մշակութային — կրթական ինքնագործունչութեան։ Այս շրջանում ուսահպատակ ազգութիւններից ոմանք ձևա-

Կերպում են որպէս իրաւական միաւորներ, ինչ-  
պէս կեհաստանը, Ֆինլանդիան... Հայութիւնը  
կազմակերպում է, որպէս կրօնական համայնք:  
Կար և մի այլ հանգամանք՝ հայոց կաթողիկոսու-  
թեան համահայկական արժէք ունենալը: Պէտք էր  
իր բարձրութեան վրա պահել այն՝ յետադայ նւա-  
ճումների ու քաղաքական նպատակների համար:

### ԹԻՒՐՔԱՀԱՅՈՅ ՀԱՍՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

#### III

19-րդ դարում Հայաստանի և Հայ ժողովրդի  
մեծ մասը գտնուում էր Թիւրքիոյ իշխանութեան  
տակ: Ընկերային-իրաւական յարաբերութիւնները  
այստեղ այլ էին: Թիւրքիան պահել էր մի շարք  
հաստատութիւններ, որոնք նրան տալիս էին  
առանձնայատուկ գոյն: Եւ այդ, յատկապէս,  
անդրադանում էր Հայութեան վրա: Թիւրք պե-  
տութիւնը 19-րդ դարում ապրում էր այնպիսի  
գաղափարներով, այնպիսի իրաւադիտակցութեամբ  
և այնպիսի հաստատութիւնների մէջ, որոնք յիշեց-  
նում էին միջնադարը: Թիւրքիան չանցաւ պետա-  
կանութեան զարգացման այն ընթացքը, որ տեղի  
ունեցաւ Եւրոպայում, նոր գարերի ընթացքում:  
Այնտեղ ստեղծւեց արդիական պետականութեան  
դրութիւնը, իբրև ինքնանպատակ, որը ենթարկեց  
իրեն եկեղեցին, տնտեսութիւնը, տեղական պե-  
տութիւնները: 18 և 19 դարերում երոպական առա-  
ջաւոր միտքը ջանք թափեց եկեղեցին ազատագրել  
պետութիւնից, վերջինս դարձնել բոլորովին աշ-

խարհիկ մի հաստատութիւն, իսկ կրօնը՝ անհատական խղճի ու համոզմունքի գործ։ Քննադատական մտքի ու փիլտրովայական դրութիւնների ազատազրումը հաւատից ու սիոլաստիկայից՝ այդ ընդհանուր ազատազրական ընթացքի մի մասն է։

Այս երեսյթը Թիւրքիայում տեղի չունեցաւ։

Խոլամը և պետութիւնը միացած են այստեղ։ սա նշանակում է՝ խոլամը, որպէս կրօն, դառնում է ոչ թէ խղճի, համոզմունքի գործ, այլ հասարակական յարաբերութիւնները կարգաւորող մի ոյժ, որ տալիս է օրէնք, ստեղծում է յատուկ հաստատութիւններ, որոնց նպատակը քնաւ կրօնական չէ։ ղեկավարում է պետութիւնը։ Կրօնը՝ խոլամը դառնում է հանրային կեանքը ղեկավարող գործօն։ Սուլթանը պետութեան գլուխն է, ինչպէս նաև՝ խալիֆ, հաւատացեալների պետ։ Որպէս թիւրքական պետութեան գլուխ, նա վարում է համաթիւրքական քաղաքականութիւն։ որպէս պետ խոլամի նա վարում է համիսլամական քաղաքականութիւն։ Երկու հաստատութեանց՝ կրօնի և պետութեան միացումը Թիւրքիայի համար ունեցաւ բախտորոշ նշանակութիւն և արագացրեց նրա անկումը։ Թիւրքիայում տեղի չունեցաւ քննադատական մտքի ազատազրումը։ միտքը միշտ մնաց սպասարկու կրօնին։ Զնանաչելով ազատ միտքը, որպէս ստեղծագործութեան աղբեկը, նա մերժեց և խղճի ազատութիւնը։ Եթէ կրօնը համարւէր անհատի խղճի գործ, խոլամը պիտի զրկւէր հասարակական ու քաղաքական արժէքից և հասարակութիւնն ու պետութիւնը պիտի ստանային աշխարհէկ ընոյթ։ Եւ այդ պայմաններում պետական բարե-

նորոգութեան բոլոր փորձերը զուր էին և խաթէութիւն։ 1839 թ. Թանիզմաթը յայտարարում էր։ « այսուհետև ազգային հաստատութիւնը պիտի երաշխատորի մեր հպատակների լիակատար ապահովութիւնը՝ կեանքի, պատրի և գոյքի։ Այս արտօնութիւնները պիտի վայելեն ամենքը, ինչ կրօնի և աղանդի էլ պատկանեն նրանք»։ Սակայն, դրա համար անհրաժեշտ է, որ բոլոր կրօններն ու աղանդները հաւասար լինեն պետութեան համար, որ նա ոչ միայն չունենայ պետական կրօն, այլ և չնպաստի որևէ ձևով որևէ մէկին։ Թիւրք պետութիւնը այդ չարաւ. նա պահեց խոլամը բացառիկ արտօնութեանց սահմանում։ Է՛լ տեւլին՝ պիտութիւնը դարձրեց խոլամութեան գործակատարը։ Բարենորոգումների, ազգային ու կրօնական ազատութեանց մասին խօսք լինել չէր կարող այս պայմաններում։

Դրութիւնը այնքան էլ ողբերգական չէր լինի, եթէ Թիւրքիայում ապրէին միայն «հաւատացեալներ», սակայն կային և «անհաւատ» հայեր, յոյներ, բուլղարներ։ Վերջիններս մնում էին խոլամի ստեղծած իրաւական հաստատութիւններից դուրս։ ստեղծում էին «անհաւատների» համար կրօնական միութիւններ, որոնց գլուխը կանգնած էին պատրիարքները և իրենց հօտի համար պատասխանատու էին խալիֆայի առաջ։ Հայը, յոյնը և, ընդհանրապէս, քրիստոնեան՝ միայն տանելի է, հանդուրժելի, բայց երբեք նոյն արժէքը չունի, ինչ որ «հաւատացեալը»։ Սա ժխտումն է արդիական եւրոպայի յայտարարած մեծագոյն սկզբունքի՝ ամեատների հաւատարութեան և քաղաքացիու-

թեան: Խոլամը չի ճանաչում ո՛չ քաղաքացիութիւն, ո՛չ հաւասարութիւն: Անհատների մէջ նա որոնում է «հաւատացեալին» և ըստ այդմ արժէքաւորում նրան, տեղ տալիս հանրային-քաղաքական կեանքում: Ուստի, ազգայնօրէն դարդացած և անհատականութեան դիտակցութեան հասած հայերը, բուրդարները, յոյները պայքարում են հանրային այդ չարիքի՝ խալամութեան՝ միջնադարեան դաղափարների դէմ: Սրանց աղդային-քաղաքական դարդացումը հակադրում էր տիրող պետականութեան, տիրող կրօնին: Քրիստոնեան ազգ էր դարձել և ուղում էր ապահովել իր աղդային գոյութիւնը — այդ հնարաւոր էր օսմանեան պետականութեան հիմունքների արմատական փոփոխումով, և խուսմը հասարակական ու քաղաքական ասպարէզից դուրս վանելով:

Թիւրքիան ազգերի պետութիւն էր. նրա մէջ ապրում էին ազգեր, որոնք երբեմն ստեղծել էին բարձր մշակոյթ, իրենց ուժերը երևան էին բերել քաղաքակրթութեան բոլոր ճիւղերում: Յոյնը, հայը, արարը, եղիպատացին, բուրդարը՝ մշակոյթի տեսակէտից աւելի բարձր աստիճանի վրա էին կանգնած, ունէին աւելի բարդ հասարակական կազմ, քան թիւրքը, և վերջինիս տիրապետութիւնը այդ ազգերի համար ոչ միայն պատմական յառաջադիմութիւնն էր, այլ մի կատարեալ յետաշրջում, այդ ազգերի դարդացման կասեցումն էր: Ամբողջ թիւրքական կայսրութիւնը լիքն է այդ աղդութիւնների հոգեւոր ստեղծագործութեան նիւթական մնացորդներով — ամրոցներ, արձանադրութիւններ, կամուրջներ, ջրանցքներ, ճանապարհներ,

դամբարաններ, որոնք ստեղծւել են թիւրքից առաջ և աւերակ են դարձել թիւրքի օրով, որոնք ապացուցանում են թիւրք կայսրութեան հպատակ ազգերի երբեմնի ստեղծագործութեան թափը, մեծութիւնը և այժմեան ողբերգական կացութիւնը:

Թիւրքը մնաց ուազմիկ, իշխող. Երբեմնի մշակոյթի աէք ազգերը ապրեցին նրա հովանու տակ որպէս խաղակ՝ մշակութային բարիքներ ստեղծող: Այստեղ էլ մարդկային քաղաքակրթութեան սոորին աստիճանի վրա դանւողը, բայց առողջ ցեղական զօղող ընաղդներ ունեցող թրքական հորդան յաղթեց բարձր մշակոյթ ստեղծած, սակայն իր ներսում սուր ընկերային անհաւասարութիւնից տառապող արարական խալիֆայութեան և բիւզանդական կայսրութեան: Եւ տիրելուց յետոյ, թիւրքը ոչ թէ ջանք թափեց հասնելու տիրածի քաղաքակրթութեան աստիճանին, այլ, ընդհակառակը, քաշեց նրա վեշից դէպի ցած, իշեցրեց նրան մինչև իր աստիճանը: Եւ այնուհետև մի քանի դար հպատակների մէջ մարեց և՛ ստեղծագործութեան ոյժը, և՛ ազգային դիտակցութիւնը, և՛ ուազմի կորովը: Նա դարձաւ, իրօք, անրան մի հօտ, դիմագուրկ, քրիստոնէական համայնք, որին միայն չնորհւած էր աղօթելու իրաւունքը: Սակայն, 18-րդ դարի վերջից այդ կրօնական համայնքները ցուցահանում են զարթօնքի նշաններ, առաջ Եւրոպական թիւրքիայում, ապա՝ Ասիական թիւրքիայում, Արարիայում, Եղիպատում... Սկզբում նա դառնում է «բան», խօսք, ապա՝ դործ, զէնք ու ապստամբութիւն: Ակզրում

աղղութեան գաղափարը արմատանում է քրիստո-  
նեաների մէջ, ապա անցնում է խմաներին: 19-րդ  
դարում լալամական աղղերն էլ՝ արար, եղիպտա-  
ցի՝ նոյնպէս հակառակում են իրենց աղդային —  
քաղաքական շահերը թիւրք կայսրութեան: Ստեղծ-  
ում է ճեղքածք համիլամութեան գաղափարի  
մէջ, որ ուժեղանում է մեր օրով և տեղի է տալիս  
աղղայնութեան գաղափարին, որով ընթացել է նոր  
դարերի եւրոպական պատմութիւնը:

Օսմանեան կայսրութեան մէջ տիրապետող  
տարրը փոքրաթիւ էր: Սա նրա պատմական  
դժբախտութիւնն էր: Վեց-եօթ միլիոն թրքու-  
թեան հանդէպ կայսրութեան սահմաններում ապ-  
րում էին երեք-չորս անդամ աւելի ոչ-թուրք  
ցեղեր, աղղութիւններ: Ուրեմն, թէ քանակով և  
թէ որակով թրքական տարրը աւելի թոյլ էր:

Փոքր աղղերը իրենց մէծութեան գրաւականը  
պիտի որոնեն բարձր մշակոյթ ստեղծելու մէջ՝  
իինի նիւթական թէ հողեկան ասպարէդում: Նրանք  
իրենց բովանդակ ուժերը լարելու են աղդ դառ-  
նալու՝ մի հզօր, ուռնացած մշակութային միու-  
թիւն: Այլապէս նրանց գոյութեան հիմքը խախուս  
է: Հենց այս ուղիղով էլ ընթանում էին երոպական  
փոքր աղղերը՝ թէ նախորդ գարում և թէ մեր  
օրերում: Թիւրքիան չըսնեց այդ ուղին. չմկրտեց  
եւրոպական քաղաքակրթութեան աւագանում: Նա  
անյուսօրէն կառչեց խմանական օրէնքներին,  
խարխուլ պէտական մեքենային, բաց չթողեց  
դէնքը ու համաձայնութեան եզր չգտաւ հպատակ,  
քայլ եւրոպական քաղաքակրթութեան ուղին բըռ-  
նած՝ աղղերի հետ: Սա թիւրքիայի ողբերդութիւնն

էր, սակայն այդ ողբերդութիւն էր և՛ հպատակ  
աղղերի համար, որովհետեւ թիւրք կայսրութեան  
այդ ճնաժամը վերջանում էր կոտորածներով,  
տեղահանութեամբ և զանգւածային հալածանքնե-  
րով: «Թիւրքիոյ մէջ տիրող օսման ժողովուրդը  
թէ իր նազ քանակի և թէ իր անկուլտուրակա-  
նութեան հետեւանցով կամ պիտի փորձէր հասկա-  
նալ մանր ժողովուրդների շարժումների պատ-  
ճառները և գոհացում տար նրանց արդարացի  
պահանջներին և կամ՝ ապաւնած հրի և սրի եր  
վատթար քաղաքականութեան՝ արեան ճապաղիք-  
ների մէջ իր գերիշխանութիւնը պիտի հաստատէր:  
Դժբախտաբար, օսմանեան պետութիւնը իր գոյու-  
թեան ամբողջ ընթացքում որդեգրեց երկրորդ  
ուղին»... (Խուրէն):

Թիւրքիայում բնակւող աղղութիւններն ու  
ցեղերը մշակոյթի ու հասարակական զարգացման  
տարբեր աստիճանի վրա են գտնում: Այս հան-  
դարներ բախտորոշ նշանակութիւն է ստանում,  
յատկապէս, զայաստանում, ուր հայութիւնը  
երկրագործ է, մասսամբ առեւտրական ու արհես-  
տաւոր, իսկ նրա կողքին ապրող ֆիւրդը՝ ընկե-  
րային աշխատանքի ստորին աստիճանի վրա  
կանգնած — անասնապահ է, վաշկատուն. թալանն  
ու կողոպուտը նոյնպէս նրա աշխատանքի աղ-  
բիւրներից մէկն է՝ որբագործւած սովորութեամբ:  
Քիւրդը ապրում է ցեղական կեանեխով և տուժմական  
դնազդը նրա դէնքերից լաւագոյնն է. ցեղը կադ-  
րանապէս նրա դէնքերից լաւագոյնն է: Հայը  
մակերպւած ուզմական միութիւն է: Հայը  
վաղուց անցել է ընկերային զարգացման այդ ձևը.  
Երկրագործութիւնը, արհեստն ու վաճառականու-

թիւնը քայքայել են այն և տեղը գրել հասարակական կեանքին։ Հայութեան մի զգալի մասը ապրում էր բուն հայրենիքից դուրս՝ Կ. Պօլսում, Զմիւռնիայում և այլ ծովեղերեայ քաղաքներում, զբաղւում էր առևտորով և կազմում էր աղբային մարմնի աւելի բանիմաց, գործունեայ մասը։ Սակայն, որևէ կապ այլ մասի և բնաշխարհի հայութեան միջև գոյութիւն չունէր, և այդ կատարւում է քրդի միջոցով։ Քրդութիւնը գառնում է արտօնեալ մի խաւ՝ հայութեան հանդէպ. նա աստիճանաբար լեռներից դաշտ է իջնում՝ դրաւում հայի հողը, տունը, ինչը, պղծում պատիւը, հարստահարում նրան։ Թալանն ու աւերը գառնում են բնականոն երկոյթ, և հայութիւնը ազգովին յանձնում է քիւրդ աշխաթների և թիւրք գայմագամների գաղանային հովանաւորութեան։ Կարծէք թէ ընկերային շերտաւորումը գնում է զուգընթաց ազգային պատկանելիութեան։ Խաչնարածը՝ քիւրդը՝ իշխում է երկրագործի՝ հայի վրա։ Աշխատանքի աւելի բարձր ձևը ենթարկում է ստորինին։ Հայ-քրիստոնեան իսլամի հանդէպ մի «անհաւատ» է, որին կարելի է հանդուրժել, քրդի հանդէպ նա կատարեալ ճորտ է, նրա «մարդը», ասել է ենթակայ նրա «պաշտպանութեան», որին կարելի է կեղեքել։

Ահա այս պայմաններումն էր ապրում հայութեան մեծագոյն մասը 19-րդ դարում. Ի՞նչ էր ներկայացնում նա ինքն իր մէջ։ Որպէս ուրոյն աղգութիւն, դիտակցւած շահերի նոյնութեամբ գոյութիւն չունէր և այստեղ։ Այն, ինչ ասում էր Վագները դարի 40-ական թւականներին, Սպանդարեանը 80-ական թւականներին, վերա-

բերում է և թիւրքահայ հասարակական կեանքին։ Հայութեան մի զգալի մասը ապրում էր բուն հայրենիքից դուրս՝ Կ. Պօլսում, Զմիւռնիայում և այլ ծովեղերեայ քաղաքներում, զբաղւում էր առևտորով և կազմում էր աղբային մարմնի աւելի բանիմաց, գործունեայ մասը։ Սակայն, որևէ կապ այլ մասի և բնաշխարհի հայութեան միջև գոյութիւն չունէր, և վերջինիս բախտը նրա շահագրդութեան առարկան չէր։ Ամիրայութիւնը զեկավար դասն էր հայութեան։ Նա մնացորդն էր հայ հին աղնաւականութեան, որ ժամանակի ողուն յարմարւելով՝ ձեամիոխւում է, նւիրւում նոր աշխատանքի և դառնում խոչոր առեւտքական Փինանսական դաս և իր ձեռքին պահում Կ. Պօլսի առեւտրի ու Փինանսների մի զգալի մասը։ Որպէս այդպիսին, խոչոր աղդակ էր նա օսմանեան պետական կեանքում։ Բ. Դուռը հայ ամիրայութեան հովանաւորում էր ու սիրաշահում։ Ամիրայութիւնը նախորդ դարի առաջին կիսում խոչոր աղդակ էր թիւրքահայութեան ազգային կեանքում։

Թիւրք պետականութիւնը հայութիւնը համարեց կրօնական կազմակերպութիւն, որը յանձինս պատրիարքի ու հայոց եկեղեցու՝ դառնում էր իրաւունակ մի մարմին։ Այդ իրաւունքները շատ ընդարձակ էին, ընդգրկում էին թիւրքահայութեան մշակութային-կրթական, բարեգործական, կրօնական սահմանները, որոշ խնդիրներում՝ և դատական։ Տիւրողը չէր մանում օտարադաւան հպատակի ներքին գործերի մէջ և հնարաւորութիւն էլ չունէր մտնելու չնորհիւ իր պետական մեքենայի թուլութեան, պարզունակութեան և կրօնի տար-

թերութեան։ Հայ ամիրայութիւնն է, որ ազգային-եկեղեցական ինքնավարութեան ղեկը առնում է իր ձեռքը և վարում իր քաղաքականութիւնը պահելով իր ձեռքին պատրիարքին և բարձր հոգմուրականութեան։

Թիւրքահայ ամիրայութիւնը չընթացաւ ուսահայ աղնւականութեան խորթացման ուղիով։ Այսաեղ իշխողը նպաստաւոր պայմաններ չէր ստեղծում նրա ձուլման, հայ մարմնից պոկելու համար։ Շատ խորն էր ու անանցանելի կրօնական ու մշակութային տարբերութիւնները։ Ռուսահայաստանում ձուլման դվասւոր միջոցներն էին ուռսական դպրոցները, առաւելապէս՝ զինուրական դպրոցները, ուր կրթում էին հայ աղնւականների դաւակները։ ռազմական ծառայութիւնը, ուր իր բնատուր կարողութիւնը երեան էր բերում հայ զինուրականը։ Այդ երկուսի դռներն էլ փակւած էին ամիրայութեան հանդէպ։ առաջինը՝ թիւրք դպրոցը՝ հրապուրիչ ոչինչ չունէր նրա համար, երկրորդում՝ զօրքում բարձր՝ ղեկավար պաշտօններ ստանալը նրա համար անկարելի էր։ Ուստի և այն երեսոյթը, որ տեղի ունեցաւ ուստահայ բարձր դասի շրջանակում, այստեղ չի նկատում։ Ռուսահայ աղնւականը հայրենի պետականութիւն չդանելով՝ դնաց, միացաւ ուռսի պետական անօթին, ամիրայութիւնը յարմարեց նոր պահանջներին — դարձաւ ֆինանսիստ, խոչոր վաճառական և այս ասպարիզում առաջնակարգ տեղ դրաւեց թէ պետութեան և թէ ներքին՝ ազգային կեանքում։ Ամիրայութիւնը իր ամբողջութեամբ մնաց կառչած թիւրք պետականութեան։ քաղաքական այլ ձըգ-

տումներ չունէր, քան ապրել և հարստանալ թիւրք պետութեան հովանու տակ, բայց մնալ հայ՝ աղդայինուէն — մշակոյթով։ Խուսահայ ազնւականութիւնը բաղաբականապէս էլ, մշկոյթով էլ ուսւէր։ թիւրքահայ ամիրայութիւնը բաղաբականապէս մնաւմ էր թիւրք, մշակոյթով՝ հայ։ Սա մի մեծ տարբերութիւն էր, որ ստեղծւել էր ափրող պայմանների չնորմիւ։ Թիւրք դպրոցը և գրականութիւնը չէր, որ պիտի յագեցնէր ամիրայութեան մշակոյթի ծարաւը։ Ուստի և աղդային դպրոց ունենալը գառնում է նրա համար կենսական պահանջ։ Ամիրայութիւնը խոչոր դրամներ է նւերում դպրոցներ բանալու, ուր իր գաւակները կրթում էին «հասարակ» խաւի որդիների հետ։ Ապա հայ պատանիները կատարելազործում էին ֆրանսիայում, որից ձուլելու և ոչ մի վտանգ չկար, ընդհակառակը, Փրանսիական կուլտուրան նրանց մէջ զարգացնում էր ուամկավարական ազգայնութիւնը և հայրենի երկրին ծառայելու տենչը։ Հաստաւում են տպարաններ, հրատարակում է մամուլ ու գրականութիւն և այս բոլորը, մեծ մասամբ, ամիրայութեան ջանքերով։ Կ. Պօլսի պատրիարքութեան կից կազմում է Ազգային Գերագոյն Խորհուրդ, որի անդամները ամիրաներն էին և որը ղեկավարում էր բոլոր գործերը՝ կրթական ու եկեղեցական։ «Հայոց պատրիարքները խաղալիք էին նրանց ձեռքում։ նրանք կարող էին քմահաճօրէնքներ և հնտրել և հրաժարեցնել պատրիարքին։ Ոչ մի յարգանք դէպի ժողովրդի միւս դասերի իրաւունքները», — գրում է իշխան Տատեանը։

Կ. Պօլսում բացի ամիրայական դասից կար և

Էսմաֆական դասը՝ սրանք աւելի ջերմ շահագր-  
գոռւթիւն էին ցոյց տալիս դէպի ազգային գործե-  
րը, մանաւանդ կրթականը, որ նրանց համար  
ամենից կարեոր խնդիրն էր հանդիսանում։ Այդ  
դասն էր, որ 40-ական թւականների վերջերին՝  
խնդիրների, բողոքների, նայնիսկ ցոյցերի միջո-  
ցով՝ պահանջում է իր իրաւունքը՝ մասնակցելու  
ազգային գործերի տնօրինման մէջ և վերջ տալու  
ամիրայական սակաւապեառութեան։ Միջին խաւը  
դառնում է, եթէ կարելի է այսպէս ասել, իրաւա-  
տէր քաղաքացի և հաւասարագոր ոյժ՝ ամիրանների  
հետ։ Ազգային կազմի մէջ սկսում է պայքար,  
որի հետևանքով եկեղեցական-մշակութային ինք-  
նավարութիւնը պիտի ծառայէր աւելի հոծ բաղ-  
մութեան և պիտի հանդիսանար կենարոնը, որի  
շուրջը հաւաքւելու էր հայութիւնը։ Սակայն, այդ  
ինքնավարութիւնը անհրաժեշտ էր ձեւակերպել,  
որպէս սահմանագրութիւն, օրէնք՝ պետութիւնից  
պաշտօնապէս ճանաչւած և ապահովւած։ Դրա  
վրա է աշխատում նոր սերունդը, որը 50-60-ական  
թւականներին հանդէս է դալիս թիւրքահայութեան  
կեանքում՝ դինւած եւրոպական քաղաքակրթու-  
թեան դէնքերով։

## IV

## ԱՌԽՍԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԸ

Եւրոպայի պատմութեան 19-րդ դարի հասա-  
րակական յարաբերութիւնները և գաղափարները  
հետաքրքրական են և մեր պատմութեան տեսա-  
կէտից։ Արևմտեան քաղաքակրթութիւնը եղել է  
ուսուցիչը արեւելեան ազգերի մտաւորականութեան  
և քաղաքական գործիչների համար։ Հայ մտաւո-  
րականութիւնն էլ, որ, ժամանակակից իմաստով,  
ծնունդ է առնում գարի առաջին կիսին, մտահո-  
գութեան նիւթ է գարձնում մեր հանրային յետա-  
մնացութիւնը, ձգում է հայութիւնը հանել  
եւրոպական քաղաքակրթութեան ուղիի վրա։ Նա  
ոչ միայն առնում էր դաղափարը՝ պատաստելով  
այն մեր պայմաններում, այլ և ուղիներն է  
ցուցահանում, առաջարկում է մեթոդները, որ  
պիտի ընձեռէր հայութիւնը։ Մեր առաջին մտա-  
ւորականութեան գործն էր՝ բարձրացնել հայ  
ժողովրդի մշակութային-կրթական մակարդակը,  
դարձնել նրան ինքնագիտակից ազգ, ապահովել  
նրա ապագան և լուծել բոլոր այն հարցերը, որոնք

կապւած են ազգութեան գաղափարի հետ։ «Պօլութենիայ»-ի տւած իրաւունքները ռուսահայութիւնը կարողանում է օդտագործել 50-60 թւերից, երբ հայկական տարրական դպրոցները անհրաժեշտութիւն են դառնում հայկական դիւլերում, հայ հոգևորականը ընդառաջ է դնում այդ պահնջին, սկսում է մամուլի, դրականութեան հրատարակութիւնը, հանդէս է վայիս նոր՝ աշխարհիկ տարրը, կրթւած հայ մտաւորականը, որ դառնում է հայ քաղաքական-ընկերային մտքի ղեկավարն ու քաղափարատուն։ Նոր գաղափարները նա ստանում է Եւրոպայից։

Ֆրանսական յեղափոխութիւնը դրեց բազմաթիւ հարցեր, սակայն, նրանց վերջնական լուծում չտւեց։ 19-րդ դարի հասարակական միտքն ու զանգւածները աշխատում են լուծել, իրականութիւն դարձնել այն։ 1848 թ. Փրանսական յեղափոխութիւնը շատ ուժեղ թափով շեշտեց քաղաքական ուամկավարութեան և ընկերային հաւասարութեան սկզբունքը։ Փրանսական ազգային միտքը բաժանած էր երկու հոսանքի՝ իշխողը քաղաքականն էր։ Նա պահնջում էր՝ պետութիւնը դործիք դարձնել ազգային մեծամասնութեան համար։ բայց ընկերային հարցի լուծումը նրա ծրագրի մէջ չէր մտնում։ Մեծ յեղափոխութիւնից յետոյ առաջին անդամ ուամկավարական գաղափարները այսաեղ են շեշտում՝ շատ ուժեղ թափով։

1848 թ. յեղափոխութիւնը իր անդրադառնումներն ունեցաւ և Գերմանիայում։ Սակայն, յեղափոխութիւնն այստեղ արմատական բնոյթ չկրեց։ Կենտրոնական, լուծելիք հարցը ոչ թէ ընկերայինն

էր ու քաղաքական ուամկավարութեան խնդիրը, այլ գերման ազգութեան քաղաքական միացումը մի պետութեան մէջ և սահմանադրական կարգերի հաստատումը։ 18-րդ դարից սկսած գերման ազգային միտքը աշխատում էր այդ ուղղութեամբ՝ հաւաքել գերման ազգութեան մշակոյթին պատկանող մասերը մի պետականութեան մէջ, առանց որի նա գուրկ կը լինէր միջազգային արժէքից և չէր ստեղծի մեծ քաղաքակրթութիւն։ Հերդէրը, Ֆիլստէն ու Զեգէլը և բազմաթիւ ուրիշ մտաւորականներ այդ ուղղութեամբ են աշխատում, նրանց դուդընթաց գնում են և պետական գործիչները՝ աստիճանաբար ստեղծելով քաղաքա-տնտեսական հիմքերը ապագայ գերման ազգային պետութեան։ Ֆրանսական յեղափոխութիւնը և Նապոլեոնի արշաւանքները ազգային ինքնադիտակցութիւն են տալիս և՛ խոնարհ խաւերին։ Այսպիսով, Գերմանիայում օրւայ, գործնական քաղաքականութեան նիւթ էր դառնում ազգային հարցի լուծումը։

Ուղարական միտքը ճգնում էր լուծել միաժամանակ և՛ ընկերային, և՛ քաղաքական հարցը։ Ընկերային խնդրում նա աւելի արմատական էր, քան Եւրոպական միտքը, որովհետեւ կարծում էր, թէ Ռուսաստանը իր «համայնքով» ունի անհրաժեշտ տևեալը ընկերային յեղաշրջման, մի բան, որ պակասում էր Եւրոպային։ Պէտք էր ազատել ուղարական հողը և ոռւս դիւղացու անձը։ պէտք էր վերացնել նրա ընկերային և անձնական կախումը աղնւականութիւնից։ Պէտք էր քանդել ուղարական բացարձակապետութեան ու բիւրոկրատիզմի հիմքերը ու նոր

ձեւորում տալ ոռւսական պետականութեան՝  
դնելով նրա հիմքում ըրջանների և ազգութիւնների  
առանձնայատուկ պայմանները։ Ուստի և դալիք  
յեղափոխութիւնը Ռուսաստանում պիտի լինէր  
աւելի արմատական։ Նա պիտի լուծէր մէկից  
աւելի հարցեր։

Այսպիսով՝ Ֆրանսիան հայ մտաւորականու-  
թեան տալիս էր քաղաքական ռամկավարութեան  
սկզբունքը, Գերմանիան՝ ազգային հարցի լուծումը  
և լուծման ձևերը, Ռուսաստանը՝ ընկերային, «մի  
կտր հողի» խնդիրը։

Կաչառուր Արովեանը առաջին ոռւսահայ  
մտաւորականն է Եւրոպական խմաստով։ Ոչ  
որպէս հոգևորականութեան դասին պատկանող է  
հանդէս գալիս նա գործելու մեր կեանքում, ոչ էլ  
իբրև ազնւական, որ պատիւներ ու պաշտօներ  
որոնի ոռւսական գործի համար։ Նա սոսկ մտաւո-  
րական է՝ կրթւած գերման մտաւոր կենտրոններից  
մէկում։ Դորպատում։ Նա և հայ մտաւորական է,  
որովհետեւ իր մտորումների ջանքերի նիւթը հա-  
յութիւնն է ու նրա ապագան։ Նա խորապէս գի-  
տակցում է հայի մտաւոր յետամնացութիւնը և  
ողբերգօրէն ապրում այն։ Զգտում է հայութիւնը  
աղդ դարձնել։ դարձնել նրան հանրային կեանքով  
ապրող՝ անցեալը գիտակցող և ապագան իմաստա-  
ւորող մի հաւաքականութիւն։ Նա, մեր վերած-  
նութեան այդ խորհրդանշող դէմքը, ազգութիւնը  
ըմբռնում է, որպէս կրօն և լեզու։ Հայը նրա  
համար հայ քրիստոնեայ է։ «Եթէ մեր սուրբ հա-

ւառը ու լեզուն մոռանանք՝ էլ ինչ հայ ենք»։ Նրա  
կարծիքով ազգութիւնը որակող լեզուն՝ «կրոց  
լեզուն» չէ, այլ՝ կենդանի, ժողովրդական լեզու։  
Արովեանը պայծառորէն ըմբռնում էր՝ կենդանի,  
խոսակցական լեզուի գերը ազգութեան ստեղծման  
գործում։ Նա այդ բանը տեսել էր Եւրոպայում,  
ուր ստեղծւել էին ազգային լեզուներ։ Ոեփորմա-  
ցիան՝ 16-րդ դարից սկսած գուրս է վանում միջ-  
նադարեան լատիներէնը և ծնունդ տալիս նոր  
ստեղծւող ազգային լեզուներին։

Նոյնը տեղի է ունենում և մեղ մօտ. «կրոց  
լեզուն», գրաբառը՝ հնութեան մնացորդ է, բթա-  
ցած դէնք հայ տղէտ հոգևորականութեան ձեռքին։  
Նրանով պայմանաւորւել էր մեր պատմութեան ու  
մշակոյթի մի շատ մեծ ըրջան, բայց այդ մշակոյթ  
ստեղծողներն ու կրողները վաղուց դադարել էին  
հայոց պատմութեան առաջ մղող ազգակը լինելուց։  
Հայ հոգևորականութիւնն ու ազնւականը աստի-  
ճանարար դիմում էին դէպի անկում։ Ուստի և  
գրական լեզուն չէր կարող մնալ իր նախկին դիր-  
քերի վրա։ Նոր ազգութիւնը պիտի ստեղծւի. և  
այդ լինելու է ոչ հոգևորականութիւնը, որի  
պատկերը տաղանդաւոր ձեռվ տալիս է Արովեանը,  
ոչ էլ ազնւականութիւնը, որ թոյլ էր որակով ու  
քանակով։ Առոր ազգութիւն սանդողը ժողովուրդն  
է, գիւղացիութիւնը, որի հանդէպ այնքան գուր-  
գուրանք ու սէր ունի Արովեանը։ Նոր ազգութեան  
համար անհրաժեշտ է նոր լեզու, և Արովեանը  
դառնում է հայոց լեզուի ստեղծողը — ստել է՝  
հիմնաւորում է հայոց նոր ռամկավարական ազ-  
գութիւնը։ Դեռ քաղաքական ուրոյն իդէալ չունի,

աւելի ճիշտ այդ իդէալը մուսաստանի սահմաններում է որոնում, սակայն չեշտւած կերպով իրեն հայ է զգում ու ջանում է հայութիւն պատւաստել բոլորի մէջ: Ազգութիւնը պահելու համար նա երկու աղդակ ունի՝ նոր ժողովրդական լեզու ու ժողովրդական գրականութիւն և ազգային՝ «Լուսաւորչի սուրբ հաւատը», հայոց եկեղեցին, որ փրկել է նրան «շատ ու շատ չարիքից»: Իսկ ազգութեան փրկութեան համար վերահաս վտանգից Արովեանը ստեղծում է իր սիրած հերոս՝ Ազատւն, որ գոհաբերում է ամէն ինչ պատւի ու հայրենիքի համար: Աղասին Արովեանի գաղափարների կրողն է և խտացումը հայ ժողովրդի լաւագոյն յատկութիւնների:

Այսպիսով նախորդ դարի 40-կան թւականներին Արովեանը մտքի մի հանձարեղ թոփչքով կանխեց Ռաֆֆուն և հայկական ազատագրութիւնը, կուահեց լեզուի յեղափոխիչ դերը ազգային կեանքում: Եւ հէնց այդ պատճառով նա մեծագոյն դէմքերից մէկն է մեր ազգային-քաղաքական մտքի զարգացման: «Վէրք Հայաստանի»-ն և ինքը Արովեանը իր կեանքով ու գործով հայ ժողովրդի լաւագոյն ուսուցիչներից ու դաստիարակներից մէկն է:

1858 թւին, ճիշտ այն ժամանակ, երբ Թիֆլիսում Ներսիսեան դպրոցի տպարանից լոյս էր տեսնում Արովեանի «Վէրք Հայաստանի»-ն, Մոսկվայում հրատարակում է «Հիւսիսափայլ» հանդէսը Ստ. Նազարեանի խմբագրութեամբ: Այդ

հանդէսի դերը մեծ է մեր հասարակական մտքի պատմութեան մէջ: Նրա չուրջը համախմբւում են ժամանակի լաւագոյն ուժերը: Դարաշրջանի գաղափարի խտացնողը Նազարեանն է ու Նալբանդեանը: Միւսները հետևում են նրանց, ինչպէս, օրինակ, Ամբատ Շահազդիզը, որ ոչ մի նոր գաղափար չուեց:

Իրենց խառնւածքով այդ երկու մեծ դէմքերը՝ բոլորվին տարբեր տիպարներ էին, բայց ծառայող միենոյն գաղափարին: Ըստ Նազարեանի այն գործօնները, որոնք ստեղծելու են հաւաքական-հայութիւնը, լեզուն են ու կրօնը: «Հայերը, սոսում է նա, ունեն երկու հոգեղէն անօթ՝ լեզուն է ու կրօնը»: Եւ լեզուն նրա համար «հասարակի» լեզուն է, իսկ կրօնը՝ հայ լուսաւորչական եկեղեցին: Այսքանով Նազարեանը մի ուրոյն միտք չէր արտայայտում, այդ գործօնների վրա չեշտել էր և Արովեանը. այսպէս չէր ըմբռնւում ազգութիւնը նաև Եւրոպայում, ուր կրթւել էր նա: Գերման միտքը ազգային խնդրի լուծման մէջ շատ էր առաջ գնացել. դեռ 18-րդ դարի վախճանին Հերգէրը արտայայտում էր մի գասական միտք, որ այնուհետեւ տարբեր ձևաւորումներով կրկնեց և 19-րդ դարում: Ազգութիւնները մարդկութեան բնական մարմիններն են, պետութիւնները՝ արհեստական: Պետութիւնը պիտի ծառայի ազգութեան, Եւրոպան պիտի կազմակերպւի քաղաքականապէս՝ «բնական», ազգային մարմնի ոկրունքով: «Բնական ու արհեստական» մարմինների փոխյարաբերութիւնը քննութեան նիւթ է դարձնում Նազարեանը և լուծում համապատաս-

իսան մեր իրականութեան : Ընդամէնը երկու տարի յետոյ այսպէս է ճշում նա իր գիրքը աղջութեան դաղափարի վերաբերմամբ . «աղդ և կրօն ջոկ ջոկ խնդիրներ են , այլ է աղջութեան հանդէսը , այլ է կրօնի հանդէսը » : «Հայերը՝ թէ լուսաւորչականք , թէ կաթոլիկք , թէ պրոտեստանք մնում են միշտ արիւնակից եղալուքք , մի աղդի որդիք , մի աղջային պատմութեան ժառանդներ » :

Այս տեսակէտը մեր հասարակական մտքի դարձացման մէջ մի յառաջազելմութիւն էր : Խնդիրը ունէր և գործնական արժէք : Հայ լուսաւորչականի , բողոքականի և կաթոլիկի հարցը ժամանակի ամենացաւում հարցերից մէկն էր : Տիրապետող կարծիքը թելադրում էր «Հայ լուսաւորչական եկեղեցուց զուրս չիք հայութիւն » :

Ուրեմն , հայ չեն հայ-բողոքականը և հայ-կաթոլիկը : Դաւանանքը դառնում է աղջութեան միակ աղջակը : Այժմս , ըստ Նազարեանի աղջութիւնը անջատում է կրօնից-դաւանանքից . նա աւելի պայծառ իմաստ է ստանում և դառնում է աւելի բարձր դաղափար . բոլորը՝ և՝ լուսաւորչականը և կաթոլիկը և բողոքականը հայ են . «մի աղջային պատմութեան ժառանդորդներ » :

Սա տիրող եկեղեցու արտօնեալ կացութեան ժխտումն էր . ուստի և հասկանալի է այն մոլեգին պայքարը , որ սկսւց Նազարեանի դէմ և որին մասնակից եղաւ անդամ հայոց հոգեւորականութեան գլուխը : Այս պայքարը՝ նոր , աշխարհիկ մտաւորականութեան և հայ՝ լճացած հոգեւորականութեան պայքարն էր՝ աղջութեան դաղափարի և մշակութային հաստա-

տութեանց շուրջը : Այդ պայքարը սկսել էր Աբովեանը , իր ժամանակի «մենակ մարդը» , որին այնքան դաժանօրէն հալածեց հայ հոգեորականութիւնը՝ յայտարարելով նրան «հերձւածող» , մի մարդ , «որ կարող է միայն հոգիները մոլորեցնել , բայց ոչ մանուկները գաստիարակել» : Բայտ Նազարեանի , հայութիւնը պիտի ապրի որպէս ուրոյն աղջութիւն , չպիտի «միաւորւի ոչինչ աղդի հետ , ոչ գերմանացու , ոչ Փրանսացու , ոչ անգլիացու , ոչ յոյնի հետ . դա ընդդէմ է Աստուծոյ կամքին» : Այսպիսով , աղջութիւնը դառնում է բնական երեւոյթ՝ այն , ինչ ուսուցանում էր 18-րդ դարի ըկերային-միլիստիայութիւնը և , մտսնաւորապէս , Հերոդէրը : Ամէն բոնութիւն՝ վերացնելու աղջութիւնը կամ ձուլելու նրան՝ դէմ է Աստուծոյ , առել է , բնութեան և արդարութեան սկզբունքին :

Սակայն , ինչովէ՞ս պիտի պահի հայութիւնը իր ուրոյն , աղջային գոյութիւնը : Անկախ պետական կեանքը , «արհեստական մարմինը» , միակ իրական միջոցն է աղջութեան գոյութիւնը պահպանող : Այդ խնդիրն ևս Նազարեանը դարձնում է բնութեան նիւթ :

Նա չատ լաւ գիտէր , թէ ինչ ուղղութեամբ է ընթացել և ընթանում է եւրոպական աղջերի պատմութիւնը և ինչ խոշոր գեր է կատարել պետութիւնը աղջերի ստեղծման ու զարգացման գործում : «Քաղաքական անօթը արդարե մի անչափելի , մեծակշիռ անօթ է» , սակայն , մեղ մօտ՝ «մեր և օտարի մեղքով ոչնչացել է ու չկայ այլն» : Ուրեմն , ի՞նչ անել . կամ պէտք է ձգտել նորէն վերստեղծել այդ «քաղաքական անօթը» , կամ

Հայոց ազգութեան պահպանման այլ գործոններ որոնել։ Նազարեանը ինդիրը լուծում է երկրորդ ձևով։ — հայութիւնը ազգութիւն է առանց քաղաքական անօրի։ Վերջինիս պահանջը, ըստ նրա, հնարաւոր չէ։ Թոյլ ենք որակով ու քանակով։ Հայութեան քաղաքական ձգտումները մարմնաւորում են Ռուսաստանի մէջ։ «Քաղաքականապէս հայը ոռւս է», ասում է նա։ Այս բանաձելը մնաց շատ երկար ժամանակ հայ մտաւորականութեան մէջ, որպէս զեկավար սկզբունք։ Նազարեանը շատ լաւ գիտէր, որ «հաւատը առանց իշխանական գաւաղանի, խաչը առանց որի տկար է», բայց և այնպէս, անկախ պետականութեան պահանջը նա չի դնում։ Մնում էր մշակութային վերածնութիւնը։ Հայութիւնը, եթէ չի կարող քաղաքական ազգ դառնալ, կարող է և պիտի դառնայ մշակութային ազգ — ահա Նազարեանի ուսմունքը։ Ռուսաստանի հովանու տակ հայութիւնը պիտի դարդացնի իր ազգային մշակոյթը։ Նազարեանը մէր մշակութային վերածնութեան ամենամեծ քարոզիչն է ու գործադրողը։ Պէտք է հիմնել գպրոցներ, իջմիածնում ճեմարան, բանալ բարեգործական ընկերութիւններ, մարդասիրական հաստատութիւններ, զարդացնել ազգային թատրոնը, գիրն ու գրականութիւնը։ Եւ այդ աշխատանքը պիտի կատարեն ամենքը՝ «ազգային գործի անդաստանում չկայ տէր ու ծառայ»։

Ահա ինչ է քարոզում Նազարեանը հայութեան։ Վերապարթօնք, ազգային ինքնագիտակցութիւն, մկրտւել երոպական մշակոյթի աւազանում, ասել է անցնել այն ճանապարհը, որ անցել է Եւրոպան՝

ստեղծելով ազգութիւններ, ժողովրդական լեզուներ, աշխարհիկ գրականութիւն և մշակոյթ, ազատ միտք ու խօսք և ազատ կրօն։ Այս գէպքում միայն հայը ապագայ ունէր. իսկ եթէ այդ չարւի, հայութիւնը ապագայ չունի։ Դեռևս 1847 թ. Նազարեանը մի մասնաւոր նամակում գրում էր. «Ուրեմն, ոչ այլ ինչ մնայ Հայոց ի Ռուսաստանեայս, բայց մերկացեալ յանձանց զամենայն հայութիւն, կլեալ ի մի կուլ ի վիթխարի հսկայէն, զի չեմք արժանի սեփական կենաց, նոյն և անարդեալ և խայտառակեալ զյիշտակ նախահարց մերոց՝ դարձուք ի ոռւս, այսմ ցանկան պատւական հայրենասէրի հայոց առ մեզ, զայս հոգան զտիւ և զգիշեր խաւարեալ մտօք իւրեանց և այս լիցի վախճան կատարածի մերոց ի Ռուսաստանեայ։ Որ ոչ կամի պահպանել զկենդանութիւնն իւր ի շարս կենդանի էակաց, մեռցի խորտակեալ և սրոց ամենածախ ծերունոյն Կոռոնոսի, որ սովոր է միշտ կլանել և մարսել զանալիտանացեալ որդիս մարդկութեան։ Սա մի ահազանդ էր, որ հնչեցնում էր Նազարեանը այն ժամանակ, երբ գեռ «Կոռոնոս» չէր ձևաւորւել, սակայն 60-կան թւականներին փորձում էր գառնալ եւրոպական տիպի պետութիւն, սպառնալիք հպատակ ազգութիւնների համար, աւելի յարմար գործիքներ էր մշակում նրանց գէմ պայքարելու, իսկ 70-կան թւականներին արդէն անցնում է յարձակման Նազարեանի քարոզած բոլոր հաստատութիւնների ու գաղափարների գէմ։ «Ռուսական քաղաքացին» մի տընուր յոռետեսութիւն ունի այժմ մեր ազգային վերածնութեան հնարաւորութիւնների հանդէպ։

Ողբերգական է հայ մտաւորականի դրութիւնը. նա ներբռում է հարազատ ժողովրդի վերածնութեան մեծ գործին. խորապէս զիտակցում է աղդային պետականութեան անհրաժեշտութիւնը նրա համար, բայց և հրաժարում է նրա համար պայքար մզելուց: Քարոզում է աղդային-մշակութային վերածնութիւն, բայց կասկածում է նրա յաջողութեան մասին: Նա իր բազմաթիւ նամակներում մի տիտուր չեշտ ունի հայութեան ապազայինկատմամբ:

Այսպէս, ուրեմն, Նազարեանը տարբերեց աղջը կրօնից, ազգութիւնը դառնում է մշակութային գաղափար. սա մեր հասարակական մտքի զարգացման աւելի բարձր աստիճանն է. ազգային — կրօնականից հայութիւնն անցնում էր աղգային — մշակութականին, սա Նազարեանի գործն էր սուաւելապէս:

Այլ է բնոյթը Նալբանդեանի պատմահայեցողութեան: Նրա ուսուցիչները և բարեկամները եղել են ուսու մտաւորականութիւնից լաւագոյնները, ուստի և նա աւելի արմատական է, աւելի յեղափոխական: Նալբանդեանի համար ազգութիւնը հզօր, ինքնապաշտպանութեան միջոց է, բայց այդ քիչ է. նա ինքը՝ աղդային մշակոյթը այլ դործոնների կարիք ունի: Մշակութային ազգութիւնը միշտ վտանգի ենթակայ է, եթէ չունենայ հայրենիք, ահա Նալբանդեանի քաղաքական մտածողութեան միջուկը: Սակայն, ազգութիւնը նրա համար պատմական երևոյթ է, նա կապւած է ժամանակակից պետութիւնների ծագման ու զարգացման հետ: «Եթէ ներկայ եղած պետական

համակարգութիւնը ոչնչանան, վաղը ոչ միայն չի մնում ազգութեան խնդիրքը, այլ հարկաւոր ևս չէ», բայց մինչև այդ «արքայութիւնն Աստուծոյ բոնաբարի և բուռնք յափշտակեն զնա»: «Մենք ուրախ չենք, ասում է նա, որ այդպէս է լինում, ուրախ չենք, որ մի ազգ ճնշում, հարստահարում է մի ուրիշ ազդը»:

Նալբանդեանի ազգութեան տեսութեան վրա պէտք է քիչ աւելի կանգ առնել, որովհետեւ նա եղակի է մեր հասարակական մտքի պատմութեան մէջ. թերեւ նրա տեսակիցներին մօտ լինի մարք-սիստական պատմահայեցողութիւնը՝ ազգութեան խնդրի վերաբերմամբ: «Ազգութիւնը, իրրե պատմական իրողութիւն, իրրե հաւաստի երկոյթ ընդհանուր մարդկութեան կեանքի մէջ, ասում է Նալբանդեանը, չի կարելի մերժել, թէկ բանականութիւնը երեք չի կարող արդարացնել նրան: Մարդը մինչև այժմ չի հասել այնտեղ, որ առանց երկրորդական ու պաշտօնական անունների հանդէս գայ միայն մարդու բնական անունով. մինչև այժմ մարդ չկայ աշխարհի երեսին, մինչև այժմ ազգեր կան»: Այս մի քանի տողերի մէջ խտացւած են Նալբանդեանի հիմնական սկզբունքները ազգութեան մասին. ըստ այսմ, նրա հիմնական պնդումներն են հետեւեալ կէտերը. առաջին. ազգութիւնը պատմական գաղափար է՝ կապւած ժամանակակից պետական համակարգութեանց հետ: Երկրորդ. թէպետ նա փաստ է, իրողութիւն, սակայն բանականութիւնը չի կարող արդարացնել նրան, ասել է, որ նա մարդկութեան զարգացման մի աւելորդ ձեւն է, ուրեմն կը գայ ժամանակ, որ նա

կը վերանայ, և «բանականութիւնը» իրականութեան հետ հակադրութեան մէջ չի լինի: Երբորդ՝ մարդը պիտի հանդէս դայ, որպէս մարդ, առանց աղդային պատկանելիութեան:

Այս երեք հարցերն էլ չափազանց լուրջ, սկզբունքային հարցեր են, մահաւանդ որ նրա արտայատում Մ. Նալբանդեանն է, որը պատահականութիւն չէ մեր հասարակական կեանքում, այլ հայութեան ընկերային-քաղաքական մտքի ամենահետաքրքրական դէմքերից մէկը: Հէնց այդ հանդամանքը թելադրում է կանդ առնել նրա տեսակէտների քննութեան վրա:

Հատ Նալբանդեանի, աղդութիւնը ժամանակակից պետութեան հետ է ծագել, նրա հետ էլ կը վերանայ: Ժամանակակից ընկերային գիտութիւնները ընդունում են, որ աղդային-մշակութային հաւաքականութիւնը և նրա գիտակցութիւնը վառ է եղել ժողովուրդների մէջ թէ հին և թէ միջին դարերում, միայն թէ նա ընդուրկել է աւելի նեղ շրջանակ՝ մտաւորական և վարիչ-իշխան դասը: Նոր դարերում աղդութիւնը, աստիճանաբար, թէ որպէս որակ և թէ որպէս քանակ, ուժեղանում է, երեան է գալիս ցայտուն, գունեղ՝ շնորհիւ արդի պետականութեան ու գրամատիրական հանրակարդի ընձեռած դիւրութիւններին: Մենք տեսնում ենք, թէ ինչպէս պետութիւնների հին համակարգութիւնները աստիճանաբար ոչնչանում են, բայց ոչ մի նշան չկայ, թէ աղդութիւնները կորչելու են նբանց հետ: Ընդհակառակը, վերածնուղ աղդութիւններն իրենք են նպաստում հին պետական համակարգութեանց անկման—հեռաւոր

անցեալում՝ Բիւզանդիոնի, Հարսիրուրդեան և Նապոլէոնի կայսրութեանց, մեր օրերում՝ Ռուսաստանի, Թիւրքիայի, Աւստրօ-Հունգարական կայսրութեանց: Եւ այս կատարւում է յանուն նոյն աղդային սկզբունքի հաստատման: Հին պետութիւնները կամ միլում են՝ տեղի տալով նորերին, կամ ենթարկում են բնաշրջման, ինչպէս Անգլիան, որ աստիճանաբար դիմում է դէպի համագանակցութիւնիր գաղութների հետ: Եւ այդ գարդացման մէջ աղդութիւնները ոչ թէ մեռնում են, այլ, ընդհակառակը, ապրում առանձին ու կատարելագործում են. ցեղերը աղդ են դառնում, աղդերը ստեղծում են պետութիւն: Ճիշտ է, պետութիւնների համակարգութիւնը ընկնում է, սակայն, ստեղծում է պետութիւնների նոր համակարգութիւն՝ աղդային սկզբունքի հիման վրա: Պետութիւնն էլ չի ոչնչանում: Մարքսիստական այլ տեսակէտը արդէն համարւում է հնացած ուսումունք: Պետութիւնը փոխում է, յարմարում է կեանքի նոր պահանջներին, նոր իմաստ է առնում, աստիճանաբար կորցնում է տիրական տարրը և ստանում վարչական բնոյք: Նա դառնում է ազգային մշակոյքի ուամկավարացման գործիք:

Այս է նոր պատմութեան ընթացքը: Աղդերը 19-րդ դարի սկզբում աւելի շատ էին, քան 18-րդ դարի սկզբում, և հիմա աւելի շատ են, քան 19-րդ դարի սկզբում, և հարիւր տարի յետոյ աւելի շատ են լինելու, քան այժմ: Նոյնը և պետութիւններն են: Նալբանդեանը դրամատիրական քաղաքակրթութեան, «ներկայ եղած պետական համակարգութեանց» դէմ է և ոչ թէ, ընդհանրա-

պէս, քաղաքակրթութեան. իսկ աղդութիւնը, նրա կարծիքով, այդ համակարգութեան ստեղծածն է, ուրեմն, դէմ է և աղդութեան: Սակայն, նրա սխալն այն է, որ գրամատիրական հանրակարգի, պետական այսօրւայ համակարգութեան և աղդութեան մէջ գրեց ծագման, զարգացման ու վախճանի գուգահեռ, մի բան, որ մերժեց ժամանակակից պատմակրութիւնը և հասարակադիտականը: Պատմութիւնը չդնաց նալբանդեանի դժածողիով:

Կարո՞ղ է բանականութիւնը արդարացնել աղդութեան դոյցութիւնը: Արդի ընկերային միտքը այդ հարցին էլ տալիս է գրական պատասխան. աղդութեան դոյցութեան իմաստը մշակութային արժէքներ ստեղծելու մէջ է. աւելի ճիշտ՝ հէնց ինքը՝ աղդութիւնը այդ արժէքների մէջ է արտայալուում: Եթէ բանականութիւնը չի արդարացնում աղդութիւնը, ապա կամ պիտի մերժել մարդկային քաղաքակրթութիւնը, կամ ապացուցել, որ նա կարող է արտայալուել, զարգանալ աղդային շրջանակից դուրս: Նալբանդեանը չի ժխտում քաղաքակրթութիւնը, բայց հակառակն էլ չի ապացուցանում: Մարդկային քաղաքակրթութիւնը մինչեւ այժմ եղել է աղդային և զարգացել է նրա շրջանակում: Էլ աւելին, պատմութիւնը ժողովուրդների անհատականացումն է, աղդայնացումը:

Մարդկային քաղաքակրթութեան ստորին աստիճանների վրա թոյլ է հաւաքական անհատականութիւնը. պատմութիւնը աստիճանաբար զարգացնում է այդ հաւաքական անհատականութիւնները և արտայալուում այն աղդութիւնների մէջ:

Եւ որքան նոր ու նորագոյն գարերն ենք գալիս, այնքան մարդկային հաւաքականութիւնը անհատականանում է, աղդայնանում: «Եւ ինչքան կը բարձրանայ քաղաքակրթութեան աստիճանը և ինչքան երկար կապրի ու կաշխատի ժողովուրդը, այնքան շատ կը զիգուեն նիւթական, հողեկան այդ աղդային գանձերը՝ քաղաքներ, տաճարներ, պալատներ, ջրանցքներ, արձան ու նկար, արհեստ ու արւեստ, գիտութիւն ու փիլիսոփայութիւն. Կը նըրանայ ու կը հարստանայ լեզուն իր յատուկ ձամբովը... Աւրիշ խօսքով, մարդկութեան քաղաքակրթութեան զարգացման հետ աղդութիւնն ու աղդայինը ոչ թէ կը թուլանայ, կը հիծուի, կը մեռնի, այլ, ընդհակառակը, քաղաքակրթուելը և միշտ բարձր ձգտելը ամենէն հիմնական պայմանն է աղդութիւններու զարգացման, աղդային գծերու ուժեցման և իր անկախութեան գնահատումին...» (Շանթ):

Եւ պատմութեան ընթացքը բնաւ չի ուսուցանում, թէ աղդութիւնները դալիք հանրակարգում պէտք է վերանան, իսպառ ոչնչանան: Ընդհակառակը, պատմութեան ընթացքը տանում է դէպի նոր աղդութիւնների ստեղծումը, և ժամանակակից հասարակական միտքն էլ որոնում է լաւագոյն ձևեր՝ աղդային հարցի լուծման համար: Աղդութիւնը նիւթական ու հոգեկան մշակոյթի միակ շրջանակն է. աղդ և մշակոյթ նոյնանիշ գաղափարներ են: Եւ մեր բանականութիւնը ոչ միայն արդարացնում է աղդութեան դոյցութիւնը, այլև ձգտում է զարգացնել և ուժացնել այն, զարձնել «հասարակի», ուամիկի սեփականութիւնը: Եւ զար-

մանալի կը լինէր, եթէ բանականութիւնը չարդարացնէր ազգութեան գոյութիւնը. ինչպէ՞ս է, որ դարեր չարտանակ նա զարդացել է, խորացել, աւելի ամուր հիմքեր բոնել, ժողովրդի սեփականութիւնը դարձել և կատարել է հակառակ բանականութեան, այսինքն՝ ճակատագրական կերպով, անկախ մարդկային կամքից: Այդ, ի հարկէ, սխալ է: Ազգութեան զարդացման գործում չափազանց խոշոր ազգակ է մարդկային, ենթակայական կամքը. մեր բաղդանքները, քարոզութիւնը, տպագրութիւնը, կենդանի գործը: Սրանք շատ մեծ գործօն են ազգութեան ստեղծման, զարդացման և ազգային հարցի այս կամ այն ձեփ լուծման մէջ: Եթէ նա մարդկային բնաշըման մի աւելորդ ձեւը լինէր, վաղուց արդէն կը լինէր ոչնչացած և կորած պատմութեան բեմից:

Նոյնը պէտք է ասել նաև անհատի ու ազգութեան յարաբերութեան մասին. «մինչեւ այժմ մարդ չկայ աշխարհի երեսին, մինչեւ այժմ ազգեր կան»: Անհատականութեան արժէքը, ճիշտ է, վեր է ազգային պատկանելիութիւնից. նա արժէքաւորում է հէնց նրանով, որ անհատ է, առանց այլ ածականների: Սակայն, ինդիրն այդ չէ, այլ այն, որ արդեօք կարելի՞ է անհատը պատկերացնել ազգային շրջանակից գուրս, դրական, խրախուսելի քա՞յլ է անհատը պոկել իր ազգութեան սահմանից: Այս հարցի պատասխանը նալբանդեանը տալիս է՝ ելակէտ ունենալով իր սկզբունքը, թէ ազգութիւնը անցողիկ երեսոյթ է: Սակայն, մենք տեսանք նրա սխալը: Անհատը գուրս չէ հասարակական կեանքից, այլ միայն նրա չնորհիւ դառնում

է անհատ: Իսկ հասարակական կեանքը, ոչ այլ ինչ է, եթէ ոչ ազգային կեանք. անհատը ազգութիւնից գուրս պատկերացնել չի կարելի. այդ այն բնական միջավայրն է, որ անհրաժեշտ է նրա կատարեալ դարձացման համար: «Անհատը իր ազգէն կտրւած նոյնն է, ինչ՝ բառը/նախադասութենէն գուրս՝ ան՝ գեր չունի... Անհատի ծագումն ու ստացած ժառանգութիւնը, ծծած կաթն ու կըրթութիւնը, անհատի ընտանիքին ու կեանքին մէջ ունեցած գիրքը, տաղանդն ու ստեղծագործական ոլոքը, կատարած գործն ու գործին ակականութիւնը, այս բոլորը ազգային սեփականութիւնն է, դարեւոր աշխատանքի ու երկար սերունդներու ապրումով ձեռք բերած արդիւնք և հետեւանք. անհատը բողոք մըն է, ծաղիկ մը՝ ծլած այդ ծառին» (Յանթ): Ազգութեան սահմաններից դուրս անհատը ապրել չի կարող. նա պիտի մերւի մի ազգութեան մէջ, որովհետև՝ հասարակութիւն՝ առանց ազգութեան՝ չկայ: Իսկ այս ձուլումը դէմ է արդարութեան. «Է Աստուծոյ կամքին», ինչպէս ասում էր Նազարեանը:

Այսպէս է Նալբանդեանը իր տեսութեան մէջ, սակայն, ինչպէս ինքն էլ ընդունում է, ազգութեան գոյութիւնը փաստ է: ուրեմն, ի՞նչու վարել նրա հետ. մինչեւ նրա վերջնական վախճանը նա դառնում է դործնական քաղաքականութեան նիւթ: Դրա համար անհրաժեշտ է, որ ամէն ազգութիւն ունենայ իր հայրենիքը, «ձեռք բերի մի կտոր հող», ունենայ տնտեսական անկախութիւն: «Ազգութեան անդամքը պիտի ապահովեն իրենց ապրուստը, որպէսզի գերի և ստրուկ չը լինեն

ուրիշն: Եթէ ազգութեան ներքին ու էական խորհութեանը չէ տնտեսական անկախութիւնը, անհիմն է այդ ազգութիւնը, սուստ է այդ ազգութիւնը, և նա կը կործանւի»: Այսող ազգութեան ինձոփակութիւնը նոյնանում է ընկերային կնճիռը և նրանց յարաբերութիւնը լուծում է իւրայատուկ ձեռվ: Ազգութեան «խորհուրդը» դառնում է՝ ընկերային հարցի լուծումը: Պետականութեան վերագրելիք դործը վերագրում է ազգութեան: Այժմ ազգութեան ընկերային տարրի յարաբերութիւնը բոլորովին հակառակ ենք ըմբռնում: Ընկերային հարցի «խորհուրդը» դառնում է ազգութեան գոյութեան անհրաժեշտ գործօններից մէկը: Ազգութեան «ներքին ու էական» խնդիրը տնտեսականը չէ, բայց նա այն հիմքն է, առանց որի հնարաւոր չէ ազգային չէնքի կառուցումը: Այսքանով միշտ է Նալբանդեանը, և ժամանակակից ազգ-պետութիւնները մեծ ջանք են թափում՝ ստեղծելու այդ տնտեսական-նիթական պատւանդանը, անհատականաւ տնտեսութեան ասպարիզում:

Նալբանդիանն առաջինն է մեր հրապարակախոսներից, որ դնում է հայրենի հողի խնդիրը և ազգութիւնը յարակցում «մի կտոր հող ձեռք բնիլու հետ»: Ազգութիւնը առանց հայրենիքի ապագայ չունի: Աակայն, մեր մի կտոր հողը, «մեր հայրենիքը» ապատ չէ, նա ուրիշների հարստացարութեան նիւթ է, «մեր թշնամուց ոտնակոր» ինչպէս վարել այդ գէպքում... Համաձայն իր ուսմունքի, «հայրենիքը» պէտք է ապատագրել. ապատութիւնը մարդկային բարիքներից մեծագոյնն է, ուստի ապատ պիտի լինի և անհատը, և

ազգն ու հայրենիքը: Ազգութիւնը պէտք է հայրենի հողն ունենայ և ձեւառուի որպէս ուրոյն միութիւն: Այսպիսով կայ նպատակը, միջոցն է՝ «իր քաջ որդոց սուրբ արիւնով»: Նալբանդեանի մօտ մէնք նկատում ենք, ուրեմն, և՛ նպատակը՝ հայրենիքի գրաւումն ու ագատելը, և՛ միջոցը՝ դէնքի ու արիւնի պայտքարը: Ազգութիւնը պէտք է ամփոփի, տեղաւորւի հայրենիքում. այսուղ պիտի ապահովին ազգութեան անդամների և ընկերային ու մշակութային կարիքները, «որպէսզի գերի ու ստրուկ չլինի ուրիշներին»: Այլապէս, կը կործանւի այդ ազգութիւնը, այսինքն՝ անհայրենիք, և ամիւռոս աշխարհի ցրւած՝ կը լուծի, կը կորչի այլ ազգերի մէջ:

Սակայն, ո՞ւր պէտք է որոնել այդ հայրենիքը. այդ հարցին 70-80 թւականների սերունդը պիտի պատասխանի աւելի պարզ ու մէկին, քան Նալբանդեանը: Բաւական է և այն, որ նա ազգութիւնը կապեց հայրենիքի հետ և մի քայլ առաջ տարաւ հայ քաղաքական մտածողութիւնը. դրա համար հայ առաջին յեղափոխականը արժանի է մեր խորին երախտագիտութեան: Նալբանդեանի համար ազգութիւնը մշակութային ըմբռնում էր, որ կառող է գոյութիւն ունենալ և առանց հայրենիքի. Նալբանդեանը ազգութիւնը կապում է հայրենիքի հետ: Նալբանդեանը հայրենիքի պահանջը դնելով և լուծման ձևն առաջարկելով՝ գառնում է յեղափոխական. Նալբանդեանը խաղաղ, մշակութային դարբացման ջատապով է, մի կատարեալ բարենորդիչ: Նա յեղափոխութեան, ապատամբութեան հարց չի յարուցանում, որովհետեւ հայրենիքի

պահանջ չունի և չի էլ որոշում, թէ հայկական մշակոյթը ինչ իրաւական շրջանակում է զարգանալու: Անդամ մշակութային ինքնավարութեան պահանջ չի անում, թերևս բաւարարուում է «Պոլոտենիայի» ընդդած սահմաններով: Սակայն, նա աղգութիւնը բաժանեց եկեղեցուց: Նալրանդեանի յեղափոխական-քաղաքական միտքը տեղի հեռատես էր, քան նազարեանը, որով և դարձաւ հայոց յեղափոխական պատմութեան կերտողներից մէկը: Նրա «աղատ հայրենիքը» մտաւ Հ.Յ.Դաշնակցութեան ծրագրի մէջ, որպէս հայի քաղաքական մեծագոյն իդէալը: Նրա հայրենիքի աղատը մանական եղանակը գտաւ տաղանտաւոր հետեւող՝ Բաֆֆիին, ապա դարձաւ իրականութիւն հայկական յեղափոխութեան մէջ:

## V

## ԹԻՒՐԳԱՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԸ

Հայկորդ դարի 40-60 թւականներին վերածնութեան մինչուանը է սկսում նաև թիւրքահայութեան մէջ: Դարձեալ երոպական քաղաքակրթութիւնն է, որ աղգային գիտակցութեան է կանչում հայ նոր ստեղծւող մտաւորականութեան և հասարակական գործի ասպարէզ մղում: Տաճակահայ երիտասարդութիւնը իր կրթութիւնը ստանում է Ֆրանսիայում, գլխաւորապէս Փարիզում: Դաստիարակւում է ժամանակի ռամկավարական գաղափարներով, որոնք առաջադրուում էին 1848թ. յեղափոխութեամբ: Փետրարեան յեղափոխութիւնից քիչ յետոյ Լամարտինը գիմում է հայ ուսանողութեան հետեւեալ խօսքերով. «Փրանսական հանրապետութիւնը իր հոգացողութեան նիւթ է դարձրել արևելքի վերածնութեան մեծ խնդիրը: Սաղմերը արևելքան աղգայնութեան, որի ամենակենսուակ ճիւղերից մէկն էք դուք, զարգանում են Ֆրանսիայում»: Ֆրանսիան արևելքի վերած-

ծնութեամբ քիչ զբաղւեց, բայց ճիշտ է, որ թիւրքահայ ազգայնութեան սաղմերը ուռճանում էին Թրանսիայում ու պիտի պառւղ տային հայրենիքում:

Ի՞նչն է հայ մտաւորականութեան հողացողութեան առարկան: Օսեանը դրում էր այդ մասին. «ընդունայն ճշնի մարդ ճողովրել ազգին ազգեցութենէն... Եւ ազգը առաջին լառն էր, որ արտասահեցին Պալեան ու Ռուսինեան, երբ միացան սոյն տողերիս դրովին հետ»: 40–60 թւականներին տաճկահայ մտաւորականութիւնն ապրում էր աղջութեան դադավարով. մի կողմից ձգտում էր այն սահմանել և զատել գաւանանքից, կրօնից, միւս կողմից մտահոգւած էր նրան պաշտպանելու միջոցներ որոնելով: Ազգային դարթօնքը, որ սկսել էր արևելեան ժողովուրդների մէջ, նոր չունչ է տալիս և հայ մտաւորականութեան. «Ռուսիա՝ ուռւերէն կը խօսին, Պարսկաստան՝ պարսկերէն, Թիւրքիա՝ տաճկերէն»: Ուրեմն՝ սրանից բղխում է, հայն էլ պիտի ջանայ խօսել հայերէն: Լեզւի, աղգային լեզւի խնդիրն է, որ դրւում է հրապարակի վրա: «5–6 անարիէ ի վեր շնորհիւ մի բաւու հայ մտաւորականներու վարժարաններ կը հիմնեին, և հայ աշակերտները հայերէն դուել-կարգալ ու խօսիլ սպորեցնելու կաշխատեն»: Գրում է «Հայաստան» թերթը 1846թ.:

Հայութիւնը պիտի վերածնեի, լեզւի հարցը այդ ընդհանուր վերապարթօնքի մի մասն է: Անհրաժեշտ է նորոգումն ոտից մինչև գլուխ: «Արթնացիր, Հայոց ազգ, այդ մահահրաւէր տղիտութեան թմրութենէն... Ուրիշ լուսաւոր աղքերէն

օրինակ առ: Դպրատուները պայծառ պահելու ջանք ըրէ, հայկական լեզուն աղէկ մշակէ, օգտակար լեզուներ ու ազատական դիտութիւններ ուսանելու հետեւք... Ասոնցմով միայն կարող կը լաս երջանկութեան վախճանը հասնիլ»: Այսպիսով՝ դպրոցը, լեզուն և գիտութիւնը — ահա այն միջոցները, որոնք առաջարկուում են տաճկահայ մտաւորականութեան կողմից, որպէս ազգութեան պահպանման ու զարգացման միջոցներ: Տաճկահայութիւնը թեւակոխում է իր զարգացման մշակութային ազգութեան շրջանը:

Այստեղ էլ կրկնում է նոյնը, ինչ որ ոռւսահայութեան մէջ: 1859 թ. «Մասիս»-ում հրատարակում է և. Միսաքեանցի յօդւածաշարքը «Քաղաքակրթութեան առեղծուածը» խորագրով, ուր հեղինակը խօսում է և աղգային հարցի մասին: Նա չեշտում է լեզւի, դրականութեան և պատմութեան վրա, որպէս աղդութեան զարգացման կարեւոր, անհրաժեշտ տարրերի: Ոչ մի հալածանք չի կարող ջլատել ազգի ինքնուրոյնութիւնը, եթէ նա ներքնապէս ընդունակ է ապրելու: Եւ եղբակացնում է. «Հայոց մէջ ալ պէտք է, որ իմացական մարդը քիչ մը խլբախ, շարժի ու առաջ երթայ... Աղէկ դիտնանք, որ ազգային շարժման թափ տուղը տպագրութիւնն է», դրականութիւնը: «Արիւնախանձ տղիտութիւնը» պէտք է հալածել, «դարսուս ողիին» պէտք է հետեւէլ, տղիտութիւնը «անդութ բռնաւոր է, որի լուծին տակ կը հեծձէ Հայաստան»: Եւրոպական լուսաւորութիւնը՝ «բախտաւոր ժպիտ, բարի պատեհ ժամ»: Եւ Հայաստանը պէտք է «կանաչաղեղ զարդարէ»

բնութեան այս հրաշալի գետերէն ջուր խմող հրաշալի դաշտերը»:

Գաղափարներ քիչ կան ժամանակի հրապարականութեան մէջ և եղածն էլ ձևակերպւած անորոշ ու անբաւարար, զգացումների գեղումն անսահման է: Սակայն, մէծ մրափից յետոյ մի ձիգ է նկատում, մի թռիչք՝ ընդհանուր վաղքից յետ չմնալու, հասնելու առաջիններին, դասելու նրանց շարքը: Եւ ազգասիրութիւնը, հայրենիքի վերաշինութիւնը մշակութային-կրթական միջոցներով՝ դառնում է ժամանակի իշխող գաղափարը: Ի՞նչո՞ւ է լուծում ազգութեան և կրօնի յարարերութիւնը թիւրքահայ մտաւրականութիւնը, մի դործնական հարց, որ կանդնած էր և ոռւսահայ մտաւրականութեան առջև: Սերվիչէն ազգային ժողովում այսպէս էր գծում Ազգային Սահմանադրութեան ոգին և դործունէութեան ուղղութիւնը. «մենք պաշտօն ունենք ոչ միայն ի նախնաց մեղի աւանդւած կրօնքս պաշտպանել, այլև ամէն պարագայի մէջ բոլոր խնդիրները միենոյն նպատակին ծառայել տալ. այն է՝ ազգային ոգույն դարգացումը, ոգի մը, որ միս մենակ միջոց է աղդը կենդանացնելու և զոր պիտի աշխատինք համաձայնեցնել տալու նախ դարոյս ոգուն ու ընթացքին հետ...» Սա մի ամբողջ ծրագիր է. աղդ-կրօնական հարցը լուծում է Նազարեանի ձևով. կրօնը այլ է՝ «ի նախնեաց մեղի աւանդած», ազգութիւնը՝ այլ: Եւ ամէն ինչ, բոլոր ձեռնարկութիւնները պէտք է ծառայեն նրա զարգացման: «Ազգային ոգին» դառնում է մի հզօր, եթէ կուզէք, «նիւթական ոյժ» ազգը կենդանացնելու: Հայու-

թիւնը մենակ չէ այդ դործում. նրա հասունութիւնը այն աստիճան է, որ միայն ընդօրինակում է: «Դարի ոգին» մշակուում էր եւրոպայում, ուր ազգերի միացման ու ազգատաղբման գործը հսկայ քայլերով առաջ էր դնում: Յունաստանն ազատագրւած էր, Գերմանիան իրական ճիզեր էր անում ստեղծելու միացեալ Գերմանիա. ծւէն-ծւէն եզած իտալիան ջանում էր ստեղծելու միացեալ ու անկախ իտալիա: Եւ ահա այդ «գարու ոգուն ու ընթացքին» հետ էր, որ ուզում էր զուգահեռ քայլել տաճկահայ մտաւրականութիւնը:

Նա զեռ չէ դիմում յունական-իտալական աղդերի ազգատաղբական միջոցներին, և Կ.Պօլսի հայ մտաւրականութիւնը ընդհանրապէս չի էլ դիմելու այդ գործելակերպին: Դրա համար պէտք է առաջ դար ուրիշ սերունդ, ծովափնեայ քաղաքներից, Կ. Պօլսից զուրս, բուն երկրում, ուր քիւրդն ու թիւրքը հայ գիւղացու համար դժոխք էին ստեղծել:

Կրօնի և ազգութեան հարցը այսպէս լուծելուց յետոյ, բնական է, ժամանակի մտաւրականութիւնը «ազգի պառակտումը» ըստ գաւանանքի պիտի համարէր ազգակրծան, ուժերը ջլատող, վասնպաւոր երևոյթ: Ազգութեան ստեղծելու զործում ոչ թէ ուժերի ցրումն է հարկաւոր, այլ կենարոնացումը: Յ. Ուսկան «Մասիս»-ի մէջ գրում էր. «Հայ ազգի եղբայրքը տարագիր լինելու չափ իրարու կը խորչին». ապա՝ «այժմ ժողովուրդը կուզէ հաւատ առանց գիւղութեան, ազգութիւն առանց խտրութեան, դաստիարակութիւն առանց մոլեռանդութեան»: «Ազգութիւն առանց խտրութեան»:

քարոզում էր և՝ Նաղարեանը։ Այս դաշտափարները, որ էութիւնն էին կազմում հայոց նոր մտաւորականութեան, ցնցում են առաջ բերում թիւրքահայ լճացած միջավայրում։ Սկսում է նոյն հալածաննքը ամիրայութեան և հոգևորականութեան կողմից հայ մտաւորականութեան գէմ։ Եւ նոյն Ռոկանը էուչ է անում հոգեսրին՝ թողնել տղիտութիւնը «և փոխանակ քո մէջդէ եղող քանի մը ուսեալները ի զուր իբրև անհաւատ բամբասելու, նախ զանոնք քեզի ուսուցիչ կարգէ»։

70-կան թւականների սկզբներին դաւանական խնդիրը արդէն մեզմացել էր. առաջ էր եկել մտաւորականութեան մի մեծ խումբ, որ ազգը վեր էր դասում ամէն կրօնքից ու դաւանանքից և հնչեցնում էր ընդհանուր գործի՝ հայրենի վերաշխութեան ու եղբայրութեան խոռը։

Այս տրամադրութեան արտայատիչը Մ. Պէշիկթաշեանն է. —

Տուր ինձ քո ձեռքդ, եղբայր եմք մեֆ,  
Որ մբրկաւ էինք զատած.  
Բախտին ամէն ոյն չարանենք  
Ի մի համբոյր ցրւին ի բաց...

Մէկ տեղ լացինք մեք ի հնում,  
Նկէք, դարձեալ յար, անբաժան,  
Խառնենք գարտօսր և զինդում,  
Որ բազմարդիւն ըլլայ մեր զան։

Երբ ալեսր Մայր Հայաստան  
Տեսնու գորդիք իւր քովի քով,  
Սրտին խորունկ վերքն դաժան  
Քաղցր արտասաւաց բուժին ցողով։

Այսպէս է լուծում ազգ-կրօնական խնդիրը թիւրքահայ լաւագոյն մտաւորականութիւնը. ազգութիւնը նրա համար պատմա-մշակութային գաղափար է։ Նա անջատւել է, ազատագրւել կրօնական տարբերից։ Բայց զա քիչ էր. ի՞նչ միջոցներով պէտք է օժաւած լինի ազգութիւնը՝ ինքնապաշտպանութեան համար։ Եւրոպայի պատմութիւնը ցոյց էր տալիս այդ. ինքնազիտակցութեան հասած ազգերը գգտում էին կաղապարւել որպէս ուրոյն պետականութիւն։ Այդ պետականութեան հասնելու միջոցն էր՝ ապատամբութիւնը, կոիւը։ Ա'րդ, թիւրքահայ մտաւորականութիւնը ուրոյն քաղաքական իդէալ ունէ՞ր, թէ հայութեան ապագան նա որոնում էր Թիւրքիոյ սահմաններում։

Տեսանք, որ ուսամահայ հասարակական միտքը այդ հարցին երկու պատասխան տւեց։ Նազարեանը «ուսւ քաղաքացի» էր. Նալբանդեանը հայութեան քաղաքական կեանքը չէր որոնում ոչ Տաճկաստանի, ոչ էլ Ռուսաստանի սահմաններում։ Հայրենիքը պէտք է լինի ազատ իր թշնամիներից։ 40-60թ. Պօլսահայ մտաւորականութիւնը ուրոյն քաղաքական իդէալ չի սնուցանում. նա օսմաննեան պետութեան քաղաքացի է, բայց հայ ազգութեան անդամ։ Ազգը և պետութիւնը, ըստ այդ մտաւորականութեան, բաժանւում են իրարից. պետութիւնը և քաղաքականութիւն վարելը ուրիշինն է, ազգութիւնը՝ իրենը։ Գեռ երկար պէտք էր սպասել, մինչև որ հայ քաղաքական միտքը ազգութիւնը ըլրունէր քաղաքականօրէն և պետութիւնն ու ազգութիւնը ոչ քէ հակառիւէր, այլ առաջինը

համարւէր այն միակ՝ իրական միջոցը, որով կարելի է ապահովել ազգութեան գոյութիւնը:

Սերվիչէն վերև բերւած իր ճառի շարունակութեան մէջ ասում է. «Համաձայնեցնել մեր դործը՝ ազգային ողու կենդանացումը՝ մեր բարեխնամ տէրութեան հանդէպ ունեցած ազգային պարտաւորութիւններուս հետ՝ օտար միջամտութիւններ չընդունելով»: Օտար միջամտութիւնները բախտորոշ դեր են խաղացել թիւրքիոյ կեանքում: Այժմ Պօլսոյ մտաւորականութիւնը, որ կարծում էր, թէ Ազգային Սահմանադրութեամբ լուծում է դարերի հարցը, հրաժարում է օտար միջամտութիւնից և դառնում է օսմանեան քաղաքացի, թէ կուպ և երկրորդական կարգի: Մեծ են ու անկեղծ «վեհափառ սուլթանին օգոստափառ անձին ու անոր կառավարութեան համար, հայոց ազգին ունեցած զգացումները»: Սուլթանը կը գնահատէ՝ հայոց ազգի հաւատարմութիւնը, յայտարարում է այդ մասին նա պատրիարքին, և ահա ահազին իրարանցում. Պատրիարքը յատուկ կոնդակ է սոսուագում, Կ.Պօլսի եկեղեցիններում պատարագ մտառցանում, իսկ Պօլսահայ թերթերը արձագանքում են. «անպատճելի ուրախութիւն պատճառեց ժողովրդեան և հանդիսաւոր ջերմեռանդ բարեմաղթութիւններ վասն սահպանութեան՝ անզին կենաց մեր արդարասէր ինքնակալին, որում հայրախնամ կառավարութիւնն այսչափ գութ և սէր կը ցուցնէ Հայոց Ազգին վրա»... Եւ շատ բնական է, որ այսչափ «գութ ու սէր» տեսնող մտաւորականութիւնը չէր կարող հայկական ուրոյն քաղաքական իդէալի մասին մտածել: Նա կիսատ էր

ընդօրինակում եւրոպական ազգերի ազատագրման փորձը:

Այսպիսով, պօլսահայ մտաւորականութիւնը բոնեց մշակութային վերածնութեան ուղին և միշտ կանդնած մնաց այդ գծի վրա: Նա կարւած էր բուն հայկական միջավայրից, արտայայտիչը չէր նրա տառապանքների և չէր մշակում համապատասխան գործելակերպ: Նա վայելում էր Պօլսին ու ծովեկերեայ քաղաքներին չնորհւած համեմատական անդորրութիւն ու ազատութիւն. ազատ էր բիրտ միջամտութիւններից: Սրանով է բացատրում և պօլսահայ մտաւորականութեան կրաւորական գիրքը հայկական դատի հանդէպ, այլև վայրկեանի հրամայական պահանջների չըմբընելլ:

Սրան հակառակը, երկու ձայն՝ հեռաւոր Վենետիկից և մոռացւած Հայկական Բարձրավանդակից այլ երգ էին հնչեցնում:

Եւրոպական ազգութեանց պայքարը ընդդէմ բոնացողների արձագանք է գտնում նաև Վենետիկի մենաստանում, և Հայր Ալիշանը՝ հայ լաւագոյն մտաւորականներից մէկը կոչ է անում ժողովրդին սթափել գարերի մրափից. —

Եի, սրափեաց, սրափեաց, ալէ՛, զարբի՛ր.

յուշ, յուշ, Քեզ, Հայաստան.

Նոր ժողովուրդի իվեր, իվեր ելցեն, իջցես

գու վայր ի վայր.

Նոքա տիարք ազատացեալք, գու եկդ ծառայ,

ստրուկ, գերի,

Աշխարհ ամէն երթեալ, գու յանմիքար,

համակեալ սուգ...

Փետրւարեան յեղափոխութեան ազդեցութեան  
տակ երգում էր Ալիշանը այս տողերը: Յեղափո-  
խութիւնը արձագանք գտաւ և իտալիայում.  
ստացաւ այստեղ ազդային-ազատագրական պայ-  
քարի բնոյթ: Ալիշանը հանդիսատես է այդ բոլո-  
րին գիտում է օտարի ազդային զարթօնքը և  
պայքարը, ազդում է իր ազդայինը, ոգեկոչում է  
նրան հետեւելու ճնշւած ազդերի օրինակին: Այս-  
քանը բաւական չէր. այդքան արձագանքում էր և  
կ. Պօլսի հայ մտաւորականութիւնը, որ նոյնպէս  
տեսել, ասլել էր փետրւարեան յեղափոխութիւնը:  
Ալիշանին յատկանչող այն էր, որ նա անբաւարար  
էր գտնում միայն խաղաղ միջոցները՝ դպրոց,  
մամուլ, գլականութիւն, եկեղեցի: Դրանք ան-  
հրաժեշտ են, բայց ամէն ինչ չեն: Կան և այլ  
միջոցներ: Ի զին, ի վրէժ է հրաւիրում նա «Հայ-  
րենավրէժ հայկազուններին», «արի արանց ման-  
կունքը»:

Ի զէ՞ն, ի վրէժ, օ՞ն, անդր, յառաջ.

Ի զէ՞ն, ի վրէժ, մի ձախ, մի յաշ:

Սա արդէն այլ երգ է, որ չէր հնչում Պօլսոյ  
գեղածիծաղ ափերին, բայց իրականութիւն էր  
Եւրոպայում:

Նոյն ժամանակներում, հեռաւոր Հայաստա-  
նում, Վանի խաղաղ ափերին լոելեայն իր հօտի  
ցաւերով այրում էր ու գործում 19-րդ դարի  
հայութեան մեծ ու տիպար դէմքերից մէկը՝  
Խրիմեանը: Հոգեորական չէր նա բառի առօրեայ,  
սոսկական իմաստով. աւելի շուտ մարդարէ էր  
հրէական տիպի՝ առաջնորդ իր ժողովրդի և

Ճշմարտութեան պատղամախօս: Նա ինքը խտաց-  
րած ժողովուրդն էր և իր գործը՝ աւելի քան ժո-  
ղովրդական-ուամկալարական: Ոչ միայն մտածո-  
ղութեան եղանակը, փիլիսոփայելը ուամկական էր,  
այլ և ազրելակերպը, յոյզերը և պահւածքը: Նա  
առաջին իսկ օրերից աւետում էր իր ժողովրդին՝

«Արեն քաղաքակրթութեան ի հորիզոն երկնից  
բարձրացաւ...», «Դէպի՛ երկիր, դէպի՛ երկիր»,  
«արթնացէ՛ք, հայկայ որդիք, արթնացէ՛ք»: Նրա  
ուամկական, բայց հանձարեղ չնչի ու գրչի տակ  
կենդանութիւն են ստանում հայոց դաշտերն ու  
լեռները, «Հին-հին դարուց յիշատակները», եր-  
բեմնի փառաւոր անցեալի նիւթական, աւել մնա-  
ցած հարստութեանց հետքերը՝ Անին, Դվինը,  
Տիգրանաշէն... Մարդարէն երկում է իր ժողո-  
վորդին ու ոգեկոչում. «մի՛ վհատիք, արևն  
քաղաքակրթութեան ի հորիզոն երկնից բարձրա-  
ցաւ... Զօրացիր դու, հայ հայկազուն, քաջազէն  
երիտասարդ, մի՛ վհատիր, զնա քո ճամբաղ, ուս-  
կից որ քո առաքինի նախնիքներդ անցած են, քեզի  
պէս՝ թշնամիներուն հետը կուելով. վազէ՛ դէպի  
Այրարատ, Վարդան Աւարայրի դաշտէն քեզ իրա-  
խոյս կը կարգայ... Սի՛րտ առ»:

Խրիմեանական նոյն ոգին, որ կաղապարւեց  
բուն ժողովրդի ծոցում, երկում է և ուրիշների  
մէջ, որոնք գործում էին երկրում՝ Հայկական  
Լեռնաստանում: Սրւանձտեանը տալիս է հոյակապ  
պատկերներ տաճկահայ իրականութեան, տառա-  
պանքի, զարհուրելի կարգերի, որոնց տակ ապ-  
րում էր հայութիւնը, ապա եղրակացնում՝ «Զի  
լանք, եղբայրներ, ափսոս են մեր աչքեր. թող

լան հին գլուխներ. էն դէն մի կոիւ կայ. կը լսէ՞ք  
ահաւոր ձայներ. ձայն արևմուտքից, ձայն հիւ-  
սիսից. մի՛, մի՛ սարսափէք, նոքա մեզ քաջութիւն  
թող տան... Աշխատանք, ուրեմն, կոիւ ու կոխ-  
ւիր, զարկ ու զարկւիր...» «Եթէ հայոց անմեղ  
ու անհամար երիտասարդաց արիւնով չոռոգւէին  
Հայաստանի դաշտերը, ուրտեղէ՞ն պիտի բունէր  
հայութան ազնիւ բողբոջներ...» (1862) :

Սա արդէն այն ձայնը չէ, որ Պօլսից էր գալիս:  
Ալիշան, Խրիմեան, Սրվանձտեան իրենց գործելա-  
կերպով ժիտում են պօլսահայ մտաւորականու-  
թեան ընձեռած միջոցները: Ալիշանը յեղափոխա-  
կան է դառնում եւրոպական ազգերի, յատկապէս,  
իտալիայի ազատագրական շարժման տպաւորու-  
թեան տակ, Խրիմեանն ու Սրվանձտեանը յեղափո-  
խութեան ուղին են բոնում թիւրքահայ նահանգ-  
ներում տեղի ունեցող հարստահարութեանց, իրա-  
ւազրկութեանց և բոնութեանց ազդեցութեան  
տակ: Այսպիսով թրքահայ մտաւորականութեան  
դեկավար շրջանակները մշակում են երկու գործե-  
լակերպ. խաղաղ, յառաջադիմական, որ ազգու-  
թեան ապագան տեսնում է մշակութային ինքնա-  
գործունեալութեան մէջ, ըմբռաստ-յեղափոխական, որ  
չմերժելով առաջինը՝ լրացնում է այն գործի  
յեղափոխութեամբ, ապստամբութեամբ:

Երկու գործելակերպի ներկայացուցիչները  
տարբեր էին ու իրար անհողարդակից թէ՛ ծագու-  
մով, թէ՛ գաստիարակութեամբ և թէ՛ հասարա-  
կական աշխատանքի միջավայրով: Գաւառը կարող  
էր ստեղծել միայն Խրիմեանին, Կ. Պօլիսը՝ Օտա-  
նեանին կամ Ռուսինեանին:

## VI

### Ա.ԶԳԻ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈՐՈՆՈՒՄԸ

70-80-կան թւականները կազմում են մեր  
պատմական-յեղափոխական կեանքի հետաքրքիր  
ըրջաններից մէկը. 1872 թ. Գրիգոր Արծրումին  
հրատարակում է «Մշակ»-ը, որ դառնում է հան-  
դիսավայրը հայ առաջաւոր և ազատախոհ մտա-  
ծողութեան: Երկու պատմական խոշոր փաստեր,  
տեղի ունեցած եւրոպայում և Ռուսատանում,  
խորապէս ազգում են հայ մտաւորականութեան  
մտքի և գործի վրա: 70-կան թւականների սկզբնե-  
րին տեղի է ունենում իտալիայի լիակատար միա-  
ցումը. «տիեզերական—յաւիտենական քաղաքը»  
դառնում է միացեալ ու անկախ իտալիայի մայ-  
րաքաղաքը: Այդ ժամանակներում է կատարում և  
գերմանիայի քաղաքական միացումը. գերման  
լաւագոյն մտածողների երազը գառնում է իրակա-  
նութիւն: Ազգային հարցը կենտրոնական Եւրոպա-  
յում լուծում է. այժմ շարժում են Բալկանեան  
ոլաւոնները. Յունաստանը ձգտում է ամբողջացնել,  
հաւաքել, եթէ ոչ իր պատմական, գէթ աղդագրա-

կան հողերը։ Ազգային շարժումը 70-կան թւականների կեսերից սկսում է Թիւրքիայ սամաններից ներս։ Շարժում է հայութիւնը այդ մեծ դէպքերի աղդեցութեան տակ և Հայաստանի ազատագրումը համարում է կենտրոնական հարցերից մէկը, որ ժամանակը դրել էր նրա առաջ։

Միւս աղդեցութիւնը գալիս էր Ռուսաստանից դարաշրջանի յուղով խնդիրն էր ոռու գիւղացիութեան գասակարգային և աղդային գիտակցութիւն տալը, Ռուսաստանի բախտը տնօրինող մի դործօն դարձնելը։ Ռուս մտաւորականութիւնը հերոսական գոհաբերութեամբ դէպի գիւղ էր դնում։

Երթ դէպի ժողովուրդը — ահա իշխող մտածողութիւնը 80-կան թւականներին։ Բերլինի ժողովից յետոյ այդ մեր կեանքում ձևաւորում է «դէպի երկիր» նշանաբանով։

Հայութեան հասարակական մտքի ղեկավարները այդ շրջանում Արծրունին ու Բաֆֆին են։ Քաղաքական-աղդային տեսակէտից Բաֆֆին աւելի աղդեցիկ է, ուստի և աւելի ժողովրդական։ Գր. Արծրունին հայ հրապարակախօսութեան այն դէմքերից է, որոնցից հայութիւնը շատ քիչ է ստեղծել։ 60-կան թւականին նա տևել էր Նալբանդեանին, 70-80թ։ Արծրունին, 90-կան թւականներին՝ Քրիստ. Միքայէլեանին, որոնք բոլորում են մեր հասարակական-քաղաքական մտքի տարրեր շրջանները։ «Հիւսիսափայլ», «Մշակ», «Դրշակ» — սրանք մեր քաղաքական մտքի այն օրդաններն են, որոնք ղեկավարել են հայ հասա-

րակական կարծիքը ու իրենց կնիքը դրել կեանքի ընթացքի վրա։ Մէկը ծնել է միւսը և պայմանաւորել իրենից առաջ ձևակերպւած գաղափարներով։

Գր. Արծրունին հրապարակախօս է եւրոպական խմասով՝ լուրջ գիտական պատրաստութեամբ և մեր կեանքի առանձնայատուկ պայմաններն ըմբռնելու կարողութեամբ։ Կենտրոնական հարցը այս շրջանում էլ հայոց աղդայնութեան հարցն էր. կը նշանակէ Ստ. Նազարեանի բանաձեւով խնդիրը լուծւած չէր տակաւին։ Նա չարմատացաւ, հանրային մտքի սեփականութիւն չը դարձաւ, ուստի և նորից քննութեան նիւթ է դառնում 70-80-կան թւականների հրապարակախօսութեան մէջ և լրացում ու ներդաշնակւում է։ «Ինչո՞վ կարող է մի աղդ մի ուրիշ աղդից ջոկել, որպէսպի պահպանի իր անհատական, աղդային զոյութիւնը, — հարցնում է Արծրունին և պատասխանում է։ «Կրօնով կամ աղդութեամբ։ առաջին միջոցը ջոկելու՝ տեսական չէ. կարելի է աղանդ մնալ, բայց կորցնել իր հայրենիքը, իր մայրենի լեզուն և այն ժամանակ ոչինչ չի մնայ, որ ջոկի այդ աղդը մի ուրիշ աղդից»։ Հայը կը լինի օք. Հնդկաստանում՝ Գրիգորեան աղանդի անդիմացի, Լէհաստանում՝ Գրիգորեան աղանդի լեհացի... Ահա որքան վտանգաւոր է հիմնել մի աղդի տարբերութիւնը մի ուրիշ աղդից միմիայն աղանդի զանաղանութեան վրա, առանց ջանալու պահպանել ու զարգացնել աղդի բուժ ազգային առանձնայակութիւնները, այսինքն՝ հայրենիքն ու մայրենի լեզուն։ Միայն աղդութիւն

դառնալով կարելի է մի ազգի համար ապահովել իր անհատական առանձնագույնութիւնը»:

Ուրեմն, «աղջութիւն դառնալ» նշանակում է զարգացնել այն յատկանշական կողմէրը՝ լեզու, դրականութիւն, արւեստ, սրոնցով ապարերւում է մի ազգ միւսից։ Հայութիւնը ազգ կը դառնայ եթէ աստիճանաբար կուտուրապէս անհատականանայ, բայց այդ ապահովել կարելի է միայն սեփական հայրենիքում։

Ահա, ուրեմն, աղջութիւն նշանները ըստ Արծրունու՝ հայրենիք և մշակոյթ։ Եւ իր իսկ ասելով՝ իր ամրող կեանքում նա քարոզել է հայերին աղանդի սկզբունքը թողնել, աղջութեան սկզբունքը իւրացնել — աղանդից ազգութիւն դառնալ։

Սա նոր գաղափար չէր։ Տեսանք, որ Նազարեանն էլ զրանով էր զրադում, աղջային-կրօնական շրջանից հայ միտքը անցնում էր աղջային-մշակութայինին։ ասել է թողնում էր աղանդի ըսկրդրունքը և թևակոխում «աղջութիւն» դառնալու ուղին։ Հայը՝ հայ է ոչ թէ նրա համար, որ քրիստոնեայ է, կամ հայ-լուսաւորչական եկեղեցու անդամ, այլ որովհետեւ պատկանում է ուրոյն մշակութային-աղջային միութեան, որ նրան գարձնում է եղակի, չկրկնուղ և ինքնատիպ։ Ուրեմն, նպաստել այդ մշակոյթի խորացման, կատարելութեան՝ կը նշանակէ՝ ճոխացնել, հարստացնել աղջութիւնը, զարձնել նրան իրօք եղակի, չկրկնուղ պատմական վիստ, անհատական մի երեսյթ համաշխարհային մշակոյթի պատմութեան մէջ։

Հայրենիքն ու լեզուն արդէն նախորդ սերուն-

դը համարում էր աղջութիւն բաղկացուցիչ տարրը։ Աբովեանը նոր լեզու ստեղծեց ու հիմնադիրն եղաւ նոր գրականութեան, Նալբանդեանը՝ հայրենիքի՝ «մի կտոր հողի» խնդիրն ուսումնասիրութեան նիւթ գարձրեց։ Նազարեանը ազգի հանդէսը բաժանեց կրօնի հանդիսից։ Սակայն, 80-կան թւականներին հարցը մի քիչ այլ ձևակերպում էր ստանում։ 60-կան թւականներին հայ միտքը ցոյց ըստ աւեց այն իրական միջոցները, որոնք անհրաժեշտ էին լեզւի, գլուխոցի, գրականութեան, ընդհանրապէս, «աղջային առանձնայաժկութիւնների» պաշտպանութեան համար։ Նալբանդեանի տուածպատասխանը տեսական էր։ Նազարեանը հայկական մշակոյթը չհիմնաւորեց նիւթականապէս, տնտեսապէս։ այդ շրջանում հայութեան մշակութային վերածնութեան վտանգ չէր սպառնում։ Ռուսական պետականութեան մեքենան, 70-90թ., աւելի կատարելազործել էր։ ոռուսական կեանքում՝ հանդէս էր եկել նոր գասակարգ՝ բուրժուազիան, որը օր աւուր մեծանում էր։ Նա կրթնել էր ոռւս պետականութեան վրա, ստեղծել յատուկ միջոցներ իրեն ընթացակից։ ոռւս մշակոյթը հսկայ քայլերով տարածում էր կայսրութեան բոլոր խոռոշականներում և ճանապարհ հարթում ոռուսական բուրժուազիայի և բիւրոկրատիայի համար։ Դարի առաջին կիսում տրամադար աղջային, կրօնական արտօնութիւնները կրճատում են, կամ յետ խըլում, կատարում է կենտրոնացում, հալածում են տեղականը, աղջայինը։ Ռուսական բարձր մշակոյթը՝ յենած պետական ամէն տեսակ օժանդակութիւնների վրա՝ մըցում է փոքր աղջերի մշա-

Կոյթների հետ, որոնք զուրկ են պետական մեքենայից, ինքնապաշտպանութեան այդ հզօր զէնքից: Ական 70-կան թւականներից՝ հայ մտաւորականութեան հոգացողութեան դլխաւոր ինդիբներից մէկն է՝ ինչպէս ապահովել Ռուսահայաստանում հայոց ազգային մշակութային գոյութիւնը. ի՞նչ միջոցներ են անհրաժեշտ քաղաքականապէս ոռւս գարձած հային՝ ազգովին հայ պահելու:

Հայոց եկեղեցու ինքնավար իրաւունքները դեռ մնում էին իրենց ուժի մէջ, թէև փորձեր էին լինում կրծատելու: Իրականութեան մէջ նա չէր կարողանում մրցել պետական ոռւսացման քաղաքականութեան հետ. նա հիմնում էր մի դպրոց, կառավարութիւնը տասնապատիկն էր հիմնում, որպէս ոռւսական մշակոյթի տարածողներ: Ո՞ւր կարող էր որոնել նոր միջոցներ. հայութեան աղդային գոյութեան մեծ վտանգ էր սպառնում: Ի՞նչպէս է լուծում հայ մշակոյթի այս ողբերգական երկնարանքը Գր. Արծրունին: Նա որոնում է հայութեան ազգային մարմնի մէջ մի դաս, որ նեցուկը հանդիսանայ պետականութիւնից զուրկ հայ մշակոյթին: Սա մի հետաքրքրական փորձ էր կապելու հայ մշակոյթի գատը հայ բուրժուազիայի հետ, որ, սակայն, արմատական լուծում չէր կարող լինել: Բայց ի՞նչ է ինքը հայ բուրժուազիան:

Նախորդ դարի 50-կան թւականներին մեր կեանքում ստեղծւում էր նոր դասակարգ՝ հայ բուրժուազիան, որ իր դրամագլուխը հաւաքել էր ոռւս-պարսկական ու ոռւս-տաճկական պատերազմներում և անդրկովկասեան ու ոռւսական շու-

կաներում: Նա հանդէս է գալիս որպէս առևտրական դաս, յատկապէս, Վրաստանում, ապա՝ 60-կան թւականներին իր դրամագլուխը գործադրում է Անդրկովկասի արդիւնաբերութեան մէջ և դառնում է նրա մեծագոյն ազդակներից մէկը: «Առևտրի և արդիւնաբերութեան մէջ հայ բուրժուազիան մնաց գերիշխող վիճակում» (Դ. Անանուն): Բայց հայ բուրժուազիայի զարգացումը հայութեան համար ունեցաւ ձախող հետևանքներ: Նրա տնտեսական հաւաքման և դրամագլուխի կենտրոնացման վայրեր հանդիսացան Թիֆլիսը, Բուգուն, ոռւսական քաղաքները — հայ բնաշխարհից գուրս: Հայ բուրժուազիան կենսականօրէն չհետաքրքրուց հայ գաւառով, առևտրա-արդիւնաբերական շահերը նրան կապեցին ոռւսական ներքին շուկաների, Անդրկովկասի այլ կենտրոնների հետ, անգամ հեռաւոր Անդրկասպեան երկրի, բայց ոչ Հայաստանի:

«...Հասարակականօրէն տիրապետող ուժը գտնում ենք այստեղ մի բոլորովին այլ սոցիալական դասակարգի մօտ. այստեղ (հայերի մէջ. Գ.) արագ կերպով բարգաւաճում են քաղաքային տարրերը՝ նորագոյն քաղաքապիութեան բազմակողմանիօրէն կաղապարւող մարմինը. այս փարթամօրէն ծաւալով քաղաքացիութեան շարքերից բարձրանում է վեր կապիտալիստական դասակարգ՝ հայկական բուրժուազիան իր արդիւնագործական (ինդուստրիական), առևտրական և ֆինանսական բանկային հատւածներով: Այդ դասակարգը խաղում է տնտեսական առաջնորդող դեր

ողջ Անդրկովկասում, բոլոր ժողովուրդների մէջ»:  
(Բ. Իշխանեան):

Այսպէս պնդելով հանդերձ նոյն իշխանեանը լրացնում է. «արդիւնաբերութեամբ, առևտրով և բազմապիսի պրոֆէսիաներով զարգացել են... Սե ծովեան, Թիֆլիսի և Բագւայ նահանգները, ուր զտնում են Կովկասի ամենաբարզաւաճ քաղաքները: Զուտ զաւուային գիւղատնտեսական շըրջանները, ինչպէս օր. Երեանի նահանգն է, ունեն բոլորովին հակառակ պատկերը»: Հէնց վերոյիշեալ քաղաքներում էլ կենտրոնացած էր հայ բուրժուազիան և բուրժուական:

Եւ տնտեսական յարաբերութեան նման դաստորումով հայ բուրժուազիան բնաւ չշահագրգուեց հայութեան հասարակական-քաղաքական գործերով ու չդարձաւ հայ հաւաքական մարմինի անքածանելի մասնիկը: Հողային տեսակէտից նա դուրս էր Հայաստանից, անտեսական շահերի համար արտաքին մեծ շուկաներ էր որոնում: Այդ պատճառով նրան հայկական մշակոյթը թւում էր անբաւարար: Կրթութիւնը տնտեսական ոյժ է. հայ դպրոցը չէր տալիս այդպիսի ոյժ, ուստի հայ հարուստը գիմում էր ոռուսական դպրոց: Իր ծագման օրից հայ բուրժուազիայի պատմութիւնը աստիճանական ապագայնացման պատմութիւնն է: Հայ դրամագլուխի ու գրամատիրոջ շինարար ոյժը Հայաստան չմտաւ, որով և ինքը հայ բուրժուազիան չհայրենացաւ, և հայ դիւղը չենթարկեց գրամագլուխի յեղափոխիչ զօրութեան: Սա մեր պատմական կեանքի ձախող երեսյթներից մէկն էր: Բուրժուազիան իր յետեից քաշեց հայ մտաւորականութեան

մի զգալի մասը՝ աւելի գործնական, աւելի որակւած, քան հայ գաւառում մնացածը. տարաւ և հայ բանուրութիւնը, որ երկրի վերաշինութեան գործում դառնալու էր մի հօր ազգակ: Հայկական գաւառը դատարկւեց կենսունակ, քաղաքական իդէալներ դնող, պայքարներ մղող դասակարգերից: Հայութիւնը գարձաւ ապագաղաքական տարր: Մեր պատմութեան զարկերակը սկսեց բարախել թոյլ, դասակարգային պայքարը նսեմացաւ: Հայ ազատագրական պայքարը հայ բուրժուազիան չհամարեց իրենը, ոչնչով չմասնակցեց նրա յաջողութեան գործին: Հայ մշակոյթի նկատմամբ նա մնաց սոսկ բարեգործի գերում: աւելորդ մի քանի կոպէկները նւիրեց մշակութային հաստատութիւններին և իր դրամագլուխը հեռու պահեց հայ հասարակական-դասակարգային փոխ-յարաբերութեան ասպարէզից: Ահա ինչու հայ բուրժուազիան մեր հասարակական կեանքի բնական ու հարազատ մասնիկը չէ. նա չհայցաւ ու չհայրենացաւ, մնաց միշտ օտար, ուսապաւան թէ՛ քաղաքականապէս և թէ՛ մշակոյթով. նա գնաց հայ ազնւականութեան ուղիով:

Գր. Արծրունին կոչ է անում հայ բուրժուազիային հարատանալ: Բայց նիւթական ուժի հաւաքումը նրա համար ինքնանպատակ չէ. հայ բուրժուազիան իր հաւաքած դրամագլուխից պէտք է բաժին հանի հայ մշակոյթին, նպաստի դպրոցին, դրականութեան, պէտք է ոտքի կանգնեցնի հայ գիւղացուն, մի խօսքով, հանդիսանայ հայութեան հոգեսր ու նիւթական մշակոյթի նեցուկը: «Քաղաքականապէս իրաւագուրկ հայը միայն նիւթա-

կան հզօրութեամբ կարող է տեղ դրաւել իր համար... Հարստութիւնը, նիւթական հզօրութիւնը իր թիկունք պիտի լինէր ազգային գոյութեան» (Դ. Անանուն)։ Եւ Արծրունին «ազգութիւն» քարոզելով՝ հայութիւնը կապակցում է հայ բուրժուազիայի նիւթական ուժի հետ։ Հայ մշակոյթը ոչ թէ զարգանում է հայ դրամագլխի Հայաստանում առաջ բերելիք դասակարգային շերտաւորման հետեւանքով, այլ՝ բուրժուազիայից ստացած բարեգործական դրամներով։ Այսինքն, այս, ինչ որ կատարում էր չնչին չափով, Արծրունին՝ պահանջում էր, որ տեղի ունենայ մեծ չափով։ Սա կարող էր ժամանակաւորապէս լինել ազգաշէն ծրագիր, եթէ հայ բուրժուազիան լինէր հայրենացած ու հայացած, բայց նա այլպէս չէր։ Հայութեան հոծ բազմութիւնը և հայ բուրժուազիան երբեք հայրենական սայլին չլծւեցին միասին։ մէկը կախաւ դէպի ուռւսական լայն ու պայծառ հորիզոնը, միւսի ուժերից վեր էր՝ սայլը սրբնթաց շարժելը։ Հայ գզըրոցը, դրականութիւնն ու գրողը, թատրոնն ու գերասանը նորից նայեցին հայ աշխատաւորի աղքատիկ քսակին։

Գր. Արծրունիի ազգաշինութեան ծրագիրը՝ չեղաւ այն փրկարար ուղին, որ հայութիւնը պիտի ազատագրէր ուռւսական վտանգից. վտանգը մնաց վտանգ, յետազյում աւելի սպառնալից դարձաւ, բայց փրկութեան միջոցներ չգտնւեցին։

Արծրունին որոնում էր հայ մշակոյթին նպաստող տնտեսական հիմունքներ, սակայն այս բոլորովին այլ էր, քան Նալբանդեանի որոնածը։ Արծրունին յենում էր հայ հարուստի նիւթական

ուժի վրա, Նալբանդեանը՝ այդ ամուսի պատւանդանը համարում էր «մի կտոր հողը»—հայրենիքը։ Հայրենիքի պահանջը, որ Արծրունին նոյնպէս ընդունում էր, որպէս ազգութեան բնականոն զարդացման գործօն, նա չարաւ Ռուսահայաստանի համար։ Նազարեանի բանաձեռն նրա համար էլ մնում էր ուժի մէջ — քաղաքականապէս՝ ուռւս, ազգայնօրէն՝ հայ. և հայ ազգութիւնը ապահովելու նրա փորձը ձախողեց։

Ազգութեան պահպանութեան խնդիրը մտահոգում է և հայ պահպանողական հոսանքին։ «Եոր Դար»-ի խմբագիր Սպ. Սպանդարեանը գրում էր. «Թող դիտենան հայերը, որ պէտք է ամենից առաջ մի ազդ իր ոտքի տակ ունենայ հող»։ Եւ շարունակում է. «Զերնօդորացիները՝ թէպէտ և քարքարոտ, այնուամնայնիւ ունեն հայրենիք, իսկ հայերը ուր ուրանում են, թողնում են իրենց հայրենիքը։ Մայրենի լեզուն և ազգային կրօնը իրենց մայր հողից հեռացած՝ որտեղ նրանք ծնւել, օրօրեւէլ, սնունդ են ստացել, օտարութեան մէջ, ուրիշ երկնքի տակ, օտար կլիմայում, օտար պայմաննեկը տակ աղքատի վարեն. մայր հողից նոր կան կեանք պիտի վարեն. մայր հողից նոր կանդ չստանալով՝ վաղ թէ ուշ պէտք է մեռնեն։

Ստրկութեան մէջ էլ որ ապրում լինէին հայերը միացած մէկ հողի վրա՝ կրկին ապագայ կունենային։ Ամէն բան կոռւր է, քանի որ հայրենիք չունեն, չեն կարող անհատական կեանք ունենալ. ազգութիւն, մայրենի լեզու, հաւատ, սովորութիւններ չեն մնալ... իլիւզիա է սպասել առանց

հայրենիքի, լեզւի միութեան՝ աղդային գրականութիւն, բանաստեղծութիւն ևայլն»:

Ուրեմն հայրենիքը ունենալը դառնում է միակ և հիմնական խնդիրը հայի ինքնապահպանման: Հայրենիքը կայ՝ դա այն «հողն է», ուր պատմականօրէն ապրել է հայը և սսեղծագործել: Սպանդարեանը պնդում է, որ «հայերը ուրանում են, թողնում են իրենց հայրենիքը» և դրա հետեանքով հայրենի հողը ապագայնանում է: Երեսոյթի դիտողութիւնը միանգամայն ճիշտ է, միանգամայն ուղիղ է ազգութեան գաղափարի կապելը «հողի հետ», որպէս նիւթական պատանդանի: Սակայն, չենց այդ գաղթականութիւնը, «հայրենիքի ուրացումն» աւելի խոր արմատներ ունէր: Հայոց գաղթականութեան պատճառները շատ բարդ են. նրանք պատմական անցեալի մէջ են թաղւած: Ազգային մարմնի մէջ տեղի ունեցած բնականոն անտեսական զարգացման հետեանք չեն այդ գաղթականութիւնները, այլ գերազանցօրէն քաղաքական կենսերից հայ ուազմական ու առետրական դասերը թողնում են մէր երկիրը միայն օտար, նորել ցեղերի ճնշման տակ: Նրանք կենարոնանում են Փոքր-Ասիայի ծովափնեայ շըրջաններում և Եւրոպայում: Այս երեսոյթը մէր հասարակական կեանիքի համար ունենում է չափազանց ձախող հետեանքներ: Աւելի նոր ժամանակներում հայ առետրա-արդիւնաբերական դասակարգի, ապա նաև հայ գիւղացիութեան «հայրենիքի ուրանալը» սերտօրէն յարակցւում է ոռւսական կայսրութեան վարած՝ տնտեսական քաղաքականութեան հետ, որի հիմքում դարձեալ քաղա-

քական նպատակ էր դրւած, և Թիւրքիայի հետապնդած քաղաքական նպատակների հետ:

Սպանդարեանը տրամաբանօրէն կանդ պիտի առնէր այդ հարցի առաջ՝ հարւածէր տիրող իշխանութեանց քաղաքականութիւնը և անէր համապատասխան եղրակացութիւններ: Սակայն այդ ուղիով չի գնում նա. հայ գաղթականութեան հարցը քաղաքական հարց էր. պայքարել նրա դէմ՝ կնշանակէր պայքարել ուռւս-տաճկական՝ հայութեան հանդէպ ընձեռնած քաղաքականութեան դէմ: Սա կնշանակէր՝ ունենալ քաղաքական ծրագիր և գառնալ ոչ թէ խաղաղ պայքարող, այլ յեղափոխական-մարտնչող: Սպանդարեանը այդպիսին չէր:

Դնելով շեշտակի ձեռվ հայրենիքի խնդիրը՝ Սպանդարեանը չէ տալիս բաւարար պատասխան՝ թէ ինչպէս պաշտպանել այդ հայրենիքը հայէ համար: Ընդհակառակն, կարծէք խնդրի ծանրութեան հանդէպ նահանջում է, և որոնում է այլ գործօններ հայի ինքնապաշտպանութեան:

Երկու հարց կապւած են սրա հետ. նախ՝ ո՞րն է հայի հայրենիքը, որտե՞ղ որոնել այն. երկրորդ՝ ի՞նչ միջոցներ են հարկաւոր նրան ձեռք բերելու:

Նախ՝ կանդ առնենք երկրորդ հարցի վրա: Տեսանք, որ հայրենիքի հարցը դրեց Արծրունին, բայց փոխանակ՝ պատասխանելու նրան, նա հարցը ձեսկերպեց՝ հայի աղդայնութեան նիւթական հիմքերը որոնելով: Փոխանակ հողի վրա յենւելու՝ նա յենւեց դասակարգի վրա: Ուրեմն, նա չպատասխանեց հարցին: Յետագայում նա իր ամբողջ ուշքը դարձրեց թիւրքահայ հարցի վրա և

այս հարցը ըմբոնեց մերթ որպէս անկախութիւն՝ Թիւրքիոյ սահմաններից դուրս, մերթ որպէս կըցւած Ռուսաստանին։ Այստեղ էլ նա հանդէս չբերեց պարզ ու մեկին պատասխան։ Կապելով հայ կուլտուրայի բախտը հայ բուրժուազիայի հետ, Արծունին դառնում է նրա գաղափարախօսը, հէնց այդ պատճառով էլ մեր ազատագրական շարժման մէջ նա չունի այն տեղը, ինչ պատկանում է Բաֆֆուն։

Ս. Սպանդարեանն էլ՝ չեշտակի ու շատ հետեւղական գրեց հայրենիքի հարցը, սակայն, նա աւելի շուտ դրադւեց հայկական մշակոյթը ապահովող գործօններով։

Սպանդարեանը իր հերթին հայկական կեանքում տեսնում է երկու « առաջնորդող դասեր », որոնք կարող էին նեցուկը լինել հայութեան ազգահաւաքման գործում։ Դրանք են՝ առեւտրական ու հեղեւոր դասերը։ «Այս երկուսի ձեռքն են աղքային, աղքութեան բոլոր գործերը։ Սակայն, ինչ ենք տեսնում այս երկու դասերի մէջ»։ Հոգեսրականութիւնը թողել է «մեր նախահարց սուրբ եկեղեցւոյ սկզբունքները, թափուր է ամէն բարձր, վսեմ մտքերից, նպատակներից», «եկեղեցին նրա համար նպատակ չէ, այլ միջոց իր ծակ աչքը կշտացնելու»... « Առեւտրական դասը դուրսկ մարդկային ամէն աղնիւ մտքերից ու զգացմունքներից՝ ցանկանում է շքեղ ապրել, ուտել և ըմպել... նրա համար ուրիշ ոչինչ չկայ աշխարհումս. նա աշխատում է շուտ և ինչ միջոցավ էլ լինի փող, հարստութիւն դիղել. այս հաւաքելումն է կայանում նրա նպա-

տակը։ Երկու դասերն էլ ծոյլ են, երկուսն էլ ուղում են հեշտ, թերեւս, առանց աշխատանքի, այսպէս ասենք, ուրիշի հաշվին ապրել»։ «Երկուսն էլ իրենց գործունէութեամբ և նպատակներով բացասում են ազգութեան միտքը, հայրենիքը»։

Այսքան խիստ, ջախջախիչ առղեր ունի Սպանդարեանը հայ բուրժուազիայի և հայ հոգեորականի հասցէին ուղղւած։ Եւ բնական է սպասել, որ նա հայրենիքի սրոնման և ազգութեան ինքնապաշտպանութեան գործը չկապէր նրանց հետ, յանձնէր ուրիշ դասերի։ Սակայն, նա այդ չի անում, կուցէ այն պատճառով, որ ուրիշ դաս չի գտնում։ Եկեղեցին, թէպէտ և արատաւոր և պակասաւոր, մնում է դարձեալ այն ոյժը, որ պիտի հաւաքի հայութիւնը։ Դրա համար «եկեղեցին պէտք է յետ գառնայ իր առաջւայ, պարբ ու սուրբ սկզբունքներին, իր միջից հեռացնէ ամէն անպէտք և վնասակար անդամներին։ Առեւտրական դասը պէտք է բոլորովին սահմանափակի և հայերի համար առեւտուրը լինի միջոց, ոչ թէ նպատակ կեանքի»։

Սակայն, միթէ սրանով կը լուծեի հայրենիքի հարցը. միթէ հայոց հոգեորականութիւնը և հայ բուրժուազիան էին այն ուժերը, որոնք պիտի կատարէին հայրենիքի հաւաքման ու հայրենի հողի միացման մեծագոյն գործը։ Մտածել այդպէս կը նշանակէր նրանց վերագրել և քաղաքական մտորումներ և հասարակական մէծ արժէք։

Սակայն, հայ առեւտրա-արդիւնաբերական դասակարգի զարգացման տեսնդնցը անյարիր էր Ապանդարեանի առաջադրած նպատակներին։ Իր

այդ տեսակէտները նա թերես մշակել էր եւրոպական ազգերի պատմական կեանքի դիտողութեամբ, ուր բուրժուազիան ազգային մարմնի մի անբաժան մասնիկն է եղել և իրենով պայմանաւորել է աղդային պատմութեան մի շատ երկար չըջանը։ Նա ստեղծել է նիւթական հարստութիւն, կատարելագործել է տեխնիկան, ուռացցրել է ազգային մշակոյթը՝ հոգևոր ստեղծագործութեան բոլոր սահմաններում։ Առանց բուրժուազիայի՝ եւրոպական ազգերի պատմութեան ըմբռնումն անկարելի է։ Սակայն, վերև արդէն ասացինք, որ այդպէս չէր հայ բուրժուազիան։ Նա գուցէ տեղ գրաւի գաղութայութեան պատմութեան մէջ, բայց Հայոստանի ընկերային-դասակարգային փոխյարաբերութեան մէջ և հասարակական կեանքում նրա ունեցած արժէքը չափազանց չնչին է։

Նոյնը պիտի ասել և հոգևորականութեան և հայոց եկեղեցու մասին։ Հայոց պատմութիւնը մի դդալի չափով հայ հոգևորականութեան ու եկեղեցու պատմութիւնն է։ Այդպէս էր՝ չնորհիւ այն հանգամանքի, որ հայոց պետականութիւնը շատ չուտ վերջացաւ և եկեղեցին դարձաւ հայութեան հաւաքող, զօդող միակ ոյժը և նրա քաղաքական արտայայտիչը օտարների հանդէպ։ Սակայն 19-րդ դարում՝ յատկապէս երկրորդ կիսում՝ հայոց եկեղեցին ապրում էր մի խոր ճգնաժամ։ Նախ հայութեան մարմնի մէջ հանդէս էր դալիս աշխարհիկ մտաւորականութիւնը՝ աշխարհիկ ճգտումներով ու գաղափարներով ու թուլացնում հոգևորականութեան ոյժը։ Երկրորդ՝ նրա իրաւասութեան տակ եղած միջոցները այլևս անբաւարար էին հա-

յութեան պատմա-մշակութային ամբողջականութիւնը պաշտպանելու։ Ասել է նոր պայմաններում «Պոլոտէնիա»-ի ընդդժած իրաւունքները՝ այլևս այն արժէքը չունէին՝ ինչ դարի առաջին կիսում։ Ռուսական քաղաքականութիւնը այժմ աւելի հզօր գէնքեր ունէր իր ձեռքին։ Նա իր ձեռքն էր վերցրել ժողովրդական կրթութիւնը, իր հովանու տակ առել՝ ուռացման հոսանքը, համապատասխան ձևով վարում էր տնտեսական, կրթական և արտաքին քաղաքականութիւնը։ Եւ այդ պայմաններում հայոց եկեղեցին անկարող էր պայքարելու իշխողի հետ։ Նրա հաստատութիւնները միայն հերոսական ճգնաժամներով կարողանում էին պահել իրենց գոյութիւնը։ Աւելի ևս ծանրանում էր նրա կացութիւնը այն բանով, որ ուռական քաղաքականութիւնը դարի վերջում ընձեռնում է եկեղեցու իրաւունքների կրածաման՝ զրկելով նրան կուրուրական լայն գործունէութիւնից։ Այսպիսի պայմաններում եկեղեցին ու հայոց հոգևորականութիւնը չէին կարող լինել ազգութեան հաւաքող ոյժը՝ ինչպէս ցանկանում էր Սպանդարեանը։

Այսպիսով նա մի ծրագիր էր առաջարկում, որ լինելու էր կեանքի յարածուն զարգացման հակենթաց։ Հայ հոգևորականութիւնը, որպէս ուրոյն դաս, անկախ իր անձնական լաւ կամ վատ յատկութիւնից, այլևս անկարող էր հայկական կեանքում առաջնորդող գեր խաղալ. եկեղեցին այլևս ազգութեան պաղակ չէր. նրանով ու նրա չուրջը հաւաքւելով չէր կարելի պաշտպանել ուռական բարձր մշակոյթի վատանգներից. կարելի էր մնայ հայոց եկեղեցական դաւանանքի անդամ և

դառնալ մշակոյթով ոռւս : Այս դէպքում եկեղեցին վեր էր ածւում սոսկ ծիսակատարութեան , առանց խօսելու ո՛չ մտքին , ո՛չ սրտին :

Ուրեմն , Սպանդարեանն էլ չգծեց այն ուղին , որ համապատասխանէր մեր պատմական կեանքի հոլովոյթին : Նա էլ , Արծրունու պէս , իր յոյսը կապեց հայ առևտրա-արդիւնարելական գասակարգի հետ , որ խորթացաւ հայութեան գործից : Նա առաջ քաշեց հայ հոգեորականութիւնն ու եկեղեցին , որի պատմութիւնը անցեալին էր պատկանում : Այդ պատճառով Արծրունին ու Սպանդարեանը չդարձան հայ ժողովրդի մտաւոր առաջնորդները : Դարաշրջանի կենտրոնական հարցը՝ հայ հայրենիքը և հայրենիքի նւաճումը՝ մնաց չլուծւած : Երրորդ՝ յեղափոխական հոսանքն էր , որ ասպարէդ էր իջնելու յանձինս Թափփու և տալու էր նոր գաղափար , որը և դառնալու էր զանդւածների սեփականութիւնը 90-կան թւերին :

---

Օժուած հրապարակախօսի մեծ տաղանտով , դեղադէտի ներքին զգացումով հզօր ու հայ հասարակական կեանքի բազմակողմանի ծանօթութեամբ Թափփին եղաւ մեր յիսուն տարիների գաղափարական բնաշրջումի համադրութիւնը : Իր աշխարհահայեցողութեան մէջ նա ընդդրկում է Արուեանին , Նաղարեանին , Նալրանդեանին , Արծրունուն : Նա ոչ միայն մեծ գեղագէտ , այլև խոշոր քաղաքական մտածող էր : Առանց Թափփու անհասկանալի ու պակասաւոր կը լինի 80-կան թւական-

ների մեր հասարակական մտքի ճանաչութիւնը : Նա , Աբովեանի հետ , մեր ժողովրդի լաւագոյն դաստիարակը հանդիսացաւ . «Վէրք Հայաստանի»-ն , «Կայծերը» , «Խենթը» , «Դաւիթ բէգը»՝ ահա մեր ժողովրդի հոգևոր մկրտութեան աւագանը :

Ինչպէս տեսանք , Ժամանակի գլխաւոր հարցը հայրենիքի որոնումն էր . Թափփին էլ առաւելապէս դրազւում է նրանով և ինդիրը լուծում է աւելի հիմնովին՝ գտնելով հայրենիքը Թիւրքահայաստանի սահմաններում և ցոյց տալով նրան ճեռք բերելու միջոցները՝ միանդամայն տարբեր Արծրունուց և Սպանդարեանից :

Թափփին ազգութեան մասին ունի պայծառ հայեացք : Հայ պահպանողական հոսանքը Կարապէտ Եղեանի բերանով յայտարարում էր «արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք հայութիւն» , իսկ Սեդրաք Մանանդեանը դրում էր անկեղծօրին . «Ինչ ծածկենք , մենք ամենքս մոլեսանդ լուսաւորչականներ ենք . հայութիւնը և կուսաւորչի գաւանանքը մենք մի ենք համարում , որովհետեւ զա մեր աղդային յատկութիւնն է » : Սրանք շատ բնորոշիչ յայտարարութիւններ են այն տեսակէտից , որ անզամ մոլեսանդ պահպանողականները եկեղեցու վրա չեն նայում , որպէս հաւատացեալների մի կազմակերպութեան . նա երկնային մխիթարութեան , հաւատի ու փրկութեան մի միջոց չէ , այլ հայի մշակութային-պատմական գոյութիւնը , աղդայնութիւնը պահպանող գործօն : Շեշտուում է նրա քաղաքական արժէքը : Եւ հայ հրապարակախօսութեան մէջ ,

եթէ հայոց եկեղեցին արժէք է ստացել կամ հայ միտքը հաշտել է նրա գոյութեան հետ, ի նկատի է ունեցել միայն նրա քաղաքական կողմը և մեր ազգային հիմնարկութեանց իրաւասութիւնը:

Թափփին պայքարում է եկեղեցու և ազգութեան գաղափարը նոյնացնողների դէմ: «Ազգութիւնը և կրօնը որոշ դաղափարներ են, ազգային պատմութիւնը, ազգային անցեալը ամբողջ ազգի սեփականութիւնն է՝ ինչ կրօնի և ինչ աղանդի պատկանելու լինեն նրա մասերը»: Ազգութեան և կրօնի անջատման այս գործողութիւնը, ըստ Թափփու, տեղի է ունեցել Եւրոպայում, նոյնը տեղի ունի այժմ և մեղ մօտ: Նա ևս ընդունում է, որ կրօնը ազգութեան պահպանման ազդակ կարող է լինել Երբեմն, բայց միայն այն ժամանակ, երբ ազգը գուրկ է քաղաքական և այլ ինքնապահպանման գէնքերից: Հայութիւնը մնացել է ազգ՝ միայն չնորհիւ այն բանի, որ քրիստոնեայ է հոծ մահմատկան ծովի մէջ: «Ես շատ կը տխրէի, ասում է նա «Տաճկահայք» աշխատութեան մէջ, եթէ Թրանսիայում մի փոքրիկ հայ գաղթականութիւնը կը նդունէր կաթոլիկութիւն, իսկ Անդլիայում՝ բողոքականութիւն: Կարող էի մարդարէի ոգով գուշակել, որ նրանք մէկ կամ կէս դար յետոյ կը կորչէին, բայց երբեք չեմ կարող Երևակայել, որ Հայաստանում հայը Փրանկ կամ ինդլիզ կարող է դառնալ»: Տեսանք, որ նոյն խնդիրը դրեց Արծծրունին և տարբեր պատասխան տւեց. հայը օտար քաղաքակիրթ միջավայրում նոյնպէս կը կորչի, եթէ անդամ պահելու լինի դաւանանքը: Մշակու-

թային ազդակները աւելի ուժեղ են, քան կրօնիդաւանանքի ինքնապաշտպանման ոյժը:

Ըստ Թափփու, «մի փոքրիկ ազգութիւն իրաւ կը կլանւի, կանհետանայ, երբ կը միանայ իր տիրապետող պետութեան եկեղեցու հետ, ինչպէս թիւրքիայում բոլոր մահմետականութիւն ընդունող հայերը ձուլեցին թիւրքերի հետ: Բայց նոյնը չի պատահում, երբ մի ժողովուրդ իր հայրենի երկրում ընդունում է մի ուրիշ դաւանութիւն, որ տարբե՞ր է պետական կրօնից»: Թափփին չափազանց շատ է ընդհանրացնում թանձրացեալ փաստերը: Անշուշտ, իշխողի ձեռքին եկեղեցին գորեղ զէնքերից մէկն է ձուլման քաղաքականութիւնը վարելու համար: Սակայն, օտար պետութեան ենթակայ ազգը գրա գէմ պայքարում է երկու ձևով. կամ անջատում է իշխողի եկեղեցուց և նոր դաւանանքի հետևելով՝ փաստօրէն ազգայնացնում եկեղեցին: միայն այս գէպլում եկեղեցին դառնում է ազգութեան գործոն նա ինքն է ազգայնանում: Այդպէս եղաւ Հայաստանում, ուր հայ եկեղեցին, յանուն ազգային ինքնապաշտպանութեան, անջատեց բիւղանդական եկեղեցուց, ազգայնացաւ և զարձաւ շատ երկար ժամանակ նրա պահպանման միակ խոչոր գործոնը: Կամ փոքր ազգը մնում է տիրողի դաւանական սահմաններում, բայց չկորչելու համար՝ փորձում է զարգացնել ազգութեան նպաստող այլ գործոններ՝ կանգնում է մշակութային վերածնութեան ուղիի վրա: Մշակութային-ողեկան ունեցող ազգը այլև վտանգ չի տեսնում տիրողի դաւանանքից ու կրօնից: Օրինակ,

Բելդիան միշտ մնաց օտար՝ կաթոլիկ իշխողների հովանու տակ, բայց դարդացրեց իր ինքնատիպ մշակոյթը և ոչ միայն չձուլւեց՝ սկզբում զարըս-բուրգեան Սպանիայի ապա Աւստրիայի հետ, այլ և ազգային մշակոյթը դարձաւ նրա քաղաքական անկախութեան հիմքը։ Այդպէս եղաւ և Զեխիանցում, ուր 18-րդ դարի վերջից ստեղծւեց նոր մտաւրականութիւն և հիմնաւորեց նոր ազգայ-նութիւն, հակառակ կաթոլիկ պետական ջանքերի։ Եւ ընդհակառակը, տիրապետողից տարբեր դաւա-նանք ունենալը դեռ գրաւական չէ ապահովու-թեան, մանաւանդ եթէ իշխողի մշակոյթը աւելի հարուստ է ու կեանքի պայքարի համար աւելի պիտանի։ Ռուսահայաստանում հայ մշակոյթի ապագան վտանգւած էր, թէպետ հայութիւնը տարբեր դաւանանք ունէր իշխողից։

Դառնանք Բաֆֆուն։ Եթէ հայութեան մէջ կան տարբեր դաւանութեան մարդիկ, պէտք է ջանք թափել ոչ թէ միայնելու օտարագաւառն հա-յին հայ լուսաւորչական եկեղեցու հետ, «այլ աշխատել նրանց մէջ տարածել ազգայնութեան գաղափարը։ Թէ մի ազգի անդամները կարող էին այս ու այն եկեղեցուն պատկանել, բայց դարձեալ մի ազգային ամբողջական մարմին կազմել և ցըր-ւած ուժերը մի տեղ հաւաքելով՝ միասին գործել բոնութեան և հարստահարութեան դէմ»։ Ազգու-թեան գաղափարը կրթութեան միջոցով պէտք է ընդհանրացնել «ամէն մի անջատւած մասի մէջ», այս է Բաֆֆու տեսակէտը։ Դրա համար պէտք է զարկ տալ ազգային տարբերի զարդացման՝ գրա-կանութեան, պատմութեան, արեստին և դարձնել

այն «յետին մարդի, ժողովրդի ունեցւածքը», և այս միջոցով խորացնել ազգութեան գաղափարը ամենախոնարհ խաւերում անդամ։

Հայոց եկեղեցական աղղայնութիւնը ձևաւոր-ւած էր «Պոլոժենիայ»-ի և «Ազգային Սահմանա-գրութեան» մէջ։ Այժմ, երբ ազգութիւնը անջատ-ւում է եկեղեցուց, ի՞նչ կազմակերպութիւն է ստանում։ Այս հարցը բղխում է Բաֆֆու ազգու-թեանը տւած պատասխանից։ Այդ հարցը բղխում էր նաև Նաղարեանի տւած պատասխաններից։ Նաղարեանը ազգութիւնը մի այլ անօթի մէջ չամ-փուից։ Զէ՞ որ ազգութիւնը պէտք է արտայայտել որպէս գրականութիւն, արեստ, փիլիսոփայու-թիւն, կրօնական յղացումներ, դպրոց, ճարտա-րապետութիւն, ո՞վ է հոգալու այս մշակութային ինքնազործունէութեան զարդացման մասին։ Նա-ղարեանը այս բոլորի համար, անդամ աղղային— մշակութային ինքնազարութեան պահանջը չլրեց։ Արծրունին՝ հայ մշակոյթի տնտեսական հմքերով զբաղւեց, բայց նրան իրաւա-քաղաքականութիւնը պահպանութեան մնոյթ տալուց ըրաժարւեց։ Բաֆֆին անջատելով ազգա-յին հաւաքականութիւնը՝ եկեղեցական հաւաքա-կանութիւնից՝ տալիս է նրան հաղաքական գունա-ւորում։ Նա ստեղծում է Խենթի երազը, որ միաժամանակ երազն էր հայութեան անկախ հայ-րենիքի։ Ո՞րն է ըստ Բաֆֆու քաղաքականորէն անկախացած հայրենիքը։ «Մարտկանց կեանքը կապւած է բնութեան հետ, և նրա մայրն է հողը։ Եթէ հայը կամէր կեանք ու ապագայ ունենալ՝ նա պէտք է իր ասլրուստը հիմնէր հաստատուն հողի վրա և այդ հողը բռող լինի այն, որ սրբած է և

գնւած է մեր նախահարց արիւնով»: (ընդգծումը  
մերն է Գ.Գ.):

Հայութեան հայրենիքը Թիւրքաց Հայաստանն  
է: Այսակա է, որ հայութիւնը պէտք է ամփոփւի  
«մի կտոր հողի», մի երկրի վրա, որ ազգագրական  
տեսակէտով և պատմականօրէն էլ իրենն է՝ հայր-  
նը: Խենթը իր երազը տեսնում է կջմիածնում,  
բայց տեսնում է Թիւրքաց Հայաստանի համար:  
Ալաշկերտի դաշտն է՝ մեր պատմութեան հին  
որրաններից մէկը, որ կենտրոնն է Բաֆֆու երա-  
զած Հայաստանի:

Խենթի երազը մեր քաղաքական մտածողու-  
թեան նշանաւոր փաստաթղթերից մէկն է: Գուցէ  
նա չի յարակցում վէպի ընդհանուր կառուցւածքի  
հետ և չի կազմում նրա հետ մի ամբողջականու-  
թիւն, սակայն դա արդէն Բաֆֆու արևեստի պա-  
հասութիւնն է: Եւ խենթի երազը պիտի յարակցուի  
ոչ թէ «Խենթի» որպէս վիպական ստեղծագործու-  
թեան հետ, այլ Բաֆֆիի քաղաքական աշխարհա-  
հայեցողութեան հետ: Այս տեսակէտից նա Բաֆ-  
ֆու մտքերի լրացումն է, որով և դառնում է հայ  
քաղաքական մտածողութեան մի շատ անհրաժեշտ  
դլուխը:

Ի՞նչ բնոյթ ունի Խենթի երազը. — Ամենից  
առաջ՝ Հայաստանը նկարագրում է որպէս ան-  
կախ պիտութիւն. թուրքի և քրդի տիրապետու-  
թիւնը արդէն անցել է պատմութեան գիրկը:  
«Նրանք կողոպտում էին ու մինչև անդամ կոտո-  
րում էին մեր պապերին... Այժմ նրանք չկան: Մի  
այդպիսի ցեղ չէր կարող դիմանալ քաղաքակըր-  
թութեան լոյսին, և այդ պատճառով լուծւեցաւ,

այլասերեցաւ: Դեռ անցեալ դարի սկզբում նրանք  
ընդունեցին մեր կրօնը, սկսեցին սովորել մեր  
գպրոցներում և հետղհետէ խառնւելով մեզ հետ՝  
անհետացան»: «Քրդերի և թուրքերի շրջանը «տը-  
խուր ժամանակներ» են եղել. բայց այժմ ամէն  
ինչ փոխւել է:

Ազատ Հայաստանը ռամկալարական երկիր է.  
այնտեղ չկայ խոշոր բուրժուազիա, չկան պատմա-  
կան աւանդութիւններ ունեցող ազնւականութիւն:  
Գործարանները համայնքի սեփականութիւն են,  
անտառները նոյնպէս. խոշոր մասնաւոր սեփակա-  
նութիւն չկայ. տիրողը գիւղն է ու գիւղացին.  
Հասարակական գործիչը նախկին յեղափոխականն-  
է, նոյնպէս ծագումով միջին ու խոնարհ խաւից:  
Նա «երեսփոխանական ժողովի» անդամ է: Զկայ  
ուազմական ուրոյն դաս. «զինուրանոց չկայ, այս-  
տեղ ամէն քաղաքացի զինուոր է»:

Հայաստանը աշխատանքի թագաւորաւթիւն է.  
Փիզիքական ու մտաւոր աշխատանքը — ահա ինչն  
է կազմում Բաֆֆու հիմնական սկզբունքը: «Այս-  
տեղ մարդիկ աշխատութեամբ և արդար վաստա-  
կով» են ճարում իրենց հայը: Այնտեղ լայնօրէն  
գործադրում է «խելացի գիտակցութիւնը և զար-  
գացած քաղաքակըրթութիւնը»:

Հայ գիւղացին մշակել է աշխատանքի իւրա-  
յատուկ ըմբռնում, որ բյիսում է նոր պայմաննե-  
րից. «գիւղացու երջանկութիւնը չի կայանում  
այնքան ծանր ու անդուկ աշխատանքների մէջ,  
որքան գործը գիտնալու և նրան հեշտացնելու  
հնարների մէջ: Բնութեան մէջ կան շատ ուժեր,  
որ պարգևել է Աստւած մեզ՝ օդնելու համար.

միայն պէտք է ծանօթանալ նրանց հետ և գիտնալ՝ թէ ինչ միջոցներով կարելի է նրանցից օգուտ քաղել»: Եթէ ժամանակակից խօսքերով արտայայտենք այս միտքը, պիտի ասենք՝ գործադրելով քիչ աշխատանք ստանալ առաւելադոյն շահը: Մեքնայացումը լայնօրէն կիրառում է աշխատանքի մէջ: «Այստեղ գործում են գլխաւորապէս մեքենաներ ու շոգին: Ահա սղոցարանը, ահա պանրագործարանի ահազին շինւածքը», «հասունցած հունձը» անում է մեքենան, որ «մենակ հարիւրաւոր մշակների գործ է կատարում»: Ահա գիւղական «աղօրիքը», այստեղ ջրի փոխարէն գործում է շոգին»: Եւ այս բոլորը որևէ անհատի սեփականութիւնը չէ, նրանք «պատկանում են գիւղական համայնքին: Ամէն մի գիւղացի մասն ունի նրանց մէջ»: Անտառները «նոյնպէս գիւղացիների սեփականութիւնն են»:

Դիւղը վերածնել է ոչ միայն անտեսապէս, այլև մտաւորապէս. այնտեղ կան տարրական դպրոց, գիւղատնտեսական դպրոց: «Դպրոցին յատկացրած է գիւղի բաւադոյն շէնքը «այգպիսի դպրոց Վարդանը երեք չէր տեսել»: «Նա բովանդակում էր իր մէջ գիւղացու անտեսութեան վերաբերեալ բոլոր պարագայքը: Աշխարհի համարեա բոլոր բոյսերի, տունկերի ու ծաղիկների տեսակներից կային այստեղ... Ամէն ինչ սովորում էին այստեղ բնութեան հրաշալի գրքի մէջ: Այստեղ որոշեալ ժամերին ուսանողները պարապում էին մարմամարդութեամբ և դէնք գործածելու վարժութեամբ»: Լուպիրը գարձել է ընդհանուր պահանջ, բոլորը հետեւում են նրան: Գիւղացու որ-

դիները այլևս Տանուտէր Խէջոյի գաւակները չեն՝ հլու, բոնութեան տակ խոնարհւած, այլ նրանք հասնում են ժամանակակից մտաւոր բարձրութեան. մէկը՝ «մի շաբաթ հազիւ կը լինի, որ աւարտեց նոր Վաղարշակերտի ճեմարանը, իսկ այժմ պատրաստում է համալսարան մտնել բժշկութիւն սովորելու: Որդիներից մէկը «անտառապահ է», միւսը պղոփէսոր Կարինի համալսարանում, երրորդը գնդապետ Վանի զօրաբաժնի մէջ, իսկ չորրորդը դեռ սովորում է նոր Բաղրեւանդի գիւղատնտեսական ուսումնարանում»: «Մեր քաղաքներից, գիւղերից ու գաւառներից շատերը փոխել են իրենց անունները. ստացել են իրենց վաղեմի պատմական անունները»:

Այս բոլորի հետ հայն ինքը փոխել է հոգեպէս, նախկին սորկամիտ, խոնարհւող և ստորացած հայը չէ նա այս ազատ երկրում, այլ նա «աչքի էր ընկնում իրեն համարձակութեամբ, անձնավստահութեամբ, այրական անվեհերութեամբ»: Տանուտէր Խաչոյի տոհմը անցնելով դարերի բովի միջից զտւել մաքրւել և կերպարանափոխել էր՝ ստեղծելով մի նոր և աղնիւ սերունդ»:

Ահա և հայկական քաղաքը. լուսաբաց է. երկաթուղու կայարանում մեծ բազմութիւն. «փողոցներում երեսում են միայն բանուրները, որոնք շտապում են զանազան Փաբրիկաներում աշխատելու»: Կառքերը սլանում են հարթ և ուղիղ փողոցների միջով. «երկու կողմից բարձրանում էին հոյակապ շինութիւններ»:

Վարդանը կարծում էր թէ պալատների միջով

է անցնում. «Մա այդ համալսարանն է, միւսը գիտութիւնների ակադեմիան է, դա հին թագաւորական պալատն է որպէս մուգէում։ Դա քաղաքի նշանաւոր թատրոններից մէկն է, դա մի հիւնդանոց է, դրանք այն հերոսների արձաններն են, որոնք նշանաւոր եղան վերջին յեղափոխութեան ժամանակ... Դա մի լրագրի խմբագրատուն է, ուր օրեկան 150,000 օրինակ է տպւում»...

Ահա հայ գիւղի և քաղաքի պատկերը—անկախ Հայաստանի օրով։ Դա աշխատանքն է մարմնացած՝ մաքուր, ազնիւ, ստեղծագործ աշխատանքը՝ մարդկային մշակոյթի բոլոր սահմաններում։ Այժմ այնտեղ հնչում է «Հայկական խօսքը, լեզուն։ Բայց որքան մշակւել, որքան կուել է այդ լեզուն, և որքան գեղեցիկ դարձւածքներով այժմ հնչում էր նա հայ մարդու բերանում»։

Սակայն Հայաստանի պատութիւնը և մշակութային նոր վերածնութիւնը հայութիւնը հեշտութեամբ ձեռք չի բերել։ Անցել է դարաւոր տառապանքների, մահաբեր ճշնաժամների միջից, պարտել է, ընկել, նոր պայքարել և յաղթանակել։

«Յիշում ես Վարդան, ասում է Սալմանը, քեզ ասում էի, որ Հայաստանը մի օր կը դառնայ մարդկութեան այրական հասակի, նրա զարդացման ժամանակների դրախտը։ Այժմ բոլորը կատարւեցաւ։ Այժմ հայ մարդու ապրուստը խիստ ապահով, ուրախ և խաղաղ է հայրենի հողի վրա։ Բայց՝ եթէ գիտենայիր, թէ որքան աշխատեցինք մենք, մինչև նրան այս վիճակին կարողացանք հասցնել... Շատ աշխատեցինք... Այս երկու հա-

լիւր տարւայ ընթացքում հազարաւոր փորձանքների միջից անցանք... Բազմաթիւ արեան և առաստ քրտինքի կնով գնեցինք մեր հանդսութիւնը»...

Ահա ինչ սրբազան երազ էր աւանդում հայութեան թափփին 80-կան թւականների սկզբներին։ Նա արծւի սրատեսութեամբ գծեց այն ուղին՝ մարտիրոսագրութեամբ լի, որով անցաւ հայոց յեղափոխութիւնը, և իրական ճշմարտութեամբ գծադրեց այն պատկերը՝ աշխատանքի ու աշխատաւորի աշխարհը, որ փորձեց իրականութիւն դարձնել Հայոց Հանրապետութիւնը։

Տեսանք, որ Նալբանդեանի «մեր հայրենիքը» դեռ ձևաւորւած, նիւթականացած չէր. միայն սկսած 70-կան թւականներից ամէն հայ մեր հայրենիքը պատկերացնում է Տաճկահայաստանում։ Թափփին թանձրացրեց այդ գաղափարը։ Եւ ոչ միայն այդքան՝ նա ընդգծեց այն բնոյթը, որ ունենալու է անկախ Հայաստանը, որ չի լինելու նոր բռնութեան մի վայր, այլ ուամկավար հանրակարգի թագաւորութիւն։ Այսպիսով, հայոց քաղաքական միտքը ստեղծեց Անկախ Հայաստանի եղէալը։ Այդ չէնքի կառուցման գործում աշխատեց հայ լաւագոյն մտաւորականութիւնը։ Աբովեանը գրեց առաջին քարը, Թափփին ամբողջացրեց և աւարտեց։ Թւենք նորից, որ Աբովեանը զգաց լեզւի անհրաժեշտութիւնը և ստեղծեց նոր լեզու նոր ազգութեան համար։ Նազարեանը լմբանեց հայութիւնը, որպէս մշակութային ուրոյն զէմք։ Նալբանդեանը ազգային մշակոյթը հիմնաւորեց մի «կտոր հողի վրա»։ պօլսահայ մտաւորականութիւնը

բաժանեց կրօնը ազգութիւնից . Խրիմեանը ազգութիւնը ըմբռնեց , որպէս ժողովուրդ—ուամիկը . Արծրունին որոնեց հայ մշակոյթի նիւթական հիմքերը . Բաֆփին հայրենիքն ու ազգութիւնը ըմբռնեց բաղաքական իմաստով և մատնանշեց այն երկիրը , որ Հայոց անկախութեան վայրն էր լինելու : Հայութիւնը իր զարգացման ազգային-մշակութային շրջանից անցնում էր ազգային-բաղականին :

Եթէ առաջնի բնորոշող գիծն էր՝ մշակոյթով մնալ հայ , բայց քաղաքականապէս թուրք կամ ոռու , այժմ հայը քաղաքականապէս էլ , ազգայնորէն էլ ուղում է մնալ հայ , ասել է՝ դառնալ ազգ-մշակութային միաւոր Հայաստանում՝ ապահոված անկախ պետականութեամբ :

Բաֆփու գերի գեղեցիկ բնորոշումը տալիս է հայ պատմաբան Դ . Անանունը : «Բաֆփին , գրում է նա , կարող էր պաշտօնապէս որևէ յեղափոխական կուսակցութեան անդամ չլինել և այդպէս էլ էր , իրօք , բայց նա մեր յեղափոխական սերնդի նախահայրն է , նրա ընդգրկած ծրագրի թելադրողը : Հայրենիքի նւաճումը նրա հոգու սրբութեան սրբոցն էր , որի համար նա ծառայեցնում էր թէ պատմական և թէ ժամանակակից միտումաւոր վեպը , արձակն ու բանաստեղծութիւնը , պատմական ուսումնասիրութիւնը , ճանապարհորդական նկարգրութիւնը և այլն : Այս մարդը հայրենիքի պաշտամունքի մարմնացած քուրմն էր : Հայրենիք և նրա նւաճումը հայկական յեղափոխական նիդերով , ազգային եռանդի սպառումով » :

## VII

### ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Մշակւած էին ոչ միայն դաղափարները , այլ նաև գործելու եղանակները : Տեսանք մեր երկու մեծ վերածնիչներին , որպէս երկու գործելակերպի ներկայացուցիչներ — Նազարեանը՝ խաղաղ , մշակութային աշխատանքի , Նալլանդեանը՝ ապստամբութեան , յեղափոխութեան : Թիւրքահայութեան մէջ Պօլիսը մնաց խաղաղ աշխատանքի ուղիի վրա , «Երկիրը» , յանձին Խրիմեանի , զէնքի ու կռւի միջոցնվ ինքնապաշտպանութիւն էր քարոզում : Հետաքրքրական է պայքարի ձևերի խնդիրը , որ շարունակաբար ծեծւել է հայ հրապարակախօսութեան մէջ սկսած 60-կան թւականներից : Նախորդ դարի առաջին կիսում նա հրապարակային քննութեան նիւթ չի դառնում : Հայութիւնը գործում էր , կիրարկում էր որոշ գործելակերպ թիւրքիոյ և Պարսկաստանի հանդէպ՝ միացած Ռուսաստանի հետ՝ ազատելու համար իր հայրենիքը պարսկից և թուրքից : Դարի երկրորդ կիսին , ազգային ինքնադիտակցութեամբ լցւած , հաւաքական հա-

յութիւնը բոնում է խաղաղ՝ մշակութային—կրթական դործի ուղին։ Սա անհրաժեշտ էր փոքր, ինքն իրեն նոր դտած ազդին, անհրաժեշտ էր ուժերը վերահաւաքելու, կազդուրելու համար։ Սակայն, միայն որոշ ժամանակ, որից յետոյ ուսումացած ազդայնութիւնը որոնում է նոր միջոցներ միակատար ազատագրութեան համար։

Ասացինք, որ 19-րդ դարի առաջին կիսում ազդայնորէն պիտակցւած հայութիւն չկար. կար ազօտ կրօնական գիտակցութիւն։ Այդ կրօնական համայնքը տարւած է մեսիանիզմի հովերով։ Արովեանը վարպետորէն գծադրում է հայ գիւղացիութեան մտաւոր—կրօնական այդ պատկերը։ Գիւղացիութիւնը հաւատում է, որ մի օր «անօրէնները» պիտի վերանան մեր երկրից. Գաբրիէլի փողը հնչելու է, և «Լուսաւորչի սուրբ հաւատը» նորից դյուլս պիտի բարձրացնի, «Էջմիածինը իր հին փառքին տիրանայ»։ Այս գործում ինքը մասնակցութիւն չունի։ Դարի տրամադրութեան և ընդհանուր հոգեբանութեան արտայայտիչը թաղաղեանի «Տէ՛ր, կեցցո դու դհայս» խնդրերգն է։ Հայութիւնը կայ՝ մի հօտ հոգեոր, ունի՝ մի հոգիւ՝ գեկավար. այդ հօտի պաշտանութեան միջոցն էլ տրւած է՝ Տէ՛ր ի վերուստ պիտի պահի նրան։ Սա մեսիանիզմ է, միստիք մի տրամադրութիւն, որ յատուկ է թուլ, իրեն չպատած հաւաքականութեան։ 60-80 թւականներին հայութեան այս հոգեբանութիւնը աստիճանաբար փոփոխութեան է ենթարկում։ Թուսահայաստանում, նոր պայմաններում, նրա գործօն ոյժը մեծանում է. մասնակցում է երկրի առևտրա-արդիւնաբերական կեանքին,

փորձով ճանաչում է զպրոցի, գործնական գիտելիքների անհրաժեշտութիւնը, շփում է օտարների հետ, բոնում է վերազարթօնքի, ազդային ինքնաճանաչութեան ուղին։ Նոյն գործողութիւնը կատարում է և Թիւրքահայաստանում։ Նազարեանը այս միտումի և հայ հասարակական դարձացման այս աստիճանի տեսաբանն է։

Ուսւագետականութիւնն էլ ինքնակործունչութեան րաւական ընդարձակ սահման էր գծել հայութեան համար։ 1863 թ. Թիւրքահայութեան ազդային-մշակութային իրաւունակութիւնը որոշում է Սահմանադրութեամբ և այնտեղ էլ ազդային-կրթական գործը դրում է իրաւական սահմանների մէջ։

Այսպիսով «հայ ազգը Թիւրքիոյ մէջ ձեռք էր բերում իրաւունք հիմնելու և կատարելագործելու իր սեփական զպրոցները, ինքնագլուխ վարելու իր կրթական գործը։ Հաճութեամբ ենք արձանագրում վաթունական թւականների արեւելեան մառախլապատ աշխարհում հոչակւած Սահմանադրութեան այն սկզբունքը, որ թելագրում էր տալ ձրիաբար ընդհանուր կրթութեան բարիքները երկու սեռի երեխաններին՝ առանց խորութեան դասակարգի ու հասարակական գիրքի։ Այստեղ է, որ երկան է զալիս Սահմանադրութեան նախադրութիւն հայ գործիչների՝ Ռուսինեանների, Ե. Օտականների ուամկավարական ողին» (Վարանդեան)։ Այս ձեռվ Սահմանադրութիւնը և «Պոլոժենիա»-ն դառնում են ոչ թէ եկեղեցական, այլ ազդային — կրթական յառաջադիմութեան խարիսխը, ուստի և հասկանալի է, թէ ինչու հայ մտաւորականութիւ-

Նը երկար ժամանակ կառչած էր նրանց պաշտպանութեան գործին, անդամ այն ժամանակ, երբ մեր հրապարակախօսութեա մէջ լուծւած էր ազգայնութեան խնդիրը և բաժանւած էր այն գաւանանքից: Հայ մտաւորականութիւնը, տվեալ պայմաններում, ընդունում էր նրանց անհրաժեշտութիւնը, պայքար էր մղում նրանց համար՝ յանուն հայկական մշակութային-կրթական հաստատութեանց:

Սակայն, Սահմանադրութիւնը ունենալով ամէն առաւելութիւն՝ ունէր և մի պակասութիւն՝ չէր կարող ապահովել հայի պատիւը, դոյքն ու կեանքը, չէր կարող բնականոն կեանք ստեղծել Թիւրքահայաստանում: Թիւրքն ու քիւրդը մնում էին դարձեալ իշխող և արտօնեալ, հայը դարձեալ ճորտ էր և իրաւագուրկ: Այս մի հատիկ պակասութիւնը ջնջում էր Սահմանադրութեան ընձեռած բոլոր առաւելութիւնները: Նա ունէր մշակութային հաստատութեանց իրաւունքներ, բայց հայի Փիղիքականը, պատիւը, դոյքը ապահովելու համար՝ անհրաժեշտ էր քաղաքական-պետական իրաւունակութիւն, մի բան, որ Ազգ-Սահմանադրութիւնը երազել անդամ չէր կարող: Եւ այս է պատճառը, որ նրա գործը շատ էլ զգալի չէր բուն երկրում Հայաստանում:

«Սահմանադրութիւնը ուժդին մղում տևեց հայ մտաւոր վերածնութեան... Նա փնտրեց հայ ազգի փրկութիւնը զպրոցի, եկեղեցու, վանքերի, մամուլի, թատրոնի մէջ» (Վարանդեան), իսկ այդ բոլորը բարձրացրին հայի ինքնազիտակցութիւնը և իրաւագիտակցութիւնը: Հինգ չնորհիւ Սահմանադրութեան հայի ինքնազգացումը զարգացաւ.

այժմ նա աւելի գժւարութեամբ պիտի տանէր այն հարստահարութիւնները, թիւրք-քրդական սպանիչ ոէժիմը, որի մէջդրւած էր նա: Բայց թիւրքահայոց ազատազրութեան գործում միայն դպրոցը, զրականութիւնը և մշակութային այլ գործօնները բաւակա՞ն էին արդեօք:

Խրիմեանը Բերլինի Վեհաժողովից առաջ գրում էր. «Հայոց ազգը երբեմն իր յոյսը Սահմադրութեան վրա դրած էր, այսօր ալ իր բոլոր ակնկալութեանց կենտրոն ըրած է դպրոցները և կըսպասէ, որ դպրոցներէն գտնէ ազատութիւն: Բայց միթէ այսքան ժամանակներէ հետէ ազգը դպրոց ունեցած չէ՞ր, որ չի կարաց ազատութիւնիթէ դպրոցի մէջ կը սովորէ հայը արիւնոռշտիւրդին թուրը ջախճախել»: 80-կան թւականներին արդէն պարզ էր, որ թիւրքահայութեան աղղային-քաղաքական, մարդկային-մշակութային իրաւունքների պաշտպանութեան համար Սահմանադրութեան ունեցած իրաւունքները և մշակութային-կրթական աշխատանքը անբաւարար է: Սահմանադրութիւնը դորձելու ընդունակ կը լինէր, եթէ երկրում գէթ տարրական՝ կարգ ու կանոն դոյսութիւն ունենար, գէթ ապահոված լինէր ժողովրդի ապրելու իրաւունքը, իսկ այդ բոլորը չկար. ուստի և նա միանդամայն անընդունակ էր հայութեան բարդ զատը լուծելու: Այստեղ, ուր բովանդակ մի ժողովուրդ դատապարտում է աստիճանական մահւան, ուր չկայ ոչ մի երաշխաւորութիւն՝ կեանքէ, պատիկ, այնտեղ, ուր քիւրդը տէր է հայի ամէն ինչի վրա, պայքարի, աղատագրութեան այլ գէնքեր են հարկաւոր:

Այն տեսակէտը, որ ստեղծւած պայմաններում  
Սահմանադրութիւնը անբաւարար միջոց է, տեղ է  
բռնում և Պօլսահայ մտաւորականութեան մէջ:  
Վարժապետեանը 70-կան թւականների սկզբին Աղ-  
գային ժողովում կրկնում էր՝ «ինչո՞ւ հայր իրը  
քաղաքացի ամէն պարտուց մասնակցի և իր իրա-  
ւոնքներէն զուրկ մնայ»: Իսկ Ստ. Փափաղեանը  
1971թ. նոյն ժողովում հրահանգում էր. «Հայն այլ  
ոգի պիտի առնու և ինքդինքն պաշտպանելու փորձն  
ընել պիտի ճգնէ կատաղի մոլեզնութեամբ, սրտա-  
պինդ, քան զքիւրդն պիտի կուի անոր հետ և  
քաջութեամբ իր պատիւը ու կինը կամ զաւակը  
պիտի աղաստէ անօրէնի ճեռքէն և զանի վանէ»: Եւ  
ապա. «դաւառացիք փոխանակ կեանքն ամբողջ  
հողագործութեամբ անցնելու, եթէ անոր մէկ  
մասը վառող գործածելու, ուր շողշողացնելու  
նւիրէին»... Ահա և Գր. Օտեանը՝ Ազգային ժո-  
ղովի ատենապետը. «Երբ զինուրին յատուկ եղած  
պատի զգացումը զարգանայ մեր մէջ ալ, այն  
ատեն հայը պիտի գտնէ իր նախնի նկարագիրը,  
որը պիտի վերականգնէ գլորման և ապականու-  
թեան վիճակէն, ուր ընկած է... Յայտնէնք աշ-  
խարհին, որ մենք ալ մարդ ենք և արիութիւն  
ունենք»:

Սա արդէն տարբեր ճայն է, որ հնչում է  
անհաշտ Սահմանադրութեան ոգուն: Նա իրաւունք  
էր տալիս բողոքելու, բայց «արիութեան» կոչեր  
անելու, «ուր շողշողացնելու» հրաւէր կարդալը՝  
նրա իրաւունքից դուրս էր:

Հայ մտաւորականութիւնը քողնելով մշակու-  
թային-կրթական ուղին՝ դուրս էր գալիս՝ օրինա-

կան հանապարհից և ընդգրկում յեղափոխական  
գործելակերպ:

Սա նշանակում է, որ Սահմանադրութիւնը իր  
գործը կատարել էր, իթան էր եղել հայի ազգային  
ինքնազիտակցութեան՝ նախ քան վերջինիս քաղա-  
քական յեղափոխութեան ուղին բռնելը: Հայու-  
թիւնը 70-կան թւականների վախճանին անցաւ  
մշակութային յեղափոխութեան հանդրաւնը և  
80-կան թւականներին մտաւ քաղաքական յեղափո-  
խութեան շրջանը: Ստեղծւել էր մշակութային  
հայութիւնը, պիտի ստեղծւէր և քաղաքական  
հայութիւնը:

Բերլինի վեհաժողովից յետոյ, 80-կան թւա-  
կաններին, հայութեան մէջ սկսում է եռ ու զեռ,  
կենդանի գործի մի ուժեղ հօսանք: Ինքնաքննա-  
զատութեան, նոր ուղիներ որոնելու շրջան էր  
այդ: Հայկական դատը առաջին անգամ միջազգա-  
յին քաղաքականութեան բեմ ելած՝ գոհացուցիչ  
լուծում չէր ստացել: Ի՞նչ պէտք էր անել:

Այդ հարցին ժամանակի մտաւորականութիւնը  
տալիս էր երկու պատասխան: Առաջինը՝ Բերլինի  
վեհաժողովի սահմանած բարենորոգումները հա-  
մարում էր այն հողն, որի վրա պէտք է սկսել նոր  
գործ և պատրաստել դալիք վեհաժողովների հա-  
մար: 61-րդ յօդւածը համարում էր մի նւաճում,  
առաջին ապտիճանը դիմելու դէպի հետևեալ յաղ-  
թանակը: Ի՞նչ պիտի անել հիմա, ինչպէ՞ս օգտա-  
գործել բարենորոգումները: Ահա ինչպէս է ձևա-  
կերպում Վարժապետեանը հայութեան անելիքը.  
«այսպիսի գործ ոչ մէկ օրեան մէջ, ոչ մէկ մարդու  
ձեռքով կրնայ կատարելի: Պատրաստւինք մեր ա-

պադային։ Նախ՝ չկենանք հոս։ Հայաստան երթանք, Հայաստան դրկենք՝ ինչ որ ունինք ազգին մէջ բանիբուն, տաղանդաւոր, ազգասէր, ուսումնասէր, եկեղեցասէր։ Հայաստան երթան մէր դատիարակներ, ուսուցիչներ, մէր այնքան վառվուն երիտասարդներ։ Ուղիներ պիտի բացւին, ջրանցքներ պիտի շինւին, դործարաններ պիտի կառուցւին. . . Հնդկաստանէն, Հայաստանէն, Անդվայէն, Թիւրքիայէն, Ռուսիայէն, Աւստրիայէն, և մինչեւ Պարսկաստանէն միանան, ձեռք ձեռքի տան բոլոր հայերը։

Հայաստանի պատագրումը այժմ դառնում է համայն հայութեան գործ և շահագրգոռութեան առարկայ։ Հայութիւնը անպարտրաստ էր վեհաժողովների հանդէպ. նա ներքնապէս պիտի պատրաստի, դառնայ կամքով ուժեղ, ազգային գիտակցութեամբ օժտւած միութիւն, դառնայ միջադաշին շահագրգոռութեան առարկայ։ Հայ մտաւոր ու քաղաքական կենտրոնը պէտք է լինի Հայաստանում։ «Դէպի՛ երկիր», «դէպի՛ Հայաստան» կոչը հնչում է ամէն կողմից։

61-րդ յօդ. սակայն չստեղծեց այն իրաւական, տանելի պայմանները, որ ոգեսորում էր Վարժապետեանին։ Նա մնաց մեռած տառ։ Հայաստանում հայի կացութիւնը աւելի վատթարացաւ. այժմ հայ տարրի բնաճնջումը դարձաւ համաչափ, հետեղական և պետութեան գլխաւոր խնդիրներից մէկը։ Հայութիւնը՝ 90-կան թւականներից սկսած՝ ամէն կողմից շտապեց դէպի Հայաստան, բայց «չթէ խաղաղ, օրինական աշխատանքի, այլ բոնու-

թեան դէմ յեղափոխութիւն սերմանելու նպատակով։

Կար և երկրորդ տեսակէտը. այդ Խրիմեանինն էր, որ մշակւել էր բուն հայ իրականութեան մէջ՝ տասնամեակների ընթացքում։ Նա հայ դատը համարում էր ձախողած. և պատճառը հայի կրաւորական գիրքն էր, ուղղմական պատրաստութիւն չունենալը։ Բոլգարիան աղատագրւեց, որովհետեւ «երկաթէ շերեքներ», սուր ունէր իր ձեռքին, իսկ հայերը մեծ պետութիւններին աղերսագրով ներկայացան և «մեր թղթի կտորը մնաց հարիսայի մէջ»։ «Շերեքներ են պէտք, շերեքներ», կոչում է Խրիմեանը և հրահանգում հայութեան՝ զինւել, զինք գործածել սովորել՝ գալիք վեհաժողովների հանդէպ պատրաստ լինելու և մեր բաժինը ստանալու համար։ Հէնց այդ ժամանակ Այվաղեան վարդապետը գրում էր «Փունջ»-ում. «պաշտպանել պէտք է աղգութիւնը՝ ինչ միջոցներով ալ ըլլայ՝ թէ բարոյական-ազգեցութեամբ, թէ բանութեամբ, թէ յեղափոխութեամբ, միայն թէ հայրենիքը փրկւի»։ «Ազգին հիւանդութիւնը՝ շարունակում է նա, բարոյական է. մեր ձեռքն է ապա բուռն ճիշտ մը ընելով և ընդհանուր ցնցում մը տալով աղատպիլ մեր այս հիւանդ վիճակէն, որ կրնայ մահարեր ըլլալ, եթէ մեր անհողութիւնը շարունակնը»։

Այսպիսով, ժամանակի մտաւորականութիւնը յանդում է այն եղբակացութեան, որ հայրենիքի փրկութեան համար ամէն ինչ թոյլատրելի է, անդամ բռնութիւն և յեղափոխութիւն։

Յեղափոխութիւնը հայի իրաւունքն էր.

ապստամբութիւնը՝ նրա պարտքը, որովհետև հայրենիքի ազատագրութեան ուրիշ միջոց գոյութիւն չուներ: Եւ 90-կան թւականներին հայ հասրակութեան ազգայնօրէն ապրող տարրը բռնեց այդ ուղին:

Նոյնը կրկնում էր և Ռուսահայաստանում. Հայրենիքի ազատագրման հարցը Բաֆֆու երկերում կենտրոնական տեղ է բռնում:

Արդ, ի՞նչ միջոցներ է առաջարկում նա հայրենիքի ազատագրութեան համար. «Տաճկահայաստանի հայոց խնդիրը պէտք է կայանայ այսուհետեւ անդադար ու անընդհատ նախազատրաստական գործի մէջ, որպէսզի նրանք կազմ ու պատրաստ հանդիպեն այն մեծ օրւանը, երբ կրկին անդամ կը դարկի ազատութեան ժամը: Իսկ այդ օրը կը կրկնի և շատ անդամ կը կրկնի, գուցէ շատ հեռու չէ և մեղանից» — ասում է նա մարգարէի նման իր «Տաճկահայք» գրւածքում: Ո՞վ է ստիպում թողնել հային իր հայրենիքը, հարցնում է նա և պատասխանում է. քրդական հարստահարութիւնները. «Դիցուք թէ կառավարութիւնը թոյլ է, բայց հայը իր անձի, ընտանիքի ու սեփականութեան տէրը մի՞թէ պարտաւոր չէ նոցա պահպանութեան համար ընդդիմանալ իր թշնամուն և թոյլ չտալ, որ կողովոտի իրեն: Գոյութեան կռի մէջ ամէն թոյլ ուժերը դատապարտւած են ոչընչութեան. ցանկանում ես ապրել՝ սովորիր դէմ դնել այն արգելքներին, որ խանդարում են քո բարօրութիւնը»:

Սակայն Բաֆֆին լաւ գիտէ, որ հայկական «Հայածանքները, յափշտակութիւնները պատահ-

կան երեսոյթներ չեն», որ նրանց մէջ մասն ունի թրքական իշխանութիւնը: «Կառավարութեան պաշտօնեանները իրենք են գրգռում այդ բարբարոսներին հայերի դէմ՝ քրիստոնեայ տարրը ոչնչացնելու համար»: «Այս բոլորի մէջ թագնւած կայ մի նախապէս մտածւած կարգադրուած իիմք և նպատակ, որ ծառայում է հայկական տարրը հետղետէ տկարացնելու, սպառելու և վերջնականապէս ոչնչացնելու մէջ»:

Այսպիսով թրքութիւնը չկարողանալով խաղաղ մշակոյթի ասպարիզում մրցել հայութեան հետ, չկարողանալով իր աղդ-քաղաքական մարմնի մէջ առնել նրան, գործադրում է այնպիսի միջոցներ, որոնք հայութեան բնաջնջման են տանում. «Եթէ մի քաղաքակիրթ մեծ աղդ կարող է կըսնել փոքր աղդութիւնները, նոյնը կարող է կատարել և մի անքաղաքակիրթ մեծ աղդութիւն՝ մանր, հակատակ ազգութիւնների վերաբերմամբ: Տարբերութիւնը միայն գործ կըսած միջոցների և հնարների մէջ է: Մէկը սպանում է բարբարոսական միջոցներով, միւսը կուլտուրայի միջոցներով»:

Արդ, այս կացութեան հանդէպ ինչ միջոցներ պիտի ընձեռնի հաւաքական հայութիւնը՝ փրկելու համար թէ իր Փիղիքական գոյութիւնը և թէ անաղարտ պահելու աղդ-մշակութային անհատականութիւնը:

Պէտք է նախապատրաստել հայութիւնը ասում է Բաֆֆին և գրա համար բաւական չէ մշակութային-կրթական աշխատանքը. անշուշտ, նա շատ կարեոր է. Բաֆֆու հերոսները մեր հայրենիքում մէկ մէկ առաքեալներ են՝ ուսուցիչներ, դպրոցա-

կան, կրթական գործիչներ, սակայն այդ քիչ է. «կոյք հնագանդութիւնը» պիտի արմատախիլ անել. «անընդհատ նախապատրաստութիւն» ասելով նա հասկանում է ժողովրդի զինումը իր պատրի և գոյքի պաշտպանութեան համար: Հայութիւնը պէտք է դաստիարակելի ինքնառաջտպանութեան բովում և այլտեղ պէտք է մշակւեն նրա ազգային իդէալները: Այդ գործին են նուիրւած «կայծերի» և «Խենթի» հերոսները, որոնք թէ խաղաղ-մշակութային գործիչներ են, թէ յեղափոխական, ապօստամբներ՝ լի հաւաքական հայութեան գիտակցութեամբ: Բաֆֆին համոզւած է, որ առանց հոգեկան յեղաշրջման չկայ ու չի կարող լինել քաղաքական յեղաշրջում: «Եթր մի ժողովուրդ այնքան զարդացած է, որ հասկանում է իր իրաւունքները և հասկանում է, որ ինքը բոնաբարուում է, և միևնույն ժամանակ այնքան պատրաստւած է, որ կարող է ընդուժմադրել բոնակալի կամայականութեանը, ժողովուրդը ինքն է իր բողոքը բարձրացնում թէ զէնքով և թէ խօսքով: Այդ լինում է յեղափոխական ցոյցերով և դրան ասում ենք, թէ ազատութեան զգացմունքն արմատից է ծագում, ամբոխի տիցն է բղխում, ցածից դէպի վեր է բարձրանում»:

80-կան թւականներին յաճախ արտայայտուած էր մի տեսակէտ, ըստ որի «մեր ապագան Թիւրքիայումն է»: Այդ տեսակէտը մշակւել էր երկու ազգակների ազգեցութեան տակ: Նախ՝ Ռուսաստանում արդէն ծայր էր ստանում հայահալածքաղաքականութիւնը, ուստ մշակոյթը աստիճանաբար իր ձուլիչ գործը կատարում էր. ժամանակի մտածողները ցալով տեսնում էին, որ ոռուսահա-

յութեան ապագան վտանգւում է. բայց, փոխանակ իրական միջոցների մասին խորհութեալ՝ հայութեան ապագան Ռուսահայաստանում ապահովելու, ուշաղրութեան կենտրոնը դարձնում էին սահմանից այն կողմը՝ Թիւրքիա, ուր կար հոծ հայութիւն, և որին մշակութային վտանգ չէր սպառնում:

Կար և երկրորդ պատճառը. — Եերինի վեհաժողովի 61-րդ յօդւածը՝ համարւում էր այն հիմքը, որով սկսում է հայութեան համար մի նոր զարագլուխ: Ռուսը աղճատում էր հայի հոգին, ահա Թիւրքահայաստանում նոր հնարաւորութիւն է բացւում հաւաքական հայութեան նորանոր յառաջադիմութեան համար:

Բաֆֆին նման մտածողութեան դէմ է. դրանք «երեխայամիտ կարճատեսներ» են, որոնք չեն թափանցում Հայաստանում կատարւող երևոյթների խորքը և չեն ըմբռնում, «թէ որպիսի դժոխային մէքենայութիւններ է թաղնւած նրանց տակին»: Թիւրքիոյ նպատակն է՝ ոչնչացնել իր պետութեան սահմաններում գտնուող քրիստոնեայ տարրին, որպէսզի անփիթներ չտայ «քրիստոնեայ թաղաւորներին միջամտելու Թիւրքիոյ գործերու մէջ»: Արևելեան հարցը կայ՝ Թիւրքիան ուզում էր լուծել այն սխատեմատիկ կոտորածներով, քրիստոնեայ պետութիւնները՝ նորանոր գրաւումներով: «Քրիստոնեաների պատճառով Թիւրքիան իր եւրոպական նահանգներից շատերը կորցրեց և մնացածը կորցնելու վրա է: Իսկ Ասիական երկիրներում իր ամբողջութիւնը պահպանել է միայն Փոքր Ասիան: Այստեղ՝ գլխաւոր քրիստոնեայ աղ-

դութիւնը, որ սպառնում է պետութեան այդ  
մասի անջատմանը, հայն է: Ուրեմն, եւրոպա-  
կան պետութիւնների ձայնը կտրելու համար՝  
պէտք է ցոյց տալ նրանց, որ Հայաստանում հայ  
չկայ: Այդ սպառնութեան գործի մէջ Թիւրքիան  
ընտրել է ամենայարմար դահիճները՝ քրդերին ու  
չերքեղներին»:

Ահա ինչպիսի պայածուատեսութիւն ունի Թիւր-  
քիոյ գործերի նկատմամբ Բաֆֆին. Հայութեան  
ապագան վտանգւած է ոչ միայն Թուսահայաստա-  
նում, այլ և Թիւրքաց-Հայաստանում: Այստեղ՝  
աւելի ևս, որովհետեւ Թիւրքիան սպառնում է  
նրան Փիղիքական բնաշնչումով: Երևոյթների  
այսպիսի ըմբռնումն է, որ հրահանգում է Բաֆ-  
ֆուն՝ հիմնովին անջատել Հայութեան բախտը  
Թիւրքիայից: Թիւրքիոյ սահմաններում հայու-  
թեան աղդ-մշակութային ապագան ապահովելու  
խաղաղ, օրինական միջոցներ գոյութիւն չունեն:  
Թիւրք-հայկական կնճիռը՝ այն՝ ձեռվ, ինչպէս  
հասկանում և դնում էր Թիւրքիան, անլուծելի է  
խաղաղ միջոցներով: Ուրեմն՝ եթէ Հայութիւնը  
չէր ուզում դոհ դնալ թրբութեան դիւային ծրա-  
դիրներին, պէտք է այլ գործելակերպ ընտրէր:  
«Հայերը իրենց լուռութեամբ, իրենց համբերութիւ-  
նով և իրենց մեծայոյս սպասումներով ոչինչ չեն  
ստանալ... Հայերը պէտք է բողոքեն. և այդ բո-  
ղոքը պէտք է յայտնւի նոյն ձեռվ՝ որպէս յայտ-  
նեցին միւս քրիստոնեայ ազգերը»: «Եթէ Հայերը  
ցանկանում են մի բան ստանալ և աղատ լինել՝  
պէտք է ցոյց տան, որ իրենք ևս զուրկ չեն քա-  
ջութիւնից, թէ իրենք ևս սպանել դիւեն»:

Ուրեմն, Բաֆֆին պարզապէս թելադրում է  
ընդգրկել պայքարի այն եղանակը, որ գոր-  
ծադրում էր Բալկաններում՝ ապստամբութիւնը:  
Այլ միջոցներ չկան հայութեան հանդէպ: Եթէ  
չենք ուզում, որ «լեզուն, այդ սրբազան ժառան-  
գութիւնը կորչի հայ մարդու բերանից», եթէ  
չենք ուզում, որ հայութիւնը «պատմութեան մի  
տղեղ այլանդակութիւնը լինի», պիտի բռնենք  
«անձնաւաշտապանութեան» այդ ուղին:

80-կան թւականներին հայութիւնը պատրաստ-  
ում էր ընդօրինակելու ազգային ազատագրման  
համար՝ եւրոպայում կիրառող միջոցները, ինչ-  
պէս ընդօրինակել էր, աւելի ճիշտ եւրոպական  
մշակոյթի ազգեցութեան տակ, մշակել էր հայոց  
ազգայնութեան գաղափարը:

Ճնշւած, ուրիշներին ենթակայ ազգերի կեան-  
քում հոգեկան յեղաշրջումը զարգացման մի ան-  
հրաժեշտ տարրն է. սակայն, որպէսզի ազգութեան  
աղատագրումը լինի կատարեալ, նա պէտք է ամ-  
բողջանայ քաղաքական յեղափոխութեամբ: 19-րդ  
դարում հայութիւնը հաւաքեց իր բոլոր ուժերը և  
դարձաւ գիտակցւած մշակութային ազգութիւն: Մենք  
տեսնում ենք, թէ ինչպէս ուռծանում ու  
մշակում է հայոց նոր լեզուն, նոր գրականու-  
թիւնն ու արևեստը, նոր մամուլն ու հրապարա-  
կախօսութիւնը, գլորոցը, թատրոնը. հայ մտաւո-  
րականութիւնն ուժեղանում է որակով և քանակով.  
գրել—կարդալը դառնում է անհրաժեշտութիւն  
ամենուրեք: Հայածւած հայ գլորոցը գաղտնագողի  
պահում է գոյութիւնը, նոյնպէս գաղտնի հիմնում

Են գրադարաններ, կարդացւում է հայոց գրականութիւնը, մարդիկ ապրում են նրանով, փոխում հոգեպէս՝ նրա ազգեցութեան տակ. ստեղծում է նոր մարդ, հանրային՝ հայկական կեանքով ապրող, կապւած ազգային-մշակութային կապերով միւսների հետ: Բռնութեան գծած սահմանները վերանում են. ազգայնութիւնը մշակում է մի հայի գաղափարը և հետաքրքրութիւն ստեղծում թիւրքահայութեան հարցի շուրջը, որպէս աւելի հրատապ, աւելի շուտակիոյթ լուծում պահանջող խընդրի:

Բայց հայութեան այս զարթօնքը հէնց առաջ պիտի բերէր քաղաքական յեղաշրջման պահանջ: Սա ինքնարերաբար, տրամաբանօրէն բղխում է առաջինց. միշտ և ամէն տեղ մշակութային վերածնութիւնը եղել է այն իմֆը, որի վրա իր շենքն է հաստատել քաղաքական յեղափոխութիւնը: Այդ է ցուցահանում բոլոր ճնշւած ազգերի աղատագրական դիորձը. չկայ պատմութեան մէջ աղացային-քաղաքական յեղաշրջում, որին նախորդած ըինի ազգային-մշակութային յեղաշրջումը. դրանք ազգութեան զարգացման երկու շատ անհրաժեշտ հանդրտաններ են:

Մեր ազգային առաջին վերածնութիւնը, որ տեղի ունեցաւ 5-րդ դարում, ոչ միայն ազգ-մշակութային յեղաշրջում էր՝ ուղղած հաւասարապէս թէ բարձր մշակոյթ ունեցող Բիւզանդիոնի և թէ Պարսկաստանի դէմ, այլև իր մէջ պարունակում էր քաղաքական յեղաշրջման սաղմերը: Սկսւեց նա հայ գրերի գիւտով, զարդացաւ որպէս ազգային գրականութիւն, ազգային եկեղեցի, վերջացաւ որ-

պէս Վարդանաց պատերազմ: 420-կան թւականների հայութիւնը իրեն գիտակցում էր որպէս ազգ-մշակութային միաւոր, 450-կան թւականներին նա փորձեց պաշտպանել երբեմնի քաղաքական անկախութեան մնացորդները, որ և յաջողւեց մասմբ նոյն դարի 80-կան թւերին: Նոյնը և 19-րդ դարում. հայոց վերածնութիւնը կարող էր ստեղծել և պէտք է ստեղծէր հայ յեղափոխութիւնը. սա նրա վախճանն էր: Մշակութային վերածնութիւնը ճնշւած ազգերի մէջ, եթէ չի առաջացնում քաղաքական յեղափոխութիւն, նշանակում է կամ գոյութիւն չունի առաջինը, կամ, եթէ կայ էլ, կիսատ է, ոչ լիւ:

Այս բոլորից յետոյ ծիծաղելի է թւում, երբ մարդիկ դատապարտում են հայ յեղափոխութիւնը, մեր ազատազրական շարժումը: Նրանք՝ տրամաբանական լինելու համար մեղադրական աթոռին պէտք է նստեցնեն ամենից առաջ հայ յեղափոխութեան հոգիոր ծնողներին — հանճարեղ սիրտունցող Աբովեանին, հայութեան հանդէպ հայրենին, հայութեան հանդէպ հայրական դութ և սէր տածող Նազարեանին, իր ներքին կրակով այրուղ Նալբանդեանին, բնատուր մեծ իմաստասէր Խրիմեանին, մէծ հայրենասէր, բայց երբէք հայրենիքը չտեսած Ալիշանին, իսկական յեղափոխութիւնը յղացող՝ Բաֆֆուն: Այլապէս անհետեղական է խնկարկել այս մեծ մարդկանց, որոնցով մենք իրաւունք ունենք պարծենալու, խնկարկել և դատապարտել նրանց գործը: Հետեռդական լինելու համար պէտք է դատապարտէլ հայոց գրականութիւնը, որ հայ ազգայնութեան գողող-միացնող կապն է, նրա հոգերը անօթը:

Բայց, այն ժամանակ, ի՞նչ կը մնայ հայութիւնից. Հանեցէք հայութեան մարմնից մեր գրականութիւնը, դպրոցը, մեր հասարակական-քաղաքական միտքը, մեր յեղափոխութիւնը, և այլես գոյութիւն չի ունենայ հաւաքական հայութիւն. հայը կը մնայ լոկ որպէս ազգագրական տարր :

Հայութիւնը ինքն իրենից հրաժարւել չէր կարող. հայոց ազատամարտի գրականութիւնը, հայ դպրոցը և ազգային հրապարակախօսութիւնը անհրաժեշտաբար պէտք է ստեղծէին հայոց յեղափոխութիւնը : Քաղաքական յեղափոխութիւնը բնական և ամենիշական շարունակութիւնն է մեր բանաւոր յեղափոխութեան :

## VIII

### ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Ութսունական թւականների վախճանին և ինսնականի սկզբին հայ քաղաքական մտածողութիւնը ստանում է գործնական ընթացք։ Հանդէս են գալիս կուսակցութիւններ՝ սկզբում արմենականները, ապա հնչակեանները և Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Դրանից գեռ առաջ հայկական կեանքում տեղի էին ունենում յեղափոխական-ապստամբական գործեր և կային գաղտնի կազմակերպութիւններ։ 1862թ. Զէյթունի ապստամբութիւնը ցնցում է ողջ հայութիւնը. բանաստեղծները երգի նիւթ են դարձնում այն, կրթւած, մտաւորական գասը՝ խորհրդածութիւնների։ Նորատունկեանը 1863-ին քաղաքական որոշ ծրագիր է մշակում՝ հայութեան ապստագրման և չործակցութեան է հրաւիրում հայ հոգևորականութեան. Մ. Պէշիկթաշլեանը բանակցում է լեհ իշխան Զարտորիսկու հետ, որը խնդրում էր օժանդակել լեհական ապստամբու-

թեան՝ Ռուսահայաստանում առաջ բերելով ապլստամբութիւն։ 1872թ. Վանում կազմակերպում է դադտնի մի ընկերութիւն «Միութիւն ի փրկութիւն» անունով։ Ահա ինչպէս բնորոշում է հայութեան կացութիւնը՝ այդ կազմակերպութիւնը։ «Պնաց մեր պատիւը, պղծւեցան մեր եկեղեցիք, առևանդեցին մեր հարսունքն և երիտասարդունք։ յայտնապէս կը խլեն մեր իրաւունքը մեր ձեռքէն և իսպառ-սպոռու մեր ազգութեան սերունդը ջնջելու կը ճգնեն։ Վասնորոյ կամ պէտք է մեռնիլ և չտեսնել այս սարսափելի վիճակը և կամ վերակենդանութիւն ստանալ ի ծոց հայրենաց։ Ալ ի՞նչ կապասենք. կեանք չունենք՝ մահէ կը վախնանք. ստացւածքնիս ու վաստակնիս մերը չէ. եկեղեցիք ունենք՝ ամէն օր հալածանաց մէջ է, կը նախատեի»։ Այս գաղտնի կազմակերպութեան միանում են Վանի շրջանի գիւղացիները և ահա ինչ են գրում դադտնի կոմիտէին. «ուստի ալ չկարողանալով տոկալ սոյն անկրելի լուծին՝ ձեզ կը դիմենք ձեզ հետ միանալու. թերես դարման մը գտնինք, թէ ինչ միջոցով կարելի է այս չարիքներէն փրկւիլ»։ 70-կան թւականների վերջերին էրզրումում հիմնում է «Գաղտնի ընկերութիւն Բարձր Հայոց» միութիւնը։ Նրա անդամներն էին արհեստաւորներ, մանր վաճառականներ և գիւղացիներ։

Այս փաստերը ցոյց են տալիս, որ հայութիւնը ամենուրեք՝ ինքնաբերաբար, տարրերային ձեւով դիմում էր յեղափոխական միջոցների։ Անչուշտ, յետպայ պատմագիտական պրատումները աւելի ու աւելի շատ փաստեր պիտի հանդէս բերեն այդ

ուղղութեամբ\*): Ի՞նչ քաղաքական հեռանկար ունեն այս կազմակերպութիւնները—այնքան էլ որոշ չէ, բայց փրկութեան միակ յոյսը նրանք կապում են դէնքի հետ։ «Թէ ոռւսանալ հարկէ՝ ոռւսանանք, բայց փրկւենք, թէ գաղթել՝ գաղթենք, թէ մեռնել՝ մեռնենք, թէ կուել՝ կուենք, բայց փրկւենք, այս է մեր աղերս առ ձեզ և առ Աստւած», գրում են վանի գիւղացիները։

Սկզբից և եթ հայկական ազատագրական շարժումը վարակում է ուամկավար տարրերին — գիւղացիներին, արհեստաւորին, մանր վաճառականին։ Այս փաստը բնորոշում է նաև մեր յեղափոխութեան յետպայ բնոյթը։ Հայ հարուստը միշտ հեռու մնաց մեր քաղաքական շարժումից, բաւականացաւ՝ խոհեմութեան, հնագանդութեան քարոզներ կարդալով հայ յեղափոխութեան։ Յեղափոխութեան գլուխ անցաւ ժողովրդից ծնած մտաւրականութիւնը։ Այսպիսով հայոց ազատագրական շարժումը ստացաւ ժողովրդական, բայց ոչ ազգային բնոյթ։ Հայութեան հարուստն ու վարիչ մասերը չմիացան խոնարհ խաւերի ու մտաւորականութեան հետ, ուստի և հայ յեղափոխութիւնը ստացաւ իիստ շեշտած ուամկավարական բնոյթ։ Այս երեսոյթը ատլիս էր նրան աւելի գաղափարական գունաւորում, բայց և թուլացնում էր նրան և սահման դնում նրա թոփչքին։ Նրան պակասում էր նիւթականը, որ չէր տալիս հայ

\*) Առաջ միւր է տալիս տանկահայոց կացութեամ և մեր ազատագրական շարժման ծագման մասին գ. Տահ. Աղամեամի «Դիւան Հայոց պատմութեան» ժողովը։

բուրժուաղիան, դործելու վորձը, որ մերժում էր  
հայ ազնւականը:

1885թ. Մկրտիչ Փորթուգալեանը Մարսէյլում  
Հիմնում է «Արմէնիա» թերթը. Վանում կազմւում  
է առաջին քաղաքական կուսակցութիւնը: «Արմեն  
նականները» սկզբից և եթ չընդգրկեցին յեղափո  
խական դործելակերպ. նրանք, եթէ կարելի է  
ասել, ընդդիմադիրներ էին՝ կանգնած օրինական  
ճանապարհի վրա. համարում էին իրենց Թիւրքիա-  
յի քաղաքացի, ուրեմն չըրեցին ուրոյն հայկական  
քաղաքական նպատակ: Բայց Թիւրքիոյ քաղաքա-  
ցիութեան գաղափարը ներհակ էր իսլամի և Թիւրք  
պետութեան գրութեան և անգամ այդ սահմանում  
անհրաժեշտ էր գառնալ յեղափոխական: Ուստի  
Փորթուգալեանի «Արմենիա»-ն աստիճանաբար  
ստանում է յեղափոխական գունաւորում: Արմե-  
նականները սկզբում վարչական բարենորոգու-  
թիւնները, հայոց ինչքի ու պատուի պաշտպանու-  
թիւնը սպասում էին Թիւրք կառավարութիւնից:  
Յետագայում յուսախաբւած, նրանք զինակցում են  
Հնչակեանների, Հ. Յ. Դաշնակցութեան հետ և  
դործակցում Վանում, որպէս յեղափոխականներ:

Նրանք ձգուում էին գաղափարական մօտիկու-  
թիւն ստեղծելու հանուր հայութեան մէջ՝ ուշա-  
ցութեան կենտրոնը դարձնելով Հայաստանը,  
ընդհանուր միջոցներով բարձրացնել թիւրքահա-  
յութեան տնտեսութիւնը և կրթական մակարդակը:  
Անգամ այս ծրագրով թրքական իշխանութիւնը  
հալածանք հանեց արմենականների դէմ: Թէ ի՞նչ-  
պէս էր գոհացնում Արմենական կուսակցութիւնը  
հայութեան, երևում է այն բանից, որ նա դարձաւ

միայն Վանի կազմակերպութիւն, աւելի ապահով  
խաւի սեփականութիւն: «Նրանց բունը առաւե-  
լապէս հանդիսացաւ Վանը, ուր հոսանքի հիմնա-  
դիրը մտաւոր սերմնացանի դեր էր խաղացել:  
Յեղափոխական ուամկավարութիւնն էր այդ հո-  
սանքը, որ քաղաքական գուուշաւոր և ըրջանկատ  
դործելակերպին միացնում էր ինքնապաշտպանու-  
թեան և կուլտուրական գարզացման պրոպագան-  
դը»: (Դ. Անանուն):

1887թ. Ժընկում հրատարակւում է «Հնչակ»-ը  
և ապա՝ հիմք է դրում Հնչակեան կուսակցու-  
թեան: Հիմնադիրները ուսանողներ էին՝ կրթւած  
ուստական և եւրոպական ուամկավար և ընկերվա-  
րական գաղափարներով: Ի՞նչ քաղաքական ծրագ-  
րով էր հանդէս զալիս այդ կուսակցութիւնը: Իր  
դործունկութեան սապարէզը նա համարում էր  
Թիւրքիան, ուր ձգտում էր՝ «յեղափոխել և ոչըն-  
չացնել միապետական կարգերը. փրկել հայ ժո-  
ղովրդին իր ընդհանուր ստրկական գրութիւնից,  
տալ նրան քաղաքական կարելիութիւն միջամտելու  
քաղաքական գործերում, վերացնել այն խոչըն-  
դունները, որոնք արգելք են լինում նրա տնտեսա-  
կան գարգացման, առհասարակ նրա կուլտուրական  
յառաջադիմութեան»... Ուստի կուսակցութեան  
«մօտակայ նպատակն է կոխ մղել միապետական  
կարգերը տապալելու համար և նրանց փոխարինե-  
լու հանրային ուամկավարական, սահմանադրական  
կարգերով»:

Սա ընդհանուր քաղաքական պահանջ է, որ  
առաջադրում է այդ կուսակցութիւնը, սակայն,  
ի՞նչպէս է լուծում հայկական հարցը: Նրա տեսա-

կէտով հայկական հարցը թիւրքահայութեան հարցն է և քաղաքական հայութիւնը «կազմում են թիւրքահայերը, և նրանց բնակավայրը մէր հայրենի հողի ամենամեծ տարածութիւնն է»: Այստեղ «թիւրք տէրութեան միապէտական կարգերը՝ քաղաքական, հասարակական ու տնտեսական անտառնելի ճնշման են ենթարկում հայ ժողովրդին» և այդ պայմաններում «հնարաւոր չէ որեւէ յառաջադիմութիւն»:

Կուսակցութիւնը պահանջում է 1. «որ հայ յեղափոխական գործունէութիւնն այսօր բացառապէս նւիրեի թիւրքահայ ժողովրդային դատի պաշտպանութեան և լուծման համաձայն մօտակայ նպատակի. 2. որ, ուրեմն, յեղափոխական գործունէութեան ասպարէզը թիւրքահայաստանն է, 3. որ հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագիրը միանդամից ընդմիշտ պէտք է զատուի թիւրքական կայսրութեան ճակատագրից, ըստ որում պտմական պահանջ ու անհրաժեշտութիւն է ներկայանում հայ ազգային անկախութիւնը, որն էլ այդպիսով կազմում է մօտակայ նպատակի մի հիմնական մասը և առաջին պայմանը»:

Այսպիսով, Հնչակեան ծրագիրն իր քաղաքական պահանջով սերտ առնչութեան մէջ է մտնում ժամանակի հայ քաղաքական մտածողութեան հետ: Յատկապէս Բաֆֆին այդ ծրագրի հողեհայրն է: Հայաստանի անկախութեան գաղափարը նա է սուեդել իր «Խենթ»-ի մէջ: Խրիմեանը, Ալիշանն ու Վարդապէտեանը մթաղնած, աղօտ զգացին նրա ահրաժեշտութիւնը: Հնչակեան կուսակցութիւնը անկախ Հայաստանը պատկերացնում է «մէր

հայրենի հողի ամենամեծ տարածութեան վրա»՝ թիւրքահայաստանի: Այստեղ էլ նա հետեւում է Բաֆֆուն, որը Ալաշկերտի հովիտն է համարում անկախութեան կենտրոնը: Ապա՝ կար և իրաւական հիմունքը: Թիւրքահայաստանը արդէն միջազգային դիւանագիտութեան նիւթ էր: Կար և բարոյական հիմունքը: Ողջ հայութիւնը արդէն հետաքըլքըրուում էր հայկական հարցով, նա զառնում էր համագոյային սեփականութիւն: 61-րդ յօդւածը ամենքի ուշադրութիւնը դարձեց դէպի թիւրքահայաստան, և Հայաստան ասելով՝ հասկացւեց թիւրքաց Հայաստանը, հայկական դատ ասելով՝ հասկացւեց թիւրքահայոց դատը: Եւ ժամանակի ամբողջ հրապարակախօսութիւնը՝ Գ. Արծրունի, Սպանդարեան, Աբ.Յովհաննիսեան, Բաֆֆի՝ հայկական հարցը նոյնացնում էին տաճկահայութեան հարցի հետ: Ռուսահայութիւնը կամ պահեստի մի բանակ էր բոլորի համար՝ նիւթապէս, բարոյապէս օժանդակելու թիւրքահայութեան, կամ, չդնելով քաղաքական նպատակներ՝ ջանում էր որեւէ ձեռվ պահել իր մշակութային-կրթական հաստատութիւնները:

Այսպիսով, Հնչակեան կուսակցութիւնը հաւաքում է, խտացնում իր մէջ հայ «բանաւոր» յեղափոխութեան գաղափարները և ձևակերպում, որպէս ծրագրային պահանջ, ուստի և այդ կուսակցութեանն է պատկանում Հայաստանի անկախութիւնը ծրագրային հարց դարձնելու պատիւը: Հայաստանի ազատագրման լաւագոյն միջոցը նա համարում է ժողովրդական ըմբոստացումը, ապստամբութիւնը: Այս տեսակէտը մշակւել էր տասնամեակների ըն-

թացքում, հայկական տառապանքի անմիջական աղդեցութեան տակ: Հնչակեան կուսակցութեան մնում էր ապացուցանել, թէ որքան հնարաւոր է իրականացնել պայքարի այդ միջոցներն ու ազգային աղատագրութեան գաղափարը: Այդ կողմից, դժբախտաբար, նա սայթաքեց. թէ իր կաղմակերպչական եղանակով, թէ ղեկավար մասի անձնական կազմով՝ Հնչակեան կուսակցութիւնը չղարձաւ այն ոյժը, որ հայութիւնը մղելու էր դէպի աղատագրական աշխատանք:

1890թ., Թիֆլիսում, հիմնում է Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը, որ նոյնպէս գործն էր ոռուսական ժողովրդական-ընկերվարական գաղափարախօսութեամբ կրթւած ոռուսահայ մտաւորականութեան. նրանց գաղափարները օտար, անհարազատ չէին մեր իրականութեան: Նրանք ձևաւորել, յարմարւել էին մեր պայմաններին, հայցել և դարձել ազգակը հայ կեանքի, իսկ նրանց կրողները՝ շարունակողը հայ քաղաքական մտքի: Ահա ինչու միանդամայն սխալ է Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարախօսութիւնը բացատրել լոկ օտար աղդեցութիւններով և յայտարարել, թէ նա անհարազատ է մեր կեանքին:

Աղդեցութիւնների հարցը շատ հետաքրքրական է ու շատ բարդ: Մեր մտաւորականութեան ամրող պատմութիւնը եւրոպական և ոռուսական մտաւոր—քաղաքական աղդեցութեանց պատմութիւնն է. սակայն, այդ ինդըի արտաքին կողմն է լոկ, և ովքեր միայն այդ են տեսնում, չեն կարող ըմբըռնել մեր պատմութեան ներքին իմաստը: Օտար գաղափարներս, օտար սկզբունքներն ուղևացեւ, ու

բեղմնաւորել են մեր իրականութեան մէջ այնքան, որքան հող են գտել այնտեղ, այդ ձեռվ մերեւել են տիրող պայմաններին, ազգայնացել-հայացել: Եւ Հ.Յ. Դաշնակցութեան գաղափարախօսութիւնն էլ օտար էր միայն արտաքին ձեռվ. իր ներքին բովանդակութեամբ նա շարունակում է դնել և լուծել այն հարցերը, որոնք հասարակական ժառանգականութեամբ ստացել էր նախորդ սերնդից: Ընդամենը երկու տարի յետոյ Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը վեր է ածւում Հայ Յեղափոխական, Դաշնակցութեան, որով աւելի ներդաշնակութիւն է մտնում նրա աշխարհահայեցողութեան և գործելակերպի մէջ: Ի՞նչ քաղաքական իդէալ էր դնում Հ. Յ. Դ. Դաշնակցութիւնը:

1892թ. ընդունւած ծրագրում այդ ձեռակերպւած է այսպէս. «Հ. Յ. Դաշնակցութեան նպատակն է ապստամբութեան միջոցով Թիւրքաց Հայաստանի մէջ ձնոք բերել քաղաքական ու տնտեսական աղատութիւն»: Եւ միայն այսքան: Նրա պահանջները չեն անցնում քաղաքական ուամկավարութեան սահմաններից: Նա ձգտում է ստեղծել իրաւական պետութիւն և ապահովել հայութեան աղդային բնականոն գարգացումը: Հ. Յ. Դաշնակցութիւնը, իր ծրագրում, քաղաքական իդէալը յստակօրէն չի ձևակերպել. Հնչակեանները աւելի որոշ պատասխան էին տալիս առաջադրած հարցին: Ծրագրի մէջ հանդիպում ենք այսպիսի նախադասութեան. «ապագայ ազատ Հայաստանի մէջ իշխող ժողովրդական ուամկավարական կառավարութիւնը...» Ուրեմն, Հայաստանը կառավարութիւն ունի, այսինքն գերագոյն իշխանութիւն. բայց

որոշ չէ Աղաս Հայաստանի անկախ լինելը, որովհետեւ կառավարութիւն ունենալը միայն անկախ պետականութեան յատուկ չէ, այլև ուրիշ ձևերին, օրինակ՝ դաշնակցական (Փէղէրատիւ) ձևին։ Արդ՝ հարց է ծագում, թէ Հ.Յ. Դաշնակցութեան ծրագրում հայութեան քաղաքական խնդիրը լուծում էր դաշնակցութեամբ, թէ՝ անկախութեամբ։ Անկախութեան հաւանականութիւնը բղխում է մեր հասարակական-քաղաքական մտքի ընթացքից։ Դաշնակցային ձևը միանդամայն նոր գաղափար էր լինելու մեր քաղաքական ըմբռնումների մէջ և խորթ ընդհանուր միտումին։ Սակայն, ընդհամենը մի տասնեակ տարի յետոյ Հ.Յ. Դաշնակցութիւնը յարում է դաշնակցութեան գաղափարին։ Եթէ նա, իրօք, «ազատ Հայաստանը» պատկերացնում էր անկախութեան ձևով, ապա այդ թոփչքը՝ անկախութիւնից դէպի դաշնակցութիւն՝ դիւրութեամբ չէր անի։ Յամենայն դէպս, խնդիրը մնում է մութ և արժէ, որ մեր քաղաքական մտքի այս կէտը ենթարկել լուսաբանութեան։

1892թ. ծրագիրը վերլուծութեան է ենթարկում Թիւրքիայում գոյութիւն ունեցող քաղաքատնաժեսական պայմանները, բայց ոչ մի խօսք չի ասում ուստահայութեան մասին։ Ասել է, որ Հ.Յ. Դաշնակցութիւնն իր գործունէութեան միակ վայրը համարում է Թիւրքահայաստանը։ Աշխատանքի եղանակն էլ նոյնն է։ «այս բոլորին, ասում է Հ.Յ. Դ. ծրագիրը՝ վերլուծելով տաճկահայ իրականութեան պայմանները, վերջ կարող է տալ միմիայն բոնի յեղափոխութիւնը, և մենք ալ ատոր կը դիմենք. պէտք է թօթափել այդ խայտառակ

լուծը, ոչնչացնել արդի միապետական բռնակալ թէժիմը, ձեռք բերել ազգերու համերաշխութիւն, աշխատանքի ապահովութիւն, խղճի, խօսքի և համոզմունքի ազատութիւն»։ Այս միջոցը որպես գրել էր և Հնչակեան կուսակցութիւնը. այս տեսակէտից նրանց մէջ տարբերութիւն չկայ։

Այժմ, մի հարց պիտի հետաքրքրի մեզ. ինչո՞ւ հայ քաղաքական միտքը սկսած 70-կան թւականներից և հայ քաղաքական կուսակցութիւնները 80-կան թւականից Հայաստանը որոնում էին թիւրքիոյ սահմաններում։ Ուստահայաստանը նոյնքան իրաւունք ունէր Հայաստան համարելու պատմական ու ազգագրական տեսակէտից, որքան և Թիւրքահայաստանը։ Բայց ամբողջ 19-րդ դարում հայ քաղաքական մտածողութիւնը և կուսակցութիւնները որևէ քաղաքական ձեակերպում չտան ուստահայութեան պահանջներին։ Նազարեանի դասական բանաձեռ մնաց իր ոյժի մէջ մինչև 20-րդ դարի սկիզբը։ Ինչո՞ւ Հայութիւնը իր ուշքը դարձրեց միայն թիւրքահայութեան վրա։ Դրա համար գոյութիւն ունէին մէկից աւելի պատճառներ։

Սկսած 17-րդ դարից Թիւրքիայի պատմութիւնը նահանջների, անկումների, ներքին և արտաքին պարտութիւնների պատմութիւնն է։ 18-րդ և 19-րդ դարերում նա ստիպւած է լինում թողնել Բալկանների երեք քառորդը, Ղրիմը, ասիական հողերի մի զգալի մասը, բազմաթիւ կղզիներ Միջերկրական ծովում, հրաժարել հիւսիսային Ափրիկէից և աստիճանաբար հաւաքել ու կծկւել Փոքր-Ասիայի շուրջը և գրաւել ինքնապաշտպանութեան դիրք։

Երկու դարից աւելի եւրոպական մեծ պետութիւնները աշխատել են հնար եղածին չափ համեղ պատառներ կտրելու «Հիւանդ մարդու» դիակից: Թիւրքիան եղել է միջազգային վաճառքի, առևտրի առարկայ: Նա դիմում էր դէպի անկում: 19-րդ դարում մեծ պետութիւնների կողքին երկում են Թիւրքիայի մարմնից իսկ ծնունդ առած նոր աղութութիւններ, որոնք ձգտում են տէր դառնալ իրենց հայրենի հողին: Սրանց ժառանգական իրաւունքը ճանաչում է մեծ պետութիւնների կողմից, և Թիւրքիոյ պետութեան սահմաններից դուրս և նրա հաշվին ստեղծում են Յունաստան, Թումանիա, Բոլգարիա և մի շարք կիսանկախ պետութիւններ, որոնք շատ շուտով կամ անկախանում են, կամ միանում ազգակից պետութեան՝ Յունաստանին, Բոլգարիային:

Ազգութիւնների անկախութեան սկզբունքը, որ մասմբ յաղթանակել էր միջին եւրոպայում, յաղթանակում է և Բալկաններում, Թիւրքիոյ սահմաններում:

Կար և մի երկրորդ պատճառ. Թիւրքիան ոչ միայն անդամահատում էր, այլև թուլանում էր ներքնապէս. Նա միաձոյլ, կենտրոնացած պետութիւն չէր: Կենտրոնախոյս ուժերը նրա մէջ աւելի ին իշխող, քան կենտրոնաձիլ ուժերը: Թիւրքիան Նրբեք չունեցաւ ազգային հոգեղէն մշակոյթ, որ հաւաքէր թիւրք տարբի շուրջը բոլոր ոչ-թիւրք տարբերին: Նա մի Պրուսիա չէր, որ հաւաքէր, միացնէր իր մշակութային-քաղաքական ուժով ո՛չ-թիւրք տարբերին, ո՛չ էլ մի իլ դը ֆրանս կամ Մոսկա: Թիւրքիան միայն Թիւրքիա էր՝

անքաղաքակիրթ, անքաղաքագէտ, որին պատմութիւնը ոչինչ չի սովորեցնում, որի մտայնութեան ու գործի մէջ ոչինչ չի փոխուում: Ազգութիւնների, ցեղերի, կրօնների պայքարը թուլացնում էր նրան, աստիճանաբար քանդում հիմքը: Յարատեանիշխանութիւնը, անապահով կեանքը, արհամարհանքն ու հալածանքը դէպի հպատակ աղգերն ու կրօնները՝ մզում էին, որ ազգային միութիւնները իրենց պահանջների բառարարումն որոնէին ոչ քէ Թիւրքիոյ ներսում, այլ Թիւրքիոյ պետական սահմաններից դուրս: Ազգերի ազատագրումը Թիւրքիոյ լծից տեղի ունեցաւ անջատման նախապարհով և երբեք ինքնավարութեան կամ դաշնակցութեան:

Անշուշտ, Թիւրքիոյ քաղաքական անկման այս վաստերը ինկատի ունէին հայ քաղաքական մաքի ներկայացուցիչները և կուսակցութիւնները, երբ Հայաստանը որոնում էին Թիւրքիոյ սահմաններում և պայմանաւորում էին քաղաքական անկախութեամբ: Մանաւանդ, որ հայոց հարցն էլ արդէն իրաւական ձևաւորումն էր ստացել, որպէս միջազգային քաղաքականութեան նիւթ: Եւ հայ քաղաքական միտքը Բերլինի 61-րդ յօդւածը համարում էր դէպի անկախութիւն տանող առաջին քայլը:

Թուսաստանը Թիւրքիա չէր. մինչ 17-րդ դարից Թիւրքիայի անկման շրջանն է սկսում, այդ դարից Մոսկան մեծանում է, ընդարձակում բոլոր ուղղութեամբ և 18-19-րդ դարերում դառնում է համաշխարհային քաղաքականութեան որոշիչ ագուակներից մէկը: Նորանոր ազգեր ու ցեղեր, եր-

բեմնի անկախ պետութիւններ մտնում են նրա պետական մարմնի մէջ։ Նա աստիճանաբար վեր է ածում եւրոպական պետութիւն, զարկ է տալիս նոր տնտեսական ձևերին, զարգանում է մշակոյթով։ Յատկապէս ոռւսական մշակոյթը, գրականութիւնը, դպրոցը, գիտութիւնը՝ գարձան հպատակ ազգերին, կրօններին ու ցեղերին ոռւս պետականութեան շուրջ հաւաքող ու կենտրոնացնող ոյժը։ Դրան զարկ տւեց արդիական տնտեսութիւնը և հազորդակցութեան միջոցները, որոնք ամենուրեք տարան ոռւսացում՝ գրականութիւն, դպրոց, լեզու... Ոռւսական մշակոյթը այն հնոցն էր, որի մէջ այլացեղ հպատակները եփում էին, յղկում ու կորցնում իրենց առանձնայատկութիւնները և հաւասարում։

Ոռւսատանը թիւրքիա չէր, և բնական է, որ հայութիւնը շատ երկար ժամանակ չկարողացաւ ոռւսահայութեան համար զնել ազգային-քաղաքական լիդէալ։ Կար և այն հանդամանքը, որ հայութեան փոքր ուժերը անկարող էին գործելու երկու ճակատի վրա. անհրաժեշտ էր կենտրոնանալ մէկ ճակատի վրա, մէկ թշնամու դէմ՝ միւսում գրաւելով լոկ ինքնապաշտպանութեան դիրք։ Այս է պատճառը, որ հայութիւնը իր գէնքն ու զրահը, իր բարոյական ու ֆիզիքական բովանդակ կորովը հանեց թիւրքիոյ դէմ, ուր

Զար սուլթանի ոսկի թախոտը ջարդեցաւ, վար ընկաւ, Թախտի տակէն հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ։

Իսկ Ոռւսահայաստանում բաւականացաւ պահելով դպրոցներ, բարեգործական հիմնարկութիւններ ու հրատարակչական ընկերութիւններ. և

համախմբւելով եկեղեցու չուրջը՝ հայութիւնը Ռուսահայաստանում դարձաւ ապաքաղաքական տարր։

Սակայն, ամբողջ 19-րդ դարում յեղափոխական շարժումները անպակաս էին Ռուսաստանում։ Նրանք աւելի ուժեղացան դարի վերջին և, մանաւանդ, 20-րդ դարի սկզբին, երբ յեղափոխական ալիքները տակին ու վրա արին ամբողջ Ռուսաստանը։ Ընկերային և ազգային հարցերը գարձան կենտրոնական խնդիրներ. բոլոր ազգութիւններն սկսեցին ձևակերպել իրենց ազգային-քաղաքական բաղձանքները։ Հայութիւնը ևս չէր կարող անտարբեր մնալ։ Եւ Հ. Յ. Դաշնակցութեան երրորդ ընդհանուր ժողովը՝ 1904թ. «ընդունելով մեր կազմակերպութեան մասնակցութեան անհրաժեշտութիւնը կովկասեան յեղափոխական կուի մէջ՝ որոշեց այդ վարել առայժմ ինքնապաշտպանութեան հոգի վրա»։ Բայց ընդամենը մի տարի յետոյ խնդիրն այնքան հասունացաւ, որ Հ. Յ. Դաշնակցութեան խորհուրդը որոշեց՝ «կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան ըրջանից անցնել բուն յեղափոխական գործունէութեան»։ Ապա, 1905թ. յունիսին, հրատարակում է կովկասեան գործունէութեան նախագիծը։ Հ. Յ. Դաշնակցութիւնը թողնում է չէզոքութիւնը Ռուսաստանի վերաբերմամբ, «ուր հայութեան բաւականական կառավարութեան միջն սկսած կռիւը մի բնական անխուսափելի հետևանք է հայ տարրի առաջադիմութեան և այն վայրենի հալածանքների, որ ցարիզմը երկար տարիներից ի վեր մղում է հայ ժողովրդի, երբեք ուրոյն

կուլտուրական մի համայնքի գէմ»։ Արդ, ի՞նչպէս կարելի էր ապահովել այդ «ուրոյն կուլտուրական համանյթի» բնականոն զարգացումը։ Հ. Յ. Դախագիծը պատասխանում է դրան, թէ՝ «յեղափոխական կռւի միջոցով նա՝ (Հ.Յ.Դ.) ձգում է դաշնակցական (Փեղերատիւ) ռամկավարական մի կազմակերպութեան ամրողը Անդրկովկասի համար ամենալայն տեղական ինքնավարութեամբ»։ Եւ չետում է. «Անդրկովկասը կազմում է պատ Ռուսաստանի անբաժան, դաշնակից մասը՝ կապւած Ռուսաստանի հետ ընդհանուր պետական ինքնապաշտպանութեան...» և այլ կապերով։

Կովկասեան Նախագիծը հայոց քաղաքական աւանդական մտքից անում է մի մեծ շեղում։ Հայ միտքը և քաղաքական կուսակցութիւնները այժմ հոգացողութեան նիւթ են դարձնում և՛ Ռուսահայաստանը։ Անշուշտ, այդ նորութիւն չէր, բայց բանաձեւ այլևս անբաւարար էր ոռուսահայոց հարցի լուծման համար, անբաւարար էր և «Պօլժենիայ»-ի տւած լուծումը։ Հայոց ազգութիւնը պիտի ստանար աշխարհէկ գունաւորում և աւելի դօրաւոր միջոցներ իր զարգացման համար։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Ռուսահայաստանը ձեւակերպում է, սրպէս քաղաքական միաւոր՝ դաշնակցած Անդրկովկասի, Ռուսաստանի հետ։ Այս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան խոշոր գործերից մէկն է՛ հանդէպ հայ քաղաքական մտքի զարգացման։ Հայութիւնը թողնում է իր ապաքաղաքական դիրքը և պայքար է մղում ազգային ստացւածքները աւելի կատարեալ մի-

ջողներով տպահովելու համար։ Այս մի մեծ ըեկումն էր մեր քաղաքական մտքի մէջ, որ չէր կարող տեղի ունենալ առանց ցնցումների։ Ամբողջ 19-րդ դարում հայութիւնը հայ ազգութեան պատկանող ուսւ քաղաքացի էր, այժմ ուզում է լինել հայ քաղաքացի՝ հայ ազգութեան պատկանող։ Պետութիւնը և ազգութիւնը պիտի յարմարւեն իրար, նրանց սահմանները, ըստ կարելոյն, պէտք է նոյնանան։ Մա կատարեալ անկախութիւն չէ, և ոռուսական առաջին յեղափոխութեան ժամանակ ոչ մի ազգ անկախութեան պահանջը չէր դնում. ազգային-քաղաքական պահանջները ձեւակերպում էին լոկ գանձակցութեան միջոցով։

Բայց անդրկովկասեան դաշնակցութեան գաղափարը պիտի փոխէր նաև Տաճկահայաստանի խնդրի լուծման ձեւը։ Հ. Յ. Դաշնակցութիւնը, 1907թ. Ընդհանուր ժողովում, նոյնպիսի դաշնակցական ռամկավարական պետականութիւն է ծրագրում և Թիւրքահայաստանի համար։ Մի կողմից հայ քաղաքական միտքը անում է մեծ յառաջադիմութիւն՝ Հայաստան համարելով և ոռուսահայկական հողամասերը և նրա համար ևս զնելով քաղաքական պահանջներ, միւս կողմից, գէթ ծրագրում, Հարաժարում է Թիւրքահայաստանի անկախութիւնից՝ համարելով այդ հայութեան ուժերից վեր բան։ Սա նորէն մի մեծ բեկումն էր մեր մտաւորական պատմութեան մէջ։ Անշուշտ, հայ մտքի բնաշրջման տեսակէտից, սերունդների մշակած անկախութեան գաղափարից հրաժարւելը և դաշնակցութեան կառչելը դրական քայլ չէր, բայց աւելի հնարաւորութիւններ էր ցուցահանում

իրականանալու. դաշնակցութեան շուրջը շատ  
աւելի կուսակիցներ կարելի էր հաւաքել, քան  
անկախութեան: Թիւրքահայ հարցի շուրջը միջադ-  
գային դիւանագիտութեան խաղերը աւելի բարդ  
էին, աւելի հակամարտ, քան կարելի էր պատկե-  
րացնել: Ապա՝ Թիւրքիան կարծեք վերածնու-  
թեան, նոր ուղիներով գնալու փորձեր էր անում: Թիւրքահայաստանի ապագան, տւեալ պայման-  
ներում, հնարաւոր էր լուծել միայն Թիւրքիոյ  
ներում՝ դաշնակցային հանապարհով և ոչ Թիւր-  
քիոյ սահմաններից դուրս անկախութեան ուղիով:  
Եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը այդ դադախարական  
զիջումը արաւ ստանալու համար հնարաւորը:

Սյսպիսով Հ. Յ. Դաշնակցութիւնը ընդարձա-  
կում է, ամբողջացնում է Հայաստանի դադախա-  
րը. Հայաստան է և մեր երկրի ոռուսական մասը: Սա լրացումն է Բաֆֆու Հայաստանի ըմբռնումի: Բաֆֆին և հնչակեանները ստեղծում էին մի Հայաստան, բայց չէին հաւաքում մի պետակա-  
նութեան հովանու տակ բովանդակ հայերին. Ռուսահայաստանը ու հայ ժողովրդի մի խոշոր  
հատւածը մնում էր այդ պետականութիւնից  
դուրս. Հ. Յ. Դաշնակցութիւնը ստեղծում է երկու  
Հայաստան՝ Թիւրքիոյ և Ռուսաստանի սահման-  
ներում, բայց երկուսն էլ օժտում է պետական —  
քաղաքական գործառնութիւններով: Անշուշտ,  
շատ անբնական և մեր ազգային գերագոյն շահե-  
րին հակասող էր թուռմ երկու Հայաստանների  
ստեղծումը կողք-կողք՝ միենոյն մշակոյթի տէր,  
միենոյն պատմական անցեալն ապրած, նոյն լեզ-  
ւել խօսող, իրար համար պայքար մղած ազգու-

թեան համար, բայց այդ բղիսում էր իրերի  
հարկադրական թելաղբանքից, որի հանդէպ հա-  
յութիւնը իր ուժերով պայքարել չէր կարող: Դաշնակցական ձեւը, տւեալ պայմաններում, միակ  
հնարաւոր միջոցն էր բովանդակ հայկական  
երկրամասը Հայաստան դարձնելու և լաւագոյն  
ձևով լուծելու թէ ոռուսակցել ոռուս յե-  
հարցը: Ուստի, մնում էր գործակցել ոռուս յե-  
հարցը դափուական մտաւորականութեան՝ կանգնելով  
ազատ, դաշնակցական Ռուսաստանի տեսակէտի  
վրա, ձգտել նոյնը պատրաստելու և Թիւրքիա-  
յում՝ դաշնակցելով ճնշւած ազգերի յեղափոխա-  
կան տարրերի հետ: Մինչև որ բռնութեամբ  
բաժան-բաժան եղած մեր հայրենիքը բաղաժա-  
կանապէս միանար ու անկախանար, պատմական  
անիրաժեշտուրին էր, որ անցներ դաշնակցու-  
թեան ուղիով: Այդ լինելու էր մի նոր նւաճում,  
ազգային ուժերի հաւաքման, նոր արժէքների  
կուտակման մի ըրջան, երբ դիտակցօրէն պիտի  
նախապատրաստէր ազգային-քաղաքական իդէա-  
լ՝ Հայաստանի անկախութեան և երկու Հայա-  
ստանների միացման գործը: Սակայն այդպէս չե-  
զաւ:

Համաշխարհային պատերազմը և ոռուսական  
յեղափոխութիւնը եկան հիմնովին փոխելու ժա-  
մանակակից առաջաւոր մարդկութեան ընկերային  
և քաղաքական որոնումների ընթացքը: Սխալ է  
կարծել, թէ պատերազմն ունեցաւ միայն աւերիչ  
հետևանքներ, թուլացրեց Եւրոպան տնտեսապէս,  
քաղաքական ուժի կենտրոնը փոխադրեց Ամերի-  
կա: Պատերազմն ունեցաւ և գրական հետևանք-

ներ : Նախ՝ հետևողական ուամկավարութեան գաղափարը երբեք այնքան հզօր չի եղել, որքան պատերազմից յետոյ : Նա դարձել է եւրոպական հասարակական-քաղաքական մտքի առանցքը . կեանքը իր բոլոր արտայայտութիւններով, մարդկային բոլոր մշակութային արժէքները ենթարկում են ուամկավարացման : Աս պատերազմի դրական հետևանքներից մէկն է :

Երկրորդ հարցը, որ բիշում է առաջինից . ազգային ինդրի լուծումն է ըստ ինքնորոշման իրաւունքի : Թէ համաշխարհային պատերազմը և թէ, մանաւանդ, ոռուսական յեղափոխութիւնը ամենազօրաւոր իթանը հանդիսացան ազգերի աղատագրման : Եւրոպական ցամաքի վրա աղդային հարցը, ընդհանուր առումով, լուծւած է, կարող են լինել միայն սրբադրումներ . մի բան, որ պատերազմի և յեղափոխութեան դրական հետևանքըն է հանդիսանում : Վերջին տասնամեակը ուժուորին ցնցեց ազգերի հոգին . ուր չկար ազգութիւն՝ ստեղծում է, ուր որ ազգութեան գիտակցութիւնը բաժին էր ընկած միայն մտաւորականութեան՝ դառնում է զանգւածների սեփականութիւն, ուր զանգւածներն ունեն այդ գիտակցութիւնը՝ պահանջում են քաղաքական անկախութեան : Անշուշտ, այդ նորութիւն չէր, բայց նրանց՝ համախմբելու «քաղաքական պատմութիւն» մէջ : Այդ մղումը ընթանում է արեւմուտքից դէպի արեւելք, և չկայ մի պատմէշ, որ կասեցնէ ազգութիւնների յաղթական ընթացքը : Մինչեւ համաշխարհային պատերազմը Եւրոպայում և Առաջառ Ասիայում ազգային միտքը ընթանում

էր դաշնակցութեան—ֆերերացիայի ուղիով : Այդ էր համարւում ազգային կնճռու խնդրի լաւագոյն լուծումը : Դաշնակցութեան էին ձգտում ԱւստրօՀունդարական, Ռուսական կայսրութեանց և Թիւրքիայի մէջ բնակլող ազգութիւնները : Պատերազմը և յեղափոխութիւնը աւերակների կոյտ դարձրին ժամանակակից ամենամեծ բոնակալութիւնները՝ իրենց միջնադարեան հաստատութիւններով ու գաղափարներով . կործաննեցին ցարական Ռուսաստանը, Զարսրուբների Աւստրո-Հունդարիան, Խումանական Թիւրքիան : Նրանց խորտակւած գահերի վրա յայտարարւեց ազգութիւնների քաղաքական անկախութիւնը . դաշնակցութիւնը նոր պայմանների համար արդէն անպէտք էր :

Հայութեան երկու պատմական թշնամինները այլևս գոյութիւն չունեին . աղատագրւած հայութեան կամքը ոչնչով չէր բոնադատւած : Դարերով պետականութիւնից գուրքի հայը կանգնած էր ազգային պետութիւն կաղմելու անհրաժեշտութեան հանդէպ : Պահ մի հայը շշմեց, չըմբռնեց անգամ, ինչ է կատարւում իր շուրջը, դարերի իշխողը՝ Թիւրքիան մահամերձ էր, քիւրդն արիւնաքամ, ուուսը՝ ներքին անիշխանութեան դոհ : Հայը ըսկըգրում ինքն իրեն չգտաւ . անսովոր էր առանց օտարի իշխանութեան ապրելու : Ապա աստիճանաբար հաւաքեց ուժերը, ըմբռնեց մեր պատմական կեանքի գերագոյն վայրկեանի հրամայական պահանջը՝ կառուցանել Անկախ ու Միացեալ Հայաստանի պետականութեան շենքը : Հայ քաղաքական միտքն էլ արաւ այն թոփչքը՝ ինչ որ Եւրոպայում . դաշնակցութիւնը Ռուսաստանի և

Թիւրքիոյ հետ տեղի տևց Հայաստանի կատարեալ  
անկախութեան: Եւ այդ անդրագարձաւ Հ.Յ.Դաշ-  
նակցութեան ծրագրի վրա: Կուսակցութեան 9-րդ  
Ընդհանուր ժողովը, առաջինը, որ տեղի ունեցաւ  
Հայաստանի մայրաքաղաքում, մեծ խանդավառու-  
թեամբ այսպէս ճեակերպեց հայութեան քաղաքա-  
կան իդէալը. «Հայաստանը պիտի ըլլայ ժողովը ըր-  
դավար, անկախ հանրապետութիւն, որի սահման-  
ների մէջ պիտի միանան նախկին ոռուսահայկական  
ու տաճկահայկական հողերը»:

Այսպիսով հայ քաղաքական միտքը նորէն  
վերագրածաւ Հայաստանի անկախութեան, բայց  
այս այլևս Բաֆֆու և հնչակեանների Թիւրքաց  
Հայաստանի անկախութիւնը չէ, այլ Միացեալ  
Հայաստանի անկախութիւնը: Նրա մէջ մտել են և  
«նախկին ոռուսահայկական հողերը»: Միացեալ ու  
Անկախ Հայաստանի գաղափարի մշակումը Հ.  
Յ. Դաշնակցութեան մեծագոյն գործն է՝ կատա-  
րած հայ ժողովրդի և պատմութեան հանդեպ:  
Այս ձեռվ հայ քաղաքական միտքը ամբողջանում  
է Հ.Յ.Դաշնակցութեան մէջ. այստեղ ներդաշ-  
նակօրէն լուծւած է և հողի, և մշակոյթի, և  
պիտականութեան հարցը: Եւ այս պատահակա-  
նութիւն չէ. մեր հասարակական մտքի ներքին  
զարգացման ու համաշխարհային պատմութեան  
ընկերային փիլիսոփայութիւնը այդ էին թելառ-  
րում:

Վերջացնենք. մեր հասարակական-քաղաքա-  
կան մտածողութիւնը Միացեալ ու Անկախ Հայաս-  
տանով դառնում է լիակատար ու ամբողջական:  
Փակւում է հայոց պատմութեան մի նշանաւոր

էջը՝ լի գաղափարական բովանդակութեամբ: Նա  
ոկտել է Աբովեանով և վերջացել անկախութեան  
յայտարարումով՝ 1918թ. Մայիսի 28-ին: Մայի-  
սի 28-ը Հ.Յ.Դաշնակցութեան ստեղծագործու-  
թիւնն է, բայց ստեղծագործութիւնն է նաև վեր-  
ջին դարաշրջանի մտաւորականութեան, որը միտք  
յողնեցրեց, արիւն թափեց, հերոսական պայքար  
մղեց ամենուրեք՝ հայի ազգային-քաղաքական և  
մարդկային-քաղաքակրթական շահերը պաշտպա-  
նելու համար: Առանց նրա անհասկանալի կը լի-  
նէր Հ. Յ. Դաշնակցութեան գործը, իսկ առանց  
Հ. Յ. Դաշնակցութեան՝ աննկատելի կը դառնար  
Մայիսի 28-ի անկախութիւնը:

Նրանք շաղկապւած գաղափարներ են: Եւ  
լաւագոյն երախտագիտութիւնը ուղղւած մեր վե-  
րածնիչների հասցէին կը լինէր՝ խորացնել ու  
տարածել Հայաստանի անկախութեան գաղափարը  
հայ ժողովրդի լայն խաւերում:

## IX

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ  
ՀՈՒԾՈՒՄՆ ԵՒ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Վերը թւած փաստերը և մեր պատմութեան ընթացքը ցոյց են տալիս, ընդգծում են նաև Հ.Յ. Դաշնակցութեան զործի իմաստը: Հ.Յ. Դաշնակցութիւնը, ամենից առաջ, հայկական ազդային կուսակցութիւն է, ճիշտ այնպէս, ինչպէս Գերմանիայում Սոցիալ-Դեմոկրատիան ազդային է, Անդլիայում՝ Բանտորական կուսակցութիւնը, Ֆըրանսիայում՝ Բնկերվարական Կուսակցութիւնը, Ռուսաստանում՝ սոցիալիստ-յեղափոխականները ևայլն: Այս բոլոր կուսակցութիւնները ազդային են ծագումով և իրենց ազդային կեանքի զարդացման և քաղաքական մտքի բնաշրջման մի վույն են: Նրանց յաջողութեան ու կենսունակութեան դրաւականը, նաև առանձնայատուկ յատկանիների պատճառները պէտք է որոնել Գերմանիայի, Անդլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի պատմութեան մէջ: Այս բոլոր ընկերվարական կուսակցութիւնները, նրանց հետ միասին և Հ.

Հ. Դաշնակցութիւնը, ընդունում են, որ հանրամարդկային մշակոյթի արժէքները ստեղծում ու մշակում են միայն ազգային շրջանակում, ու ազգային արժէքները պաշտպանել՝ նշանակում է մարդկային քաղաքակրթութիւնը պաշտպանել: Ժամանակակից ազգութիւնը ումակավարական է: Նա իր մէջ ընդգրկել է ուսմիկը, ժողովուրդը: Եւ ազգային գործերով գրադեմքը այժմ ուածիկի իրաւունքն է ու պարտքը: «Ազգային մշակոյթը, ասում է Հ.Յ. Դաշնակցութեան ծրագիրը, կը թափանցէ ժողովրդական լայն զանգւածներուն մէջ և կը դառնայ անոնց սեփականութիւնը և անոնց յառաջադիմութեան միջոցը: Ժողովրդական զանգւածները իրենց անշարժ վիճակէն նետելով գիտակից կեանքի ասովարէզը՝ երեան կը հանեն թագուն ուժեր մշակութական-ընկերային աշխարհի մէջ»:

Որպէս ազգային-ընկերվարական կուսակցութիւն՝ Հ.Յ. Դաշնակցութիւնը ջանում է պաշտպանել հայ ուսմկավար ազգայնութեան բովանդակչահերը՝ տնտեսական, քաղաքական, ընկերային ու մշակութային: Նա ընդունում է, որ պատմութեան զարգացումը կատարւում է ազգային շրջանակում: Անդամ այնպիսի առարկայական երեւոյթներ, որպիսին դասակարգային սլայքարն է, կամ արհեստակցական շարժումը, ունեն ազդային բնոյթ և սահնում են ազգային դունաւորում: «Որքան պըոլետարիատն ու նրա գաղափարախօսները աւելի զարգացած, աւելի փորձած և ինքնուրոյն են, այնքան դասակարգային շարժումը ու դասում է աւելի ինքնատիպ, ընդունում է

տեղական կամ ազգային բնոյթ և գասակարդային կուսակցութիւնը վեր է ածւում՝ ազգային-դասակարգային կուսակցութեան» (Ախժակ)։ Իւրաքանչիւր դասակարգային կամ կուսակցական կազմակերպութեան մէջ որոշ չափով խտացւած է ազգային պատմութեան փորձը, աւանդութիւնն ու առաջադրւած խնդիրները։

Փորձեցինք, ընդհանուր գծերով, ցոյց տալ, թէ գաղափարների և գործելակերպի ինչ կապ կայ 19-րդ դարի հայ քաղաքական մտքի և Հ.Յ. Դաշնակցութեան մէջ։ Տեսանք, որ նա շարունակողն է մեր մտաւորականութեան գործի, լրացնում, շտկում և ներդաշնակում է, տեղին ու ժամանակին յարմարեցնում այն խնդիրները, որ հայ միտքը դրել է նախընթաց դարում։ Շարունակելով իր նախորդների աշխատանքը՝ Հ.Յ. Դաշնակցութիւնը առաջարկանութիւն ու առաջարկան աշխատանքամբ առաջարկել է մի ամբողջական քաղաքական աշխարհահայեցորդութիւն, որը, սակայն, տակաւին իրականացած չէ։ Այս նշանակում է, որ նա դեռ անելիք ունի։ Հայկական կեանքում Հ.Յ. Դաշնակցութիւնը միակ կրտսակցութիւնն է, որ առաջարկել է ուրոյն, հայկական քաղաքական իդեալ։ Ուստի նրա վերացումը պիտի նշանակէր հայ պետականութեան ու անկախութեան գաղափարի վերացում։ Դաշնակցութիւնից աւելի ճախ գտնուղ հոսանքի իդէալը հայկական չէ։ Նրա գործը հայ մտաւորականութեան գործին շարունակութիւնը չէ, բայց կարող է լինել, եթէ նա ազգայնանայ և իր բախտը կապի հայ ժողովրդի բախտի հետ։ Աջի գոյութիւնը պայմանաւորւած է միայն Հ.Յ. Դաշնակցութեան հայութելով։ Ո՞ր

է նրա ազգային-քաղաքական իդէալը — ինքն էլ չդիտէ, որոշ չէ։

Այժմ, որո՞նք են այն էական հարցերը, որ դրւած են Հ.Յ. Յ. Դաշնակցութեան հանդէպ և լուծում են պահանջում։ Առաջին հայրենիքի հարցը։ Հայոց հարցը ամենից առաջ հողի հարց է, որ ստանալով գաղափարական գունաւոր գարձել է հայրենիքի հարց։ Հայ հայրենիքի գէմքը աղմատած է։ 20-րդ դար նա հասակէս-թրքացած, կէս-քրդացած, մասամբ էլ ուստացած։ Մուս-թրքական քաղաքականութեան իմաստն էր՝ թուլացնել բուն երկրի հայութիւնը՝ Փիզիքապէս և մշակութով, ցըել նրան ի սփիւռս աշխարհի և կուլ տալ նրա հայրենի հողը։ Նախորդ դարի 30-կան թւականներին ուստական գաղթականութիւնը մտնում է Անդրկովկաս և, մասնաւորապէս, Հայաստան։ Ուստները հողեր էին ստանում ի հաշիւ հայ գիւղացիութեան և նպաստում էին ուսւացման տարածումին։ Հայաստանում հայ գիւղացին հողի սակաւութիւնից թողնում էր առն ու տեղ և լցնում բագուն ու թիվլիզը — բունելով ալպազգայնացման ուղին։ Թիւրքիայում նոյնը կատարում էր անլուր բարբարոսութիւններով, պարբերական ջարդերով, որի հետևանքով հայք գաղթում էր երկրից։ Թիւրքը սարերից իջնում էր դաշտ և գրաւում հայկական բարձրավանդակը։ Թիւրքը զարկ էր տելիս այդ երեսոյթին և Հայաստանում տեղաւորում լեռնական գաղթականներ։

Հայ հայրենիքը հնար եղածին չափ պէտք է պահի իր հայկական գէմքը։ Այսօր հայութիւնը

տէր է իր հայրենի հողի մի մասին՝ շնորհիւ Հ.Յ. Դաշնակցութեան տիտանական աշխատանքի։ Սակայն, հայրենիքի հաւաքումը դեռ ամբողջացած չէ։ Նրա մեծագոյն մասը դեռ գտնւում է օտար լծի տակ։ Հայաստանին կցւած չեն նախկին Ռուսահայաստանի՝ ազգագրական տեսակէտով և պատմականօրէն Հայաստանին պատկանող՝ Ղարաբաղը, Գանձակի լեռնային մասը, Ախալքալակը, Նախիջևանը, Սուրմալուն, Կարսը. ամբողջովին Հայաստանից դուրս է Թիւրքահայաստանը, որ դարձել է խոպան, անապատ, որովհետև «Թիւրքն է անցել այնտեղից»։

Հ.Յ. Դաշնակցութիւնը ուղղակի թէ անուղղակի՝ պիտի նպաստի Հայաստանի ամբողջացման։ Եւ սա նոր ստեղծւած հարց չէ։ Հ.Յ. Դաշնակցութիւնը չէ, որ առաջին անգամ դնում է այդ խնդիրը։ Աւելի յուղիչ, քան Աբովեանը, «Հայրենի հողի» գովքը ոչ ոք չի արել։ Աւելի ուղիղ, քան Նալբանդեանն հայրենիքի ու հողի հարցը ոչ ոք չի գրել։ Աւելի իրապաշտ և հայութեան շահերին համապատասխան, քան Հ.Յ. Դաշնակցութիւնը ոչ ոք չի լուծել։ Պատմականօրէն նա ժառանգութիւն է ստացել հայրենի հողի խնդիրը և պէտք է աշխատէ հասցնել վերջնական լուծման։ Եւ այդ խնդիրը, սմենից առաջ հայ աշխատաւորութեան բարօրութեան և բուն հայրենիքին կապւելու խնդիրն է։ Եւ ոչ միայն այդքան։ Նա հայ ժաղովրդի հայրենացման և ազգայնացման հարցն է։ Մարկոս Աղաբէկեանը 70-կան թւականների վախճանին գրել է մի դարձւածք, որ արժէ միշտ յիշել և

ջանալ գործադրել։ «Հայոց աշխարհը որ կայ, հայոց ազգին պիտի փրկի, հայոց ազգն էլ որ կայ, հայոց աշխարհին պիտի փրկի»։ Այսպիսով ազգն ու հայրենիքը կապւում են ներքին՝ անքակտելի կապերով։ Եթէ թուլացնենք, կտրենք այդ կապը, երկուսն էլ, ի վերջոյ, կը կորչեն։ Ազգն ու հայրենիքը նոյնանում են։ Տեսանք, թէ ինչպէս այդ երկու տարրերը բաժանւած էին. դարի առաջին կիսում ազգութիւնն էր իշխող գաղափարը, դարի երկրորդ կիսում՝ հայրենիքը։ Բաֆֆին փորձեց ազգն ու հայրենիքը միացնել հայկական աշխարհի մի մասի վրա, Հ.Յ. Դաշնակցութիւնը երկու գաղափարն էլ համադրեց ամբողջական Հայաստանում։

Այս ձևով Հայրենիքի հարցը դառնում է ազգային մշակոյթի պահպանման հարց։ Ոչ մի ազգութիւն, եթէ հայրենիք չունի, որպէս ուրոյն մշակութային հաւաքականութիւն, գերծ չէ կորչելու վտանգից։ Տեսանք այս խնդիրը Արծրունու և Սպանդարեանի մօտ։ Ուժեղ պատմական աւանդութիւններ, մշակութային նախադրեալներ ունեցող ազգերն անգամ, եթէ հայրենիք չունեն, ենթակայ են ժամանակի՝ «ծերունի կոռոնոսի» աւերիչ աղդեցութեան։ Բայց բարձր մշակոյթը, ուժեղ պատմական աւանդութիւնն անհրաժեշտաբար ենթադրում են ստեղծագործող ազգութեան՝ հայրենի հողին կապւած լինելը։

Հայութեան մի մեծ վտանգ է սպաննում՝ դառնալ՝ ապերկրային, էլքս-տերիտորիալ ազգ։ Համաշխարհային պատմութեան ամենամեծ անարդարութիւններից մէկն է կատարւում՝ մեր աչքի

առաջ — ունենալ հայրենիք օտար բոնաւորների  
ձեռքի տակ, ունենալ մի ընդարձակ երկիր, ուր  
հայութիւնը դարերով աշխատել է, մշակել, շէ-  
նացրել և այսօր անապատ է ու գիշատիչ գաղան-  
ների բուն—և ապա լինել թափառական, տառապել  
անհայրենիք, վտարանդի և ազգովին ենթակայ  
կորուստի: Օրւայ համայական պահանջն է՝ հայ  
ժողովրդի հայրենացւմն: Հայրենացւած է մեր  
ժողովրդի միայն մի երրորդ մասը. հայութեան  
երկու-երրորդը թափառական է: Պէտք է հայրե-  
նացնել հայութիւնը, քանի ուշ չէ. հայը օտարու-  
թեան մէջ այժմ իրեն լոկ ժամանակաւոր հիւր է  
զգում, մի օտարական պանդուխտ: Յոյզերով ու  
յոյսերով կապւած է Հայաստանի հետ, իր բնա-  
վայրի, իր գիւղական օջախի և սուրբ աշխատանքի  
հետ: Իսկ երբ նա ուրիշների հայրենիքում իրեն  
զգայ քաղաքացի, այլևս ուշ կը լինի, նա կը  
կորչի հայութեան համար, կը դնայ շէնացնելու  
ուրիշների տունը, իսկ իր հեռաւոր երկիրը կը  
մնայ աւերակ ու թոյլ: Կը կրկնւի հայոց պատ-  
մութեան ողբերգութիւնը, երբ մենք շէնացրինք  
ու երկար ժամանակ պահեցինք ուրիշների քաղաք-  
ներն ու պետութիւնները՝ տալով նրանց հանձա-  
րեղ զօրավարներ, կայսերական ընտանիքներ,  
մեծ ելեմտագէտեր, պետական դործիշներ, մեր  
ամբողջ բուրդուական և ուազմի գասակարգը,  
անբայց մեր երկրում մի հատ խարխուլ խրճիթ ան-  
գամ չինեցինք:

Հայութիւնը բուն երկրում պէտք է ուժեղաց-  
նել, որովհետեւ Հայաստանի տնտեսապէս ու բա-  
րոյապէս ուժեղ հայութիւնը այն իրական ու

իրաւական հիմքն է, որ վազւան օրը պիտի  
ընձեռնի հայրենիքի հաւաքման գործը: Միաժա-  
մանակ ամէն ջանք պէտք է գործադրել, որ Հա-  
յաստանից դուրս դժուող հայութիւնը պահւի  
որպէս ազգային որակ: Եթէ նրա քանակը պակա-  
սում է, այդ պէտք է լինի յօդուտ Հայաստանի և  
ոչ յօդուտ այլ պետութեանց: Եթէ օտարութեան  
մէջ հայի որակն ընկնում է, այդ պէտք է լինի  
յանուն Հայաստանի ազգ-մշակութային դէմքի  
ուժեղացման և ոչ յօդուտ ուրիշ ազգութիւնների:  
Եւ գաղութներում ևս Հ. Յ. Դաշնակցութիւնը  
այն իրական ոյժն է, որ կարող է պահել մեր  
ժողովրդին որպէս հայ որակ ու քանակ: Եւ ամէն  
աշխատանք, որի նախատակն է թուլացնելու այդ  
ոյժը, կը թուլացնէ և գաղութահայ ազգայնու-  
թիւնը՝ միտքն ու զգացումը: Գաղութահայութեան  
թուլում է ազգ-մշակութային աշխատանք՝  
գործը լինելու է ազգ-մշակութային աշխատանք,  
առանց երբեք մոռանալու ազգ-քաղաքականը, որ  
հայկական հարցի իրական ու իրաւական լուծումն  
է:

Երկրորդ. հայութեան հարցը միայն թւի  
հարց չէ. թէ հողը և թէ բնակչութիւնը իմաստա-  
ւորում են միայն մշակութային արժէքների ըս-  
տեղծումն: Եթէ այդ արժէքը գոյութիւն չունի,  
չկայ և ազգութիւն:

Ազգութիւնը պատմութեան արդիւնք է և  
անընդունելի առանց իրայասուկ իրադարձու-  
թեանց: Ազգային անհաստականութիւնը ստեղծում  
է որոշ բնապատմական միջավայրում: Իսկ պատ-  
մութիւնը ժողովուրդների յարատե, անընդմիջուն  
աշխատանքն է իր գոյութեան պահպանման և

կատարելութեան համար։ Այդ աշխատանքը կատարում է երկու ճակատում՝ բնութեան և հասարակութեան։ Հասարակական աշխատանքը շաղկապում է մարդկանց, միացնում։ Համակեցութիւնը ստեղծում է հաստատութիւններ, դադափարներ, նիւթական ու հոգեկան մշակոյթ։ Նրա շրջապատում կաղապարում է անհատը — անտեսանելի կապերով կապւում է հաւաքականութեան հետ, ստեղծում է շահերի նոյնութիւն։ Օտարի վտանգը նրանց աւելի միացնում է, կապում, շաղկապում։ Քաղաքական վերիվայրումները մարդկանց ի մի են հաւաքում, ստեղծում բախտակցութիւն։ Այսպիսով ստեղծում է առարկայական հիմքը աղգութիւնների հանդէս դալուն։ Այդ պրոցէսում իրենց դերն ունեն պատմութեան բոլոր աղդակները, որոնք տարբեր զուգորդութեամբ և աստիճանով ստեղծում են՝ հասարակական-աղգային կեանքի բազմերանգութիւնը։ Միասնական աշխատանքով ստեղծած մշակոյթը չի կորչում, այլ հասարակական ժառանգականութեամբ անցնում է յետագայ սերունդներին։ Մշակոյթը դառնում է անկորչելի, բայց փոփոխելի։ Ժամանակակից աղգային մշակոյթը ամենից քիչ վերջին սերունդի ստեղծածն է և ամենից շատ պատմական ժառանգութիւն է։ Գալիք սերունդը աշխատում է հին արժէքների վրա, յղկում է այն, աւելացնում նոր տարրեր, նոր մշակոյթը հիմնում հնի վրա և այս ձեռվ կապում այսօրը երէկւայ հետ, պատմութեան, երբեմնի մշակութային արժէքների հետ։ Աղգութիւնը, եթէ կտրեց իր բոլոր հոգե-

մտաւոր կապերը իր անցեալի հետ, և անցեալը դարձաւ լոկ մեռած մի տարր, այդ աղգութիւնը չափաղանց աղքատ կը լինի ստեղծագործութեան բնադաւառներում և աւելի շուտ ենթակայ այլասերման, ձուլումի։

Մշակոյթը՝ հասարակական մի մեծ ոյժ է. նաև ստեղծում է նրա տարածման՝ նշանակում է աղգութեան բոլոր անդամներին դիտակցօրէն մասնակից անել իր պատմութեան և ներկային։ Մենք ապրում ենք ոչ միայն մեր ներկան, այլ և անցեալը-պատմութիւնը։ Եւ որքան լայն լինի աղգայնորէն աղըող և մտածող մարդկանց շրջանակը, այնքան այնքան աւելի հարուստ կը լինի աղգութիւնը, այնքան նրա բովանդակութիւնը ճոխ։ Նոր խաւերը, նոր շրջանակները կը բերեն ոչ միայն քանակ, այլ և նոր որակ, նոր գունաւորումներ։ Աղգերի քաղաքակրթութեան հարստացման և բազմերանգութեան այդ փաստը մենք նկատում ենք 19-րդ դարի ամբողջ ընթացքում, երբ պատմութեան բեմ են բարձրանում միջին և խոնարհ խաւերը բերելով իրենց հերթին կեանքի նոր փորձ և իմաստաւորում։ Մարդկային քաղաքակրթութիւնը ճոխանում է և նրանով, որ նորանոր աղգեր են հանդէս դավա, աղատագրում են քաղաքականապէս, տնտեսապէս, մտաւորապէս՝ մեծ իշխողներից, անհատականանում են ստեղծագործութեան մէջ և իրենց լուման գցում հանրամարդկային քաղաքակրթութեան մէջ։ Այսօրւայ քաղաքակրթութիւնը որքան անդիմական է, նոյնքան և բերդիմական է, որքան խտալական է, նոյնքան և լեհական է, որքան դերմանական է, նոյնքան և ոռոսական է։ Եւ

Համբամարդկային քաղաքակրթութիւնը աւելի ու  
աւելի ճոխանալու է՝ ժամանակակից մարդկու-  
թեան ուամկավարացումով և նորանոր ազգերի  
ստեղծումով։ Նոր է զարթնում հակայ արեելքը,  
որ թաղւած ունի իր մէջ հինաւուրց դանձեր,  
պիտի ծառանայ նա և իր խօսքը ասի բովանդակ  
աշխարհին։

Ազգութիւնը ներդործոն ոյժ է։ նա արտա-  
յայտում է արւեստի, գրականութեան, վիլիսո-  
փայական դրութիւնների, կրօնական յուացումների  
մէջ։ Ոգեկան ամէն ստեղծագործութիւն ազգային  
հարեւոր, միանդամայն անհրաժեշտ միջա-  
շատ կարեւոր, ազգանութիւն զարդացման համար։ Դասա-  
վայր է մշակոյթի զարդացման համար։ Դասա-  
վայրին պայքարը, որպէս հասարակական մի  
կարգային պայքարը, ազգութիւնները, որպէս բա-  
րերիք, կը վերանայ։ ազգութիւնները, որպէս բա-  
րերիք, կը մնան։ Միջազգայնութիւնը, որպէս մա-  
կութային գաղափար, որպէս ընդհանուր մարդ-  
կութեան եղբայրական դաշնակցութիւն, ոչ միայն  
չի ժխտում ազգութիւնը, այլև պահանջում է  
ստեղծել բոլոր հնարաւորութիւնները, վերացնել  
տեսակէտից, քան երբեմն էր։

Հ. Յ. Դաշնակցութեան ծրագիրը ասում է։  
«փափելով հանդերձ ոչնչացնել բոլոր սահման-  
ները ու խտրութիւնները ազգերու միջև, ձգտելով  
հանդերձ կազմակերպել մէկ ներդաշնակ ամբող-  
ջական մարդկութիւն մը այսօրաւան կտոր-կտոր,  
բաժան-բաժան ու հակամարտ աշխարհին տեղ —  
ընկերվարութեան իրազործումը չի պահանջեր  
արդի ուրոյն ազգային միութիւնների խսպառ  
ձուլումը, միութիւններ, որոնք իրենց պատմա-  
ձուլումը»։

կանօրէն ժառանգական ըեղմնաւոր մասնայատ-  
կութիւններով կարող են միայն ճոխացնել ապա-  
գայ ընկերվար մարդկութիւնը»։ Այս պարբերու-  
թեան մէջ ընկերվարութեան և ազգային հարցի  
փոխարաբերութիւնը որոշում է այնպէս, որ,  
իր թէ, ընկերվարութիւնը չի պահանջում «աղ-  
գային միութիւնների խսպառ ձուլումն»։ Բայց այդ  
գիշէ է. պէտք է աւելի յստակ որոշել ընկերվա-  
րութեան և ազգութեան յարաբերութիւնը։ Պէտք  
է շեշտել, որ ընկերվարութիւնը ո՛չ միայն չի  
պահանջում ուրոյն ազգային միութիւնների խս-  
պառ ձուլումը, այլև, ընդհակառակը, մարդկու-  
թեան յառաջադիմութեան տեսակէտից դանում է  
անհրաժեշտ և օգտակար ուրոյն ազգութիւնների  
գոյութիւնը։

Ի՞նչ է ընկերվարութիւնը. նա հասարակու-  
թեան գարզացման մի նոր առանձնայատուկ ձևն է,  
ինչպէս, օրինակ, հանրային կեանքի զարդացման  
առանձնայատուկ ձևն էր տոհմական կազմակեր-  
պութիւնը, աւտատապետական կամ բուրժուական  
կարգը։ Ընկերվարական հանրակարգը ծնունդ է  
դրամատիրական համակեցութեան մէջ առաջ-  
նեած մի շարք երևոյթների, որոնք անկարող են  
լուծում ստանալ նրա ծոցում։ Ընկերվարութիւնը  
աշխատում է վերացնել որոշ չարիքներ, որից  
տառապում է ժամանակակից մարդկութիւնը, և  
հաստատել այնպիսի վիճակ, որ ապահովի բո-  
հաստատել այնպիսի վիճակ, որ ապահովի բո-  
հաստատել արդարութեան երջանկութիւնը. այսպի-  
վանդակ մարդկութեան վախճանը, այլ  
սով նա չի դաշնում պատմութեան վախճանը, այլ  
նրա յաւիտենական զարդացման մի փուլը սոսկ,  
մի հանդրւանը։ Եւ որովհետեւ նա խտացնում է իր

մէջ նախորդ հանրակարգի պատմական փորձն ու  
մշակութային արժէքները, ուստի աւելի կատա-  
րեալ է, աւելի ներդաշնակ, քան նախորդները,  
բայց կատարելութեան վախճանական տիպը չէ:  
Ընկերային հանրակարգը, մեր ըմբռնումով, նպա-  
տակ չէ, այլ լոկ միջոց, որի բովանդակութիւնն  
է՝ տրամադրել անհատին և ազգութիւններին  
բոլոր հնարաւորութիւնները արտայատելու և  
դարդացնելու իրենց մէջ թագնւած գանձերը՝ ար-  
ևստի, գիտութեան, փիլիսոփայութեան սահման-  
ներում: Ընկերվարութիւնը մշակոյթի իշխանու-  
թիւնն է: Ուրեմն, ընկերվարութիւնը միջոց է,  
ազգն ու անհատը՝ նպատակ: Եւ ազգային ու ան-  
հատականութեան խնդիրը ընկերվարական հանրա-  
կարգում ստանալու են աւելի կատարեալ լուծում,  
քան ժամանակից բուրժուական կարգերում:  
Այդ է ընկերվարութեան բարոյական հիմքն ու  
արժէքը: Այսպիսով, մարդկութեան պատմութիւնը  
իմաստաւորում է, որպէս ազգութիւնների, ան-  
հատականութիւնների դարդացման մի ընթացք,  
իսկ ընկերվարական հանրակարգը իմաստաւոր-  
ում է, որպէս լաւագոյն ձեր ազգութեան և ան-  
հատի պահպանութեան ու դարդացման: Նա տալու  
է բոլորին ապրելու և ստեղծագործելու հաւասար  
հնարաւորութիւններ: Ահա թէ ինչու քիչ է ասած  
չ. Յ. Դաշնակցութեան ծրագրում, թէ ընկերվա-  
րութիւնը չի պահանջում «ազգային միութիւնների  
խսպառ ձուլում»: Ընդհակառակը, նա նպաստում  
է, զօրավիդ է դառնում՝ ազգութիւնների ուսումնաց-  
ման ու կատարելագործման: Նա ձգտում է վե-  
րացնել բուրժուական հանրակարգում ստեղծւած

բոլոր քաղաքական ու տնտեսական արդելքները,  
որոնք ընկած են ազգութեան ուղիի վրա և խո-  
չընդուռ են հանդիսանում նրա յարաճուն զարդաց-  
ման:

Ահապին է պետութեան նշանակութիւնը ազ-  
գութիւնների կաղապարման գործի մէջ: Անվերա-  
պահօրէն կարելի է պնդել, որ եւրոպական ազգերի  
այսօրւայ ճոխ քաղաքակրթութիւնը, տիրապետող  
միջազգային արժէքը, հզօր տեխնիկան ու տնտե-  
սութիւնը՝ առաւելապէս նոր պետութիւնների  
զարդացման, հզօրացման արդիւնք են: Պատմու-  
թիւնը ցոյց է տալիս, որ փոքր ազգերը անկախ  
պետութիւն ստեղծելուց յետոյ է, որ ուժգին  
թափով յառաջադիմում են, ստեղծում, մշակում  
են իրենց լեզուն, անարգել դարդանում են գրա-  
կան-դպրոցական ասպարէզում, հոգեղէն հաղոր-  
դակցութեան մէջ մտնում ուրիշ ազգերի հետ,  
փոխ առնում, մերում իրենց մէջ, ազգայնացնում:  
Ֆրանսական միավետութիւնը՝ հաւաքեց բովան-  
դակ ֆրանսիան՝ ստեղծեց մի ֆրանսական լեզու  
ու գրականութիւն, յղկեց այն լաւագոյն գրողների  
գրչի տակ, մշակեց ձեմարաններում, տարածեց  
ամբողջ աշխարհում: Գերմանիան՝ մի քանի դար  
շարունակ միութեան ձգտեց և միայն այդ միու-  
թիւնը ստեղծելուց յետոյ նրա քաղաքակրթութիւ-  
նը աւելի մեծ թափ ստացաւ, գերման մշակոյթը  
դարձաւ հանրամարդկային մեծագոյն արժէքնե-  
րից մէկը: Բելգիան, Հոլանդիան, Դանիան մշա-  
կոյթով հզօրացան միայն ազգային անկախութիւն  
ստեղծելուց յետոյ ու ծնեցին հանճարներ արեւս-  
տի ու գիտութեան բոլոր բնագաւառներում: Ի

հարկէ, սա հետեւանք է ոչ միայն պետութեան, որպէս այդպիսին, այլ մեծապէս նաև այն փաստի՝ որ պետութիւնը ռամկավարանում է, որ նա դառնում է հանուրի հետաքրքրութեան ռոարկայ, նորանոր գործառնութիւններ է ընդգրկում, դառնում է աւելի լայն, գանդւածալին շահերի պաշտպան, ջանում է ազգային լաւագոյն ստեղծագործութիւնները բոլորի սեփականութիւնը դարձնել... Պետութիւնը դառնում է ինքը՝ ժողովուրդը, և որքան վերջինս լուսաւորում է, համնում է աղոյին ինքնապիտակցութեան, նոյնքան ուժեղ թափով կառչում է քաղաքական մարմնին՝ համարելով այն լաւագոյն միջոցը իր ռամկավարական ծրագրեների իրագործման խնդրում։

Այս է պատճառը, որ բոլոր ազգերը ձգտում են ազգային անկախութեան՝ համարելով այն միակ միջոցը իրենց հաւաքական կեանքի անարդել գարգացման։

Երրորդ. ազգութիւնը ապագայ կարող է ունենալ միայն անկախ պետականութեան մէջ։ Իսկ որովհետեւ նա ազգութիւնը չի մերժում, ուստի և անկախութեան խնդիրը, յանձին ընկերվարութեան, դառնում է իր լաւագոյն պաշտպանին։ Ապագայ ընկերվարական հանրակարգը լինելու է անկախացած ազգութիւնների ազատ, եղբայրական, իրաւահաւասար դաշնակցութիւն։ Այս է ժամանակակից առաջաւոր մարդկութեան իդէալը՝ դրան է ձգտում Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Ոչ մի հայրենիք իրաւոնք չունի բոնանալու ուրիշի հայրենիքի վրա, և ոչ մի ազգութիւն իր առաջնութիւնը չաղիտի հիմնի՝ ուրիշ, թէկուզ և

փոքր, ազգերի ճնշման վրա, դրանով նա կը կոլցնի իր բարոյական բնոյթը և դէմ կերթայ ժամանակակից առաջաւոր մարդկութեան բարութիւնների հաւասարութեան և նոյնիրաւութեան գութիւնների հաւասարութիւնը։ Միայն այդ սահմանում ազգութաղավարին։ Միայն այդ սահմանում ազգութիւնների ոլայքարը, նրանց ինքնահաստատումն ու հայրենիքի որոնումը կարող է ու պէտք է դանի արդարացում։

Այդ տեսակէտից արդարացի է և հայի ձըդառումը՝ պահպանել իր ուրոյն պատմամշակութային անհատականութիւնը՝ իր հայրենիքում, քային պետականութեան հովանու տակ։ Հայութիւնը, որպէս ազգութիւն, քաղաքականութիւն, ապրել է բարեկանութեան ստեղծող հաւաքականութիւն, ապրել է աղօմ, և պէտք շատ գարեր առաջ, ապրում է և այժմ, և պէտք է ջանալ, որ ապրի ապագայում էլ։ Կատարեալ է ջանալ, որ ապրի ապագայում էլ։ Հայութիւնը ստեղծել հայ ժողովրդի մշակուհարաւորութիւն ստեղծել հայ ամէն մի հայի պարտքն թային զարգացման՝ այդ ամէն մի հայի պարտքն է։ Ջանալ հաւաքել հայութեան ցրւած բեկորները է։ Ջանալ հաւաքել հայութեան ցրւած բեկորները է։ Ջանալ հայութիւնը՝ նշանակում է նալաստել հայ մի հայրենիքում՝ նշանակում է նալաստել հայ մի հայրենիքում՝ հայացման, հայ ժողովրդի հայրենիքի հայացման, հայ ժողովրդի հայրենիքում՝ նաև անանոն զարգացման։ ման և հայ մշակոյթի բնականոն զարգացման։ 19-րդ դարի մեր մտաւորականութիւնը մտահոգւթած էր այդ ինդրով։ այսօր նոյն խնդիրը դրւածած էր այդ ինդրով։ այսօր նոյն խնդիրը դրւած է և ժամանակակից մտաւորականութեան սուած։ է և ժամանակակից մտաւորականութեան դէմ շայոց հարցը աստիճանաբար զարգանալով՝ յանձայոց հարցը աստիճանաբար զարգանալով՝ յանձայոց հարցը աստիճանաբար զարգանալով։ Նրա չուրջն հայ քաղաքական մտքի շերտաւորումը։ Նրա չուրջն հայ քաղաքական պայքարը։ Այդ գաղաքական պայքարի չուրջն է կատարում այժմ ըին։ Այդ գաղաքարի չուրջն է կատարում այժմ գաղաքական մտքի շերտաւորումը։ Նրա չուրջն հայ քաղաքական պայքար։ Այդ գաղաքական մտքում և կուսակցական պայքար։

Գարը արդիւնք է Հ.Յ.Դաշնակցութեան ջանքերի,  
բայց միայն նրա սեփականութիւնը չէ: Նա հայ  
ժողովրդին է պատկանում, ստեղծւած նրա ուժով  
և նրա համար: Եւ ջանալ իրականութիւն դարձնել  
հայոց պատմութեան մեծագոյն քաղաքական իդէ-  
ալը, նշանակում է ծառայել հայութեան իր հայ-  
րենիքում, նախաստել ոչ միայն նրա ազգային  
վերածնութեան, այլ և հանուր մարդկային մշա-  
կոյթին: Մեր իդէալն է՝

Իր հայրենիքում հաւաքւած և հայրենի պե-  
տականութեամբ ապահոված կորովի ու ստեղծա-  
գործող հայ ժողովրդին առաջնորդել դէպի ազ-  
գուրինների եղբայրական դաշնակցութիւնը,  
դէպի ազատ մշակոյրի քագաւորութիւնը, դէպի'  
ընկերվարութիւն:



## ԲՈՎԱՆԴԵԿՈՒԹԻՒՆ

I.	Հ.Յ.Դ. Դաշնակցութեան կենսունակու- թեան գաղտնիքը . . . . .	5
II.	Ռուսահայ հասարակական գարգա- ցումը . . . . .	9
III.	Թիւրքահայոց հասարակական գար- գացումը . . . . .	23
IV.	Ռուսահայ ազգային գարքօնիքը . . .	35
V.	Թիւրքահայոց ազգային գարքօնիքը .	57
VI.	Ազգի և հայրենիքի որոնումը . . . .	69
VII.	Հայ Յեղափոխութեան ծագումը . . .	99
VIII.	Հայ յեղափոխական կուսակցութիւն- ները և Հայաստանի պետականութեան հարցը . . . . .	117
IX.	Հայ ազգային հարցի վերջնական լու- ծումն և Հ.Յ.Դ. Դաշնակցութիւնը . .	140

ՀՀ Ազգային գրադարան



NL0201068

